

ISSN 1829-2003

ՎԱՐԶԻ



ՀԱՅԿԱԿԱՆ ԵՄՔՏԱՐԱԳԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՌԵՍԵՐՉԱՍԻՐՈՂ ԳԻՏՆԱԳՐԱՍ
RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE

VARDZK
DUTY OF SOUL

N 22

2026



Աշոտ Բակոբյան
ՀՈՌՈՍՈՍԻ ՎԱՆՔԻ ԾԻՍԱԿԱՄԱՐԸ



էջ 1

Գագիկ Սարգսյան
ՍԱՐԻԿԻ ԱՄՐՈՑԸ



էջ 14

Րաֆֆի Զորթոշյան
«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԹԱՎՏԱԶՂՈՒԼՈՒԻ»
ՆՈՐԱՅԱՅՏ ԶԵՌԱԳԻՐԸ



էջ 17

Գագիկ Սարգսյան, Էմմա Աբրահամյան
ԹՈՎԱՄԱՍ



էջ 50

Րաֆֆի Զորթոշյան
ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԳՈՐԳԱԳՈՐԾՆԵՐԻ ՏԱՊԱՆԱՔԱՐԵՐԸ



էջ 53

Սամվել Կարապետյան
ՇԻՐԻՆԻՑ ՎԱՆՔԻ ՍԱՆՂԸ



էջ 64



N 22 2026

ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ

EDITORIAL BOARD

ԷՄՄԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

EMMA ABRAHAMIAN

ՐԱՖԻ ԶՈՐԹՈՇՅԱՆ

RAFFI KORTOSHIAN

ՀԱՄԱՐԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

HASMIK HOVHANNISSIAN

ՀԱՄԱԿԱՐԳԶԱՅԻՆ ԶԵՎԱԿՈՐՈՐՆԵՐ

ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԼԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ-ԶՈՐԹՈՇՅԱՆ

Designers

ARMEN GEVORGIAN

LIANA

HOVHANNISSIAN-KORTOSHIAN

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՅՆՈՐ
ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ
ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ

RESEARCH ON ARMENIAN
ARCHITECTURE FOUNDATION
Engaged in informational Activity

ՎԱՅՆԱԿԱՆ N 03U089223

ՏՐՎԱԾ 13.10.2010

Certificate No. 03U089223

Given 13.10.2010

ՀԱՄԱՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
ՐԱՖԻ ԶՈՐԹՈՇՅԱՆ

Responsible for this issue
RAFFI KORTOSHIAN

ԵՐԵՎԱՆ, ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆ 16/1

Nikol Duman 16/1, Yerevan, RA

raa-am.org

armenianarchitecture.org

artsakhmonuments.org

✉ raayer@sci.am, raatransfer@yahoo.com

Հայկական ճարտարապետություն

ուսումնասիրող հիմնադրամ RAA Foundation

☎ 010 52 15 25

© ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ

ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ

© Research on Armenian Architecture Foundation

ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆՔԻ ԾԻՍԱԿԱՄԱՐԸ

Աշոտ Հակոբյան




Նկ. 1 Հոռոմոսի Ներքին և Վերին վանքերը ծիսականարի մոտակայքից (լուս.՝ Ս. Կարապետյանի (ՀԳՈՒ), 2008 թ.)

Միջնադարյան Հայաստանի հռչակավոր և խոշոր վանքերից է Հոռոմոսը, որն առանձնահատուկ դեր է ստացել Անիի՝ մայրաքաղաք հռչակվելուց հետո: Միաժամանակ այն դարձել է Բագրատունյաց արքայական տոհմի դամբարան, որտեղ էլ ամփոփվել են Աշոտ Գ Ողորմածը և նրան հաջորդած արքաները:

Վանական համալիրն Անիից 4,5 կմ հյուսիս-արևելք է՝ Ախուրյանի կիրճում՝ գետի աջափնյա բլուրների վրա: Բաղկացած է Ներքին (Հին) Հոռոմոսի և Վերին (Նոր) Հոռոմոսի վանքերից: Ներքին վանքը գտնվում է Ախուրյանի կիրճի ցածրադիր կենտրոնական բլրի վրա, իսկ նրանից 350 մ հարավ՝ ավելի բարձր կիսաշրջանաձև լեզվակի հարավային եզրին, Վերին վանքի համալիրն է (նկ. 1):

Սույն հոդվածը Ներքին վանքից 450 մ հյուսիս-արևելք՝ Ախուրյանի բարձրադիր ձորապոսին՝ Անիից Հոռոմոսի վանք ձգվող ճանապարհի վրա կառուցված և մեր կողմից ծիսականար¹ անվանումը ստացած կամարակապ շինության մասին է (նկ. 2): Անվան հիմնավորումն առավել մանրամասն կներկայացնենք հոդվածի վերջում (նկ. 3):

Կառույցի վերաբերյալ մատենագրական տեղեկություններ չկան: Այն համառոտ հիշատակված է ԺԹ-Ի դդ. տեղագրական բնույթի որոշ աշխատություններում և հոդվածներում (նկ. 4): Մեզ հայտնի



Նկ. 2 Հոռոմոսի Ներքին վանքը, հեռվում՝ ծիսականարը ձորապոսին (լուս.՝ Ա. Վրույրի, 1900-ական թթ.)

Նկ. 3 Հոռոմոսի ծիսականարը հարավ-արևելքից (գծանկարը՝ Ս. Բրոսսեի, 1861 թ.)

¹ Ծիսականար գիտաբառի հեղինակն է լեզվաբան, խմբագիր Սերգեյ Սկրտչյանը:



Նկ. 4 Հոռոմոսի ծխականաճարը հյուսիս-արևելքից (տւա՝ անհայտ հեղինակի, 1900-ական թթ., Մոսկվայի պատմության թանգարան)

առաջին վկայության հեղինակը հայր Ներսես Սարգսյանն է. «Քառորդաւ հեռի ի Հոռոմոսի վանաց ի վերայ արահետ ճանապարհին են կրկին աշտարակք առններ միմեանց քառակուսի ձևովք, և ի գագաթունսն բոլորաձև գմբէքի աւարտեալ. ի մէջ նոցա սենեակք կան, և քարեղէն աստիճանք անցանելոյ ի ստորնոյն ի վերինն, և ի վերնոյն՝ յաշտարակէ յաշտարակ, կամարաձև քարակերտ անցիւք՝ որ արդ քայքայեալ է: Արձանագիր կայր յարևմտից կուսէ միոյն, այլ եղծեալ իսպառ»²: Վկայակոչելով Ներսես վարդապետի նկարագրությունը՝ Ղևոնդ Ալիշանը հավելում է. «Ի հարավոյ կուսէ միոյ յաշտարակացն է դռնակն 12 աստիճանօք ելանել ի սենեակն. և ի հյուսիսային որմն յիշատակարան թուականաւ 1102 ամին. ՇՄԱ. ես՝ Խաչատուրս, գրեցի»³:

Հովակիմ Գեղամյանի հաղորդմամբ՝ «Այդ ձորակի հիւսիսային կողմի բարձրաւանդակի վերայ

արահետ ճանապարհում գտնվում են քառակուսի բարձր հանդիպակաց աշտարակներ...»⁴:

Ծխականաճարի մասին առավել մանրամասն և կարևոր տեղեկություններ կան Գրիգորիա Երզրնկյանի ուղեգրական նոթերում. «Ղօշավանք գիղից մէկ վերստ հեռաւորութեամբ դէպի հիւսիս գտնվում են երկու զօլերն, որոնք կառուցուած են հիւսիս-հարաւային գծի վերայ. երկոքեան հաւասարակողմն են, լայնութիւնը մէկ սաժ. և մէկ արշին, նոյնչափ է և երկայնութիւնը, միջոցքն ևս այդչափ է: Հիւսիսային զօլն գլխից խախտուած է, վերևից սենեակ է երևում, իսկ ներքևից դուռն չի նշմարվում՝ այս զօլի հիւսիսային կողմի գետնի մօտի պատի վերայ կայ արձանագրութիւն՝ միայն եղծուած: Հարաւային զօլը անխախտ մնացած է, գլխին փոքրիկ բոլորակ կաթողիկէով. հիմքը քառակուսի է: Սորա մէջ՝ թէ վերևը և թէ ներքևը խորաններ կան: Այս զօլի մէջ կայ դուռն հարաւային պատի կողմից բարձրանալու համար. այստեղով և խախտուած կամարներով գուցէ բարձրանալիս են եղել հիւսիսային զօլի վերայ: Այս զօլն ևս ունի արձանագրութիւն արևմտեան պատի վերայ գետնին մօտիկ, միայն եղծուած է»⁵:

Հուսիկ վարդապետն էլ գրում է. «Անիից դեռ Ղօշավանք չը հասած ճանապարհի վերայ գտնվում է մի կամար երկու կողմից գմբէքաղ բարձրացած ...: Այս գմբէքաղ կամարակապը 1102 թուականից առաջ շինուած է եղել, ինչպէս ցոյց է տալիս մի արձանագրութիւն նոյն և Հայոց ՇՄԱ. թուականը կրողը»⁶:

1878 թ. վանք այցելած Կարապետ Հովհաննջանյանը վկայում է, որ «Ղոշավանքի և Անիի մէջ տեղ կիսաւեր կանգնած են երկու գմբէքաւոր շինութիւնք, բայց ոչ եկեղեցի, իրարից երկու սաժէն հեռու քարեայ կամարով միացած...»⁷:

Ծխականաճարի մասին հիշատակություն ունի նաև Աբել վարդապետը. «Այս երկու զանգակատունները կոփածո սևագույն կարմիր քարով շինված են երեքհարկյան, վարի կողմեն մեկ մեկ դուռ ունենալով՝ դեմ առ դեմ իրարու կը նային, գմբէքները չորս փոքրիկ սյուներու վրա հաստատված են առանց խաչի. ցավալին այն է, որ արձանագրություն չունին»⁸:

2 Սարգիսեան Ն., Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 168:

3 Ալիշան Ղ., Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 18: Ի դեպ, Մութիաս Էփրիկյանը, օգտվելով Սարգսյանից և Ալիշանից, որևէ նորություն չի հաղորդում («...Հոռոմոսի վանքն ալ քառորդ մը հեռու, ճանապարհի վրայ կան այս անուամբ կրկին աշտարակներ, քառակուսի ձևով և գագաթները բոլորաձև սրածայր գմբէքով աւարտած: ...Մէջը սենեակներ կան և քարէ աստիճաններով վարեն վեր կ'ելլցուի. ինչպէս պատկերեն կը տեսնուի կամարով մը իրարու միացած են: Աշտարակներէս միոյն արևմտեան կողմը բոլորովին եղծուած արձանագրութիւն մը կայ. կը մնայ միայն հիւսիսային որմի վրայ 1102 թուին գրուած հետեւեալ տողը. ՇՄԱ. ես՝ Խաչատուր, գրեցի: Մեր պատկերը կը ցուցնէ Խօշունը անկործան վիճակի մէջ, ներկայիս շատ փոխուեր և խախտեր է, աշտարակներու գմբէքները բոլորովին կործաներ են») (Էփրիկեան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Բ, Վենետիկ, 1907, էջ 229):

4 Գեղամեան Յ., Ախալցխայից մինչև Անի, «Փորձ», 1880, VIII-IX, էջ 120:

5 Երզնկեան Գ., Դանապարհորդութիւն Դարսից մինչև Անի, «Արձագանք», 1887, № 15, 3 մայիսի, էջ 230:

6 Մովսէսեան Յ., Կարսի վիճակի հնութիւնների մասին. համառոտ տեղեկություններ, «Արարատ», 1890, № 22, 3 մարտի, էջ 159: Նաև նույնի՝ Երկերի ժողովածու, «Արարատի»-ի ժառանգությունը, Բ, Ս. Էջմիածին, 2009, էջ 482:

7 Կ. Յովհ., Աղեքսանդրապոլ, «Մեղու Հայաստանի», 1878, № 27, 15 յուլիսի, էջ 2:

8 Մխիթարեանց Ա., Դանապարհորդութիւն յԱնի, Կ. Պոլիս, 1855, էջ 49: Ի դեպ, հեղինակն անկյունային գմբէքակիր որմնամույթերը համարել է սյուներ: Տես նաև Մաքսուսյան Կ., Հոռոմոս-Անի ճանապարհին գտնվող կամարը, «Պատմա-բանասիրական հանդես», 1982, № 1, էջ 143-149:

Հուշարձանին են անդրադարձել նաև Ի դարի տարբեր հետազոտողներ: Թորոս Թորամանյանը հպանցիկ է ներկայացնում կառույցը. «Հռոմոսի վանքին պատկանող սահմանի մեջ, որ կիսանի մինչև հաղթական կամար համարված դուռը (Ղոշեք)...»⁹, իսկ հետո հավելում է. «Ձորը կամ դեպի վանքերը իջնելու նախնական ճանապարհը եղեր է Ղոշեքի մոտեն, հազիվ 30-40 քայլ անցնելով Ղոշեքեն, հայտնի կտեսնվի ճանապարհի մը դեպի աջ ծովերը...»¹⁰:

Նիկոլայ Տոկարսկին կառույցը համարում է իր տեսակի մեջ եզակի¹¹:

Հայաստանի սովետական հանրագիտարանում հուշարձանի մասին կարդում ենք հետևյալը. «Հռոմոսի վանքից հարավ՝ Անի տանող ճանապարհին, կանգուն են մի ինքնատիպ շինության՝ «հաղթական կամար» համարվող դռան (Ղոշեք) գմբեթավոր զույգ աշտարակները (հավանաբար X-XI դդ.), որի պատճառով վանքը կոչվել է նաև Ղոշավանք»¹²:

Ծխականարին է անդրադարձել նաև ճարտարապետ Վարագդատ Հարությունյանը. «Վանքային խմբերից առանձին, որոշ հեռավորությամբ, նրանցից Անի տանող ճանապարհի վրա եղել է (այժմ լիովին ավերված) «ղոշեք» կոչվող (այստեղից էլ ստուգաբանվում է վանքի մյուս Ղոշավանք անունը) հաղթականարանման կառուցվածքը: Այն դիտվում է որպես զանգակատուն, թագավորական դիտաշտարակ, նաև Անի տանող ճանապարհի հանդիսավոր դարպասը: Հայ ճարտարապետության մեջ եզակի այս հուշարձանը կամարային մեծ բացվածքով, վերևից հորիզոնական քիվով պսակված մի կառուցվածք էր՝ երկու կողմերից պսակված մատուռանման գմբեթավոր ծավալներով: Հարավային կողմից ներսում ամփոփված 12 սանդուղքներով կարելի էր բարձրանալ վերին հարթակը, մտնել հյուսիսային աշտարակը: Կառուցման ժամանակը չի վկայված, հավանաբար արդյունք է Բագրատունիների շինարարական գործունեության: Հյուսիսային պատին կա արձանագրություն՝ 1102 թվագրմամբ»¹³:

Արմեն Զարյանը, կառույցը ևս համարելով հաղթականար, այն այսպես է նկարագրում. «Սմբատյան պարիսպներից դուրս՝ դեպի վանք տանող

ճանապարհին, վեր է սլանում հաղթականարը՝ եռահարկ, քառակուսի երկու աշտարակներով, գմբեթաձաձկ վերջավորությամբ և դրանք իրար կապող լայնաթիչք կամարով»¹⁴:

Ինչ վերաբերում է կառույցի անվան բացատրությանը, ապա դրա վերաբերյալ առկա են տարբեր մեկնաբանություններ: Մինաս Բժշկյանը միակ հեղինակն է, որ Խոշավանք անվան ստուգաբանությունը կապում է ոչ թե երկաշտարակ ծխականարի, այլ Հռոմոսի զույգ վանքերի հետ. «Ի մին վիճակի է Խոշավանքն, զոր թարգմանեն զոյգ վանք ...»¹⁵:

Ըստ Ներսես վարդապետի՝ «Խոշուն գաա կոչեն, որ զոյգ նշանակե ի վրացի լեզու. և աստի Խոշավանք կոչեցեալ զՀռոմոսի վանսն»¹⁶: Հ. Գեղամյանը¹⁷ և Ս. Էփրիկյանը¹⁸ նույն կերպ են մեկնաբանում, ինչպես Սարգսյանը:

Սարգիս Ծոցիկյանը, հետևելով հայր Սարգսյանին, նույնպես համարում է, որ Խոշավանքի առաջին բաղադրիչը վրացերեն արմատ է. «Հռոմոսի վանքը Խոշավանք ալ կը կոչուի: Առաջին անունը, Հռոմոս, վանքն ստացած է այն օտարագրի կրօնականներէն, որոնք Ռոմանոս կայսրէն հալածուելով, եկան մինչև Անիի կողմերը, և այդտեղ հաստատուեցան: Իսկ «Խոշա» անունը վանքին վրայ մնացած է այն ժամանակաշրջանէն, երբ վրացիք տիրեցին Անիին: «Խոշա»-ն ծագած է վրացերէն «Խօշուն» բառէն, որ կը նշանակե «զոյգ»: Կերևայ, թէ այդ «զոյգ» թուական անունը կարևոր դեր մը կատարած է այն ժամանակները այդտեղ, որ զայն յաւերժացնելու համար, վանքը յորջորջած են «Խոշուն», և ապա «Խոշավանք»¹⁹: Հեղինակը, ցավոք, խոշուն բառն առանց հիմնավորման վրացերեն ծագում համարելով, կառույցի և վանքի Խոշավանք անվանումը կապում է վրաց տիրապետության ժամանակաշրջանի հետ:

Հուսիկ վարդապետը գրում է. «...և վանքն իր այժմեան Ղոշավանք անունը ստացել է այս զոյգ գմբեթներով կամարակապից»²⁰), իսկ Աղվանյանն էլ՝ «Վանուցս հիւսիսային արևելեան կողմը շինուած է Կօշայ անուանեալ երկու իրարու կից գրմբեթներ»²¹:

Խնդրին անդրադարձել է նաև Կարեն Մաթևոսյանը: Ըստ նրա՝ Ղոշեք թուրքերեն կոչվում է զույգ,

9 Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 1, Երևան, 1942, էջ 299:

10 Նշվ. աշխ., հ. 1, էջ 304:

11 Токарский Н. М. Архитектура Армении IV-XIV вв. Ереван, 1961. С. 278-279. Տե՛ս նաև Մաթևոսյան Կ., Հռոմոս-Անի ճանապարհին գտնվող կամարը, էջ 143-149:

12 Հայաստանի սովետական հանրագիտարան, հ. 6, Երևան, 1980, էջ 547: Ի դեպ, հանրագիտարանում, ցավոք, տեղադրությունը սխալ է նշված. ծխականարը ոչ թե վանքի հարավային, այլ հյուսիսային կողմում է:

13 Հարությունյան Վ., Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1992, էջ 237-239: Նշենք, որ կառույցն այժմ ոչ թե լիովին ավերված է, այլ կիսավեր է:

14 Զարյան Ա., Ակնարկներ հին և միջնադարյան Հայաստանի քաղաքաշինության պատմության, Երևան, 1986, էջ 125:

15 Բժշկյանց Մ., Ճանապարհորդություն ի Լեհաստան, Վենետիկ, 1830, էջ 70:

16 Սարգիսեան Ն., նշվ. աշխ., էջ 168:

17 Գեղամեան Յ., նշվ. հոդվ., էջ 120:

18 Էփրիկեան Ս., նշվ. աշխ., հ. Բ, էջ 229:

19 Ծոցիկեան Ս., Արարատ-Կովկաս, հ. Ա, Ֆրեզնո, 1917, էջ 222:

20 Մովսեսեան Յ., Կարսի վիճակի հնությունների մասին. համառոտ տեղեկություններ, էջ 159: Տե՛ս նաև նույնի՝ Երկերի ժողովածու, էջ 482:

21 Եղիշե Զարենցի անվան գրականության և արվեստի բանգարան (ԳԱԹ), Գ. Մովսեսեանի ֆոնդ, բաժ. 4, գ. 17, հեղ.՝ Գր. Աղվանյան, ձեռագիր, ք. 3:

իսկ «այս փոքրիկ կառույցի Ղոշեր անունը հետագայում տարածվել է նաև ողջ վանքի վրա, որը 17-19-րդ դարերի աղբյուրներում երբեմն կոչվում է նաև Ղոշավանք կամ Խոշավանք, առաջին կիրառությունը՝ 1687 թ.»²²:

Մեր կարծիքով՝ անվան բացատրությունները խնդրահարույց են և ոչ լիարժեք, քանի որ Խոշավանք-ը ոչ թե խոշուն-ից է առաջացել, մասնավորապես այդ բառը վրացերենում ընդհանրապես գոյություն չունի, կամ էլ դոշեր-ից, այլ դոշա բառից, որը բյուրքական լեզվաբանության ծագում ունի և նշանակում է գույգ, իսկ վերջինս թուրքերեն՝ չիֆթ²³: Այժմյան աղբյուրներում գոշա-ն կոչվում է գույգ, իսկ արցախյան բարբառում փոխառված դոշա-ն նույնպես նշանակում է ճոխտ, այսինքն՝ գույգ²⁴: Հետևաբար Ղոշավանք բառացի նշանակում է գույգ վանք: Ուստի համակարծիք ենք տեղագիր հեղինակներից Բժշկյանցի հետ, բայց ոչ թե Խոշավանք, այլ Ղոշավանք ձևով: Այստեղից էլ եզրակացնում ենք, որ Ղոշավանք անունը ոչ թե ծիսականարին է վերաբերում, այլ հենց Հռոմոսի վանքին՝ Վերին և Ներքին գույգ վանքերից բաղկացած լինելու պատճառով²⁵:

Այժմ անդրադառնանք հուշարձանի նշանակությանը, որը տարբեր հեղինակներ տարբեր կերպ են մեկնաբանում:

Հայր Սարգսյանը, հիմնվելով ժողովրդական ավանդազրույցների վրա, ենթադրում է, որ կառույցը եղել է զանգակատուն կամ հաղթականար. «Պէսպէս գրոյցք են և զսոցանէ, ոմանց ասելով, եթէ զանգակատունը էին հրաւիրելոյ զաւագանին ի խորհուրդ. յայս կարծիս են, որ զնշխարատուն վանացն դատաստանարան ասեն. և այլոց՝ թէ զքօսարանք իցեն թագաւորին, որ նստեալ ի վերին կողմն կայր ի զնին զինուորական զնդիցք, որք մի առ մի անցանէին ընդ կամարան»²⁶:

Հուսիկ վարդապետն ավանդության փոքր-ինչ այլ տարբերակ է մեջբերում, ըստ որի՝ «...թագաւորների և աւագանու խորհրդանոցը Հռոմոսի վանքումն էր. երբ թագաւորն ու աւագանին հասնում էին այս կամարակալին, Հռոմոսի վանքին զանգակները հնչեցնում էին հանդիսաւոր ընդունելութեան համար»²⁷: Հովհաննջանյանցն էլ եզրակացնում է,

որ այն «...զանգակատուն է եղել Անիից Ղոշավանք, Հայ նախարարաց և թագաւորին դատաստանատուն հրաւիրելու»²⁸:

Գեղամյանը ևս, անդրադառնալով հուշարձանի նշանակությանը, թեականորեն հանգում է հետևյալ տեսակետին. «Ակադեմիկ Բրոսէն այդ աշտարակներուն յաղթական կամար է անուանում, որի տակից Բագրատունի թագաւորները անցնելով գնում էին Հռոմոսի վանքը յերկրպագութիւն կամ իրեանց նախնիքների գերեզմաններին ուխտ անում: Այս կարծիքը ինձ էլ հաւանական է թվում: Բայց քանի որ այդ պատմական և պատուական կոթողները չունին իրենց վերայ ոչինչ արձանագրութիւն և քանի որ մեր պատմութիւններից ոչ մեկում դորանց մասին ոչինչ յիշատակութիւն չէ լինում, թող թոյլ տրուի ինձ էլ հետևեալ կարծիքները յայտնել. 1) կարելի է որ այդ կամարակապ աշտարակները Անույ դուռը կամ քաղաքի սահմանագիծը լինէին. 2) գուցէ Հռոմոսի մնան մի հարուստ վանքի և թագաւորների գերեզմաններին պահպանութեան վերայ հսկող զօրաց պահակատուն լինէին. 3) կարելի է որ դիտանոց լինէին դէպի երեք կողմը ձգուած ընդարձակ դաշտերը, մանաւանդ դժնդակ ձմրան բուք ու բօրանի ժամանակ և վերջապէս 4) կարելի է որ զօրահանդէսի կամ որևէ եկեղեցական և ազգային հանդէսի ժամանակ թագաւորների և աւագանույն նստելու համար յատկացրած տեղ լինէր»²⁹: Երզնկյանը ծիսականարի մասին դարձյալ ժողովրդական ավանդազրույցը նույնությամբ մեջբերելուց հետո նշում է. «Հաւանական է, որ սա «Յաղթական դուռն» եղած լինի»³⁰: Էփրիկյանը կառույցի նշանակության մասին գրում է. «Ստույգ չի գիտցուի, թէ ժամանակաւ ինչ նպատակաւ շինուած են այս աշտարակները»³¹:

Հետագա ուսումնասիրողները նույնպես անդրադարձել են կառույցի նշանակությանը և տարբեր վերլուծություններ կատարել: Թադևոս Հակոբյանը, համակարծիք լինելով Լեոյի հետ, կառույցի մասին գրում է. «... այդ գույգ աշտարակները մնում են իբրև առեղծված: Փաստերի և գրավոր աղբյուրների բացակայությունը թույլ չի տալիս որոշ պարզություն մտցնել այդ հարցում»³², իսկ Վ. Հարությունյանն այս կերպ է մեկնաբանում. «Ըստ ընդունված կարծիքի, վերջինս հաղթական կամարի դեր էր կատարում Անի տանող ճանապարհին»³³:

Ծիսականարի նշանակության վերաբերյալ հետաքրքիր վերլուծություն է կատարել Արմեն Զարյանը, ըստ որի՝ «Միջնադարյան հասկացության

22 Մաթևոսյան Կ., Հռոմոսի վանքը և գրչատունը, «Բանբեր Մատենադարանի», 2020, № 30, էջ 172-173:

23 Դերմենջյան Մ., Հայերեն-թուրքերեն բառարան, Երևան, 2013, էջ 126:

24 Սարգսյան Ա., Ղարաբաղի բարբառի բառարան, Երևան, 2013, էջ 461:

25 Ի հավելումն այս բացատրության՝ նշենք, որ Ղոշավանք է կոչվել նաև Յախսաց քարի վանքը, քանի որ այն նույնպես բաղկացած է գույգ վանքերից:

26 Սարգիսեան Ն., նշվ. աշխ., էջ 168:

27 Մովսեսեան Յ., Կարսի վիճակի հնութիւնների մասին. համառոտ տեղեկություններ, էջ 159: Տե՛ս նաև նույնի՝ Երկերի ժողովածու, էջ 482:

28 Կ. Յովհ., նշվ. հոդվ., էջ 2:

29 Գեղամեան Յ., նշվ. հոդվ., էջ 120-121:

30 Երզնկեան Գ., նշվ. հոդվ., էջ 230:

31 Էփրիկեան Ս., նշվ. աշխ., հ. Բ, էջ 229:

32 Հակոբյան Թ., Անիի պատմություն, Երևան, 1980, էջ 277: Տե՛ս նաև Մաթևոսյան Կ., Հռոմոս-Անի ճանապարհին գտնվող կամարը, էջ 144:

33 Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 22-23:

համաձայն, հնարավոր է, որ հաղթականմարն աշխարհիկ Անին և հոգևոր կենտրոն Հռոմոսը, այսինքն՝ երկու «քաղաքները» իրար հաղորդակից դարձնող դուռ է»³⁴։ Վերջում կարևոր եզրահանգում է անում. «Այսքանից հնարավոր է պարզել քաղաքաշինական հետևյալ խնդիրը. Անին և Հռոմոսը հաղորդակից էին իրար գլխավոր ճանապարհով, որը ձորի երկայնքով զառիթափ հասնում էր Անիի բարձրավանդակի մակերևույթին, անցնում հաղթականարի տակով, երկարում մինչև Մաքատյան պարիսպները, անցնում Ավագ դռնից, միանում քաղաքի գլխավոր փողոցին ու վերջանում պալատի առաջ։ Արարողությունների և ծիսակատարությունների այս պողոտան իրար էր կապում քաղաքի կենտրոնը և Ախուրյանի ձորի թերակղզին։ Ֆիզիկաաշխարհագրական բնական կառուցվածքում պողոտան, նրա երկայնքով տեղադրված կառույցները, հաղթականարն ու պողոտայի ծայրամասերում բարձրացող շենքերի կարևորությունը, հեռավորությունների կշռականը ճարտարապետության հասկացություն է, որն ավանդաբար կապվում է արևելքի քաղաքներում գոյություն ունեցած ծիսակատարությունների ճանապարհներին»³⁵։

Ծիսականարի նշանակությունը պարզելու համար որոշ հեղինակներ նաև անդրադառնում են Անի մայրաքաղաքի արվարձանների սահմաններին։ Ըստ այդմ՝ դրանք տարածվել են մինչև Հռոմոսի վանք։ Ն. Մառի ասությամբ՝ «...քաղաքամերձ մասը հասնում էր մինչև երկու, հեռվից զանգակատների նմանվող սյուները, Անիի միջնաբերդից չորս վերստ հեռավորությամբ»³⁶։ Նույնն է հաստատում նաև Թ. Թորամանյանը՝ նշելով, որ Անիի արվարձանները հասնում էին մինչև Հռոմոսի վանք³⁷, իսկ Լեոն շեշտում է հետևյալը. «...մի քաղաքի սահմանները նրա տները չեն որոշում, մանավանդ, մի այնպիսի քաղաքի, որի բնակիչների մի մասը հողագործությամբ և անասնապահությամբ էր պարապում»³⁸։

Կարեն Մաթևոսյանը, վերլուծելով հետազոտողների կարծիքները, խնդրո առթիվ իրավացիորեն գրում է. «Չանգակատուն լինելու մասին ենթադրությունը հիմնված է միայն ժողովրդական ավանդության վրա...։ «Հաղթականար» անվանումը նույնպես չունի ոչ մի հիմնավորում։ Եթե այն կառուցված լիներ Բագրատունի որևէ թագավորի կողմից, ի նշան նրա տարած հաղթանակի, ապա չէր գտնվի

արքայանիստ քաղաքից դուրս՝ արվարձանի եզրին, երբ բոլոր գլխավոր (հատկապես թագավորաշեն) շինությունները կառուցվում էին միայն պարիսպներից ներս։ Հայ ժողովրդի պատմությունից մեզ հայտնի չէ որևէ դեպք, որ թագավորը կառուցի հաղթականար, իսկ եթե նրանցից մեկը այդպիսի բան արած լիներ, դժվար թե մեր պատմիչները անտեսեին այդ ուշագրավ փաստը, մանավանդ, եթե խոսքը վերաբերում է Անիին։ Այդ ժամանակաշրջանում, ի հավերժացումն որևէ նշանավոր իրադարձության, կարող էին խաչքար կանգնեցնել»³⁹։ Եվ վերջում հանգում է հետևյալ եզրակացության. «Ն. Մառը հուշարձանը համարում է «հաղթական դարպաս» „триумфальные ворота“, „Հետագայում գրականության մեջ այն կոչվում է «հաղթական կամար», „триумфальная арка“, „Մեր կարծիքով գերադասելի է մուտքի կամար „входная арка“, ճարտարապետության մեջ ընդունված ձևը»⁴⁰։

Կառույցի դիրքը հաշվի առնելով՝ Մաթևոսյանը նշում է նաև հետևյալը. «Անի քաղաքի արվարձանները հասնում էին մինչև Հռոմոսի վանքը, հետևաբար հիշյալ կամարը կառուցված էր քաղաքի և վանքի սահմանագրին։ Մուտքի կամարը միայնակ հուշարձան է, գուրկ պարիսպներից, սակայն ունենալով բարձր, շրջապատի վրա իշխող դիրք, այն հավանորեն ծառայել է նաև որպես քաղաքի սահմանում գտնվող դիտակետ, որովհետև գույգ աշտարակներն ունեին դռներ, պատուհաններ և ներսում վերև տանող քարե աստիճաններ, ինչպես նաև անցում մի աշտարակից մյուսը կամարի վրայով»⁴¹։ Այնուհետև անդրադառնալով Հաղպատի ավետարանի «Մուտք Երուսաղեմ» մանրանկարին՝ ներկայացնում է Ավետարանի ստեղծման ուշագրավ համառոտ պատմությունը, ըստ որի՝ այն գրվել է 1211 թ. Սահակ Անեցի քահանայի պատվերով Հաղպատի վանքում, ապա «...բերվել է Հռոմոս, որպեսզի կազմվի։ Սակայն ըստ երևույթին պատվիրատուին չի բավարարել ձեռագրի գեղարվեստական հարդարանքը, և նա Ավետարանը Հռոմոսից տարել է Անիի Բեխենց վանքը (որի ճանապարհը անցնում էր մուտքի կամարով), ուր և այն նկարագարող է Մարգարեն»⁴²։

Այնուհետև Մաթևոսյանը, համեմատելով Հաղպատի ավետարանի «Մուտք Երուսաղեմ» մանրանկարը և Հռոմոսի ծիսականարը, նշում է (նկ. 5, 6). «...դիտենք Մարգարեի «Մուտք Երուսաղեմ» նկարի և Հռոմոսից Անի տանող ճանապարհին գտնվող կամարի լուսանկարները։ Երկու դեպքում էլ աշտարակը եռահարկ է՝ գմբեթավոր։ Որոշակի է հարկերի համաչափային նմանությունը։ Բնական է, որ Մար-

34 Ջադյան Ա., նշվ. աշխ., էջ 125։

35 Նույն տեղում։

36 Март Н. Я. Ани, столица древней Армении (историко-археологический набросок). // Братская помощь пострадавшим в Турции армянам. М., 1898. С. 221. Տե՛ս նաև Մաթևոսյան Կ., Հռոմոս-Անի ճանապարհին գտնվող կամարը, էջ 144։

37 Թորամանյան Թ., նշվ. աշխ., էջ 327-328։ Տե՛ս նաև Մաթևոսյան Կ., Հռոմոս-Անի ճանապարհին գտնվող կամարը, էջ 144։

38 Լեո, Անի, Երևան, 1946, էջ 256։ Տե՛ս նաև Մաթևոսյան Կ., Հռոմոս-Անի ճանապարհին գտնվող կամարը, էջ 144։

39 Մաթևոսյան Կ., Հռոմոս-Անի ճանապարհին գտնվող կամարը, էջ 143։

40 Նշվ. հոդվ., էջ 148-149։

41 Նշվ. հոդվ., էջ 144-145։

42 Նշվ. հոդվ., էջ 147-148։



Նկ. 5 Հաղպատի ավետարանի «Մուտք Երուսաղեմ» մանրանկարը (հեղ.՝ Մարգարե ծաղկող, 1211 թ.)

գարե ծաղկողը չի փորձել նույնությամբ արտանկարել Անիի մուտքի կամարը»։ Պատկերը նկարագրելիս նշում է, որ Հաղպատի ավետարանի կամարի վրա գրված է Երուսաղեմ քաղաք։ Այնուհետև ավելացնում է. «Նկարված շինության և մուտքի կամարի աշտարակի կոմպոզիցիոն ու հարկերի համաչափային մնանությամբ պետք է ավելացնել փոքրիկ լուսամուտների նույնությունը, ինչպես և այն, որ երկու դեպքում էլ կամարը կապված է առաջին հարկի նույն մասում»⁴³։ Վերջում հանգում է այսպիսի եզրակացության. «Հուշարձանը ոչ այլ ինչ է, եթե ոչ քաղաքի արվարձանի եզրին կառուցված մուտքի կամար։ Անիից Հռոմոս գնացողների համար այն մուտք է Հռոմոս, իսկ հակառակ ուղղությամբ եկողների համար՝ մուտք Անի», և ավելի մանրամասնում. «Ո՛չ հաղթական կամ զանգակատուն, ո՛չ էլ դռներ անունները չեն համապատասխանում հուշարձանին։ Դուռ-դարպաս-մուտք, այսպիսին է հուշարձանի նշանակությունը։ Մուտքի կամարը դարձյալ ընդգծում է անեցիների ձգտումը՝ համատեղել գեղեցիկը և օգտակարը (մի սկզբունք, որն իր արտացոլումն է գտել անգամ քաղաքի պարիսպների ձևավորման մեջ)։ Մուտքի կամարը մեր կարծիքով կատարել է երկու կարևոր դեր։ Հռոմոսի կողմից Անի եկողների համար ծառայել է որպես տպավորիչ և գեղեցիկ մուտք դեպի քաղաք։ Փառահեղ եկեղեցիներով և այլ բարձրարվեստ շինություններով հռչակված քաղաքը չպետք է Անի եկող-



Նկ. 6 Հռոմոսի ծխականամարն արևելքից (լուս.՝ անհայտ հեղինակի, 1900-ական թթ.)

ներին ներկայանալ սոսկ խրճիթաշեն արվարձանով։ Սակայն մուտքի կամարը չի կառուցվել զուտ գեղագիտական նկատառումներով։ Այն ծառայել է նաև որպես քաղաքի արվարձանում տեղադրված դիտակետ։ Այսպիսով, Անի քաղաքի հյուսիսում գտնվող վերոհիշյալ հուշարձանը, որը տարբեր հեղինակների կողմից տարբեր անուններ է ստացել, մեր կարծիքով կառուցվել է Անիի արվարձանի եզրին իբրև մուտք 1102 թ. առաջ՝ հավանաբար Բագրատունի թագավորների օրոք, երբ «տիեզերահռչակ Անի քաղաքը» ապրում էր քաղաքական, տնտեսական և մշակութային բուռն ծաղկման տարիներ։ Սույն հուշարձանը Մարգարե ծաղկողը ընտրել է որպես քաղաքային մուտքի նախատիպ՝ «Հաղբատի ավետարանի» «Մուտք Երուսաղեմ» նկարն ստեղծելիս»⁴⁴։

Ամփոփելով ծխականամարի նշանակությանն առնչվող վերոհիշյալ տեղեկությունները՝ նշենք, որ հեղինակները տարբեր կերպ են մեկնաբանել, սակայն, մեր կարծիքով, համոզիչ պատասխան չեն տվել։ Նրանք, ցավոք, անտեսել են հուշարար մի քանի կարևոր դրվագներ՝ արևմտյան ճակատի խաչքարի և Հռոմոսի վանքում Բագրատունիների տոհմական դամբարանի առկայությունը (բացառությամբ Գեղամյանցի), կառույցի հորինվածքային առանձնահատկությունները։ Համակարծիք ենք Կարեն Մաթևոսյանի հետ, որ այն հաղթակա-

43 Նշվ. հոդվ., էջ 148:

44 Նշվ. հոդվ., էջ 148-149:



Նկ. 7 Անիի խաչակիր աշտարակի խաչաքանդակը և խաչքարը (լուս.՝ Ռ. Քորթոշյանի (ՅՃՈՒ), 2021 թ.)

Նկ. 8 Անիի Իգաձորին մայրո պարսպապատի խաչքարերը և խաչաքանդակը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

Նկ. 9 Կարս քաղաքի արևելյան պարսպապատի աշտարակի խաչքարը (լուս.՝ անհայտ հեղինակի, 1900-ական թթ.)

մար համարելն անհիմն է: Ըստ մեր հետազոտությունների՝ տեղագիր հեղինակների և ավանդազրույցների հիշատակումները, թե աշտարակների վրա զանգակատներ են, ճիշտ չեն, քանի որ նրանք, համաձայն հորինվածքի, ոչ թե զանգակատներ, այլ գմբեթավոր մատուռներ են: Կառույցը որպես դիտակետ կամ պահակատուն լինելն էլ հիմնավորված չէ, որովհետև այն բնավ էլ չունի զորանոցային հարմարություն. միջանկյալ հարկի սենյակները չունեն լուսամուտներ տարածքը հսկելու համար, իսկ վերին հարկի գմբեթավոր մատուռների լուսամուտներն էլ բարձր են և փոքր: Մյուս կողմից էլ դրանք ոչ թե պահակակետեր, այլ մատուռներ են:

Անդրադառնա՞նք Մաթևոսյանի՝ վերոնշյալ այն կարծիքին, թե հուշարձանը ծառայել է ոչ միայն որպես Հռոմոսի վանքի դարպաս, այլև միաժամանակ՝ քաղաքի արվարձանի դարպաս Հռոմոսից Անի գնացող ճանապարհին: Կարծում ենք՝ դա այնքան էլ հիմնավոր չէ, քանի որ Հռոմոսից բացի՝ Կարսից, Արգինայից, Դվինից դեպի Անի եկող գլխավոր ճանապարհների վրա՝ արվարձանների եզրերին, նման կամարակապ շինություններ չկան, որ այն համարենք քաղաքային դարպաս: Բացի այդ՝ խաչքարի գոյությունը կառույցի միայն արևմտյան ճակատին՝ Անիից Հռոմոս գնացող ճանապարհի աջ կողմում, շեշտում է, որ գլխավոր ճակատն արևմտյանն է, այլ ոչ թե արևելյանը: Ինչպես, օրինակ, Անիի և Կարսի պարիսպների արտաքին գլխավոր ճակատներում են խաչաքանդակները և խաչքարերը (նկ. 7, 8, 9): Հետևաբար ծիսական մարը գլխավոր դարպաս է միայն Հռոմոսի վանքի համար (նկ. 10):

Հավելենք, որ կառույցը ճիշտ չէ համարել Հռոմոսի վանքի՝ զուտ որպես դարպաս կամ մուտքի կամար, քանի որ Անիի շրջակայքում Բագրատունիների ժամանակ կառուցված Կարմիր վանքի (Ախուրյանի կիրճում), Բագնայրի և Արջո Առին վանքերը չունեն նման դարպասներ: Իսկ Հաղպատի ավետարանի և Հռոմոսի ծիսական մարի համեմատական վերլուծությամբ հեղինակը պնդում է, որ այն քաղաքի դարպասի նշանակությունն է փաստում: Ընդհակառակը, մեր կարծիքով, «Մուտք Ե-



Նկ. 10 Հռոմոսի ծիսական մարն արևմուտքից (լուս.՝ անհայտ հեղինակի, 1900-ական թթ., Մոսկվայի պատմության թանգարան)



Նկ. 11 Անիի Կարուց դուռը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2011 թ.)



Նկ. 12 Անիի Նոր Դվնո դուռը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

րուսադեմ» մանրանկարում դարպասի կամարին գրված Երուսադեմ անունը հենց այս կառույցի պարագայում պետք է դիտել կրոնական տեսանկյունից՝ մուտք Վերին Երուսադեմ: Փորձենք հիմնավորել: Բագրատունյաց արքաները ջերմեռանդ քրիստոնյաներ էին բյուզանդական կայսրերի նման և իրենց համարում էին Աստծո փոխանորդներ երկրի վրա: Նրանց տոհմական դամբարանը եղել է Հռոմոսի վանքում, որի վկայությունը գտնում ենք Ներքին վանքի Սբ. Գևորգ եկեղեցու արևմտյան ճակատին փորագրված Հովհաննես-Սմբատ արքայի արձանագրության մեջ. «...եւ ի ՆՁԵ (1036) / քա(զաւո-րութեան) հ(այոց), ես՝ Սմայատ շահանշահ, որդի Գագկա շահանշահի, էտո/ւ զիմ գեղս զՍահռունիս ի մեր հանգստարանս ք(ա)զաւորաց ի տիէ/գերա-հռչակ վանս {ս} Հռոմոսի վասն մեր մեղաց թողո-թեան եւ գրեցի ի / ս(ուր)ք Գ(եւ)որգ...»⁴⁵:

Հետևաբար կարելի է ենթադրել, որ այդ բացառիկ նշանակության համար էլ վանքի մոտ ծիսակամար են կառուցել: Համակարծիք ենք Արմեն Զարյանի այն մտքի հետ, որ «...հաղթակամարն աշխարհիկ Անին և հոգևոր կենտրոն Հռոմոսը, ...իրար հաղորդակից դարձնող դուռ է»⁴⁶: Անիից Հռոմոս ձգվող ճանապարհը «արարողությունների և ծիսակատարությունների պողոտա»⁴⁷ համարելն էլ կարևոր է, սակայն հեղինակը, ցավոք, չի նշել, թե ինչ ծեսի հետ կարող էր կապ ունենալ:

Այս ամենի հիման վրա կարծում ենք, որ գմբեթավոր մատուռներով պսակված կամարակապ դարպասը եղել է ծիսակամար՝ կապ ունենալով արքաների հուղարկավորության ծեսի հետ: Անիից Հռոմոս ձգվող ճանապարհին, որպես վերջին հանգրվան, այն մի կամարակապ դարպաս է, որից հետո ճանապարհն իջնում է դեպի Ախուրյանի կիրճում գտնվող վանքը: Մյուս կողմից Անիից Հռոմոս այցելուների համար այն Բագրատունյաց արքա-

յական դամբարանի նախադուռն է եղել: Քրիստոնեական տեսանկյունից հուղարկավորություն բառը նշանակում է ննջեցյալին ճանապարհ դնել դեպի երկինք: Հետևաբար արքաների վախճանվելուց հետո թաղման թափորը, Անիից (երկրային կյանքից) հասնելով այս կառույցին, այսինքն՝ երկրայինից երկնայինի բաժանարար սահմանակետին, անցնում է կամարակապ երկնքի դարպաս (Վերին Երուսադեմի) խորհրդանշող ծիսակամարի միջով, մուտք է գործում երկնային տիրույթ (Հռոմոսի վանքի տարածք) և հասնելով վերջնական հանգրվանին՝ ամփոփում է արքայի աճյունը վանքի բակում: Այդ պատճառով է, որ ի տարբերություն Անիի և մյուս մայրաքաղաքների դարպասների, որոնք կազմված են զույգ աշտարակների միջև բացված կամարակապ մուտքերից (նկ. 11, 12), Հռոմոսի ծիսակամարն ունի բոլորովին տարբերվող եզակի լուծում. կամարակապ ինքնատիպ դարպաս է, որի վերին հարկում գմբեթավոր փոքրիկ զույգ մատուռներ են:

Ի մի բերելով վերոնշյալը՝ կառույցը կոչում ենք ծիսակամար, քանի որ այն ավելի է շեշտում թաղման ծեսի հետ կապված լինելը և Հռոմոսի վանքում արքայական դամբարանի առկայությունը՝ ընդգծելով մուտքը դեպի արքայական հանգստարան:

Բացառիկ կառույցը, ցավոք, երբևէ չի չափագրվել: Այն, ըստ արխիվային լուսանկարների, Ի դարի սկզբին գրեթե ամբողջությամբ կանգուն էր: Հռոմոսի Վերին վանքի Սբ. Հովհաննես եկեղեցին պայթեցվել է 1960-ական թվականներին, որից ելնելով՝ ենթադրում ենք՝ ծիսակամարը նույնպես ավերվել է այդ ժամանակաշրջանում: Այժմ դեռևս պահպանվում են հյուսիսային աշտարակը՝ կիսավեր գմբեթավոր մատուռով, և հարավային աշտարակի առաջին հարկի հյուսիսային պատի կրաշաղախ միջուկը: Առաջին հարկի երեսապատի քարերը պոկված-հափշտակված են, իսկ ավերված հատվածների փլատակները գոյություն չունեն: Քարերը հավանաբար գործածվել են թուրքական սահմանապահ մոտակա գործառնալ կառուցելու ժամանակ (նկ. 13, 14):

45 Կարապետյան Ս., Հռոմոսի վանական համալիրի վիմագրական ժառանգությունը, «Վարձք», 2021, № 16, էջ 12-13:

46 Զարյան Ա., նշվ. աշխ., էջ 125:

47 Նույն տեղում:



Նկ. 13 Հոռոմոսի ծխականաձուղը հարավ-արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

Նկ. 14 Հոռոմոսի ծխականաձուղը հարավ-արևելքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2008 թ.)

Նկ. 15 Հոռոմոսի վանքի արբանյակային լուսանկարը (լուս.՝ Google Earth-ի, 2014 թ.)

2014 թ.՝ մեր՝ ՀՃՈՒ արշավախմբի այցելության ժամանակ, հնարավորություն ունեցանք չափագրելու ծխականաձուղի հատակագիծը, իսկ ուղղաձիգ նիշերի չափագրում, ցավոք, չկարողացանք կատարել: Շինության դիրքը հատուկ է ընտրված. այն գտնվում է Հոռոմոսի Վերին և Ներքին վանքերի առանցքի վրա՝ հարթավայրի եզրին՝ Ախուրյանի կիրճի ձորապռնկին (նկ. 15): Այդտեղից հրաշալի տեսարան է բացվում դեպի Ախուրյան գետի հովիտը, որտեղ էլ գտնվում են Հոռոմոսի զույգ վանքերը:

Ծխականաձուղն արտաքուստ եռանկարդակ, ներքուստ՝ եռահարկ կառույց է (հարկերի և մակարդակների միջերը միմյանց չեն համապատասխանում), որի առաջին հարկն ուղղանկյուն հատակագծով (արտաքին չափերը՝ 3,67 x 3,74 մ), միմյանցից 4,26 մ հեռավորությամբ, հյուսիս-հարավ լայնական առանցքով երկու աշտարակ է: Դրանք վերնամասում միացված են կիսաշրջան կամարակապ թաղով: Առաջին մակարդակն արտաքուստ ավարտվում է հորիզոնական քիվագոտիով: Հյուսիսային աշտարակն առաջին հարկում ներքուստ լցված է կրաշաղախի զանգվածեղ միջուկով, իսկ հարավային աշտարակի ներսում միանալով մատուռ է՝ արևելյան կիսաշրջան խորանով, որի մասին Երզնկյանը նշում է. «Սորա մեջ՝ թե՛ վերևը և թե՛ ներքևը խորաններ կան»⁴⁸: Հարավային աշտարակի մուտքը

բացված է հարավային պատի արևմտյան եզրից, որը մտնում է միանալով մատուռի մեջ: Վերջինիս հյուսիսային պատին կից՝ հավանաբար կոնսոլային աստիճաններով բարձրացել են թաղի արևմտյան եզրին գտնվող մուտք, որը բացվում է միջանկյալ, արտաքուստ չերևացող երկրորդ հարկի հատակի մեջ (առաջին և երկրորդ հարկերը զետեղված են արտաքուստ առաջին մակարդակի ծավալի մեջ):

Երկրորդ հարկում՝ հյուսիսային և հարավային աշտարակների վերին կեսում, ներքուստ տեղավորված, ուղղանկյուն հատակագծով մեկական սենյակ է: Դրանցից հարավայինը որպես անցում է ծառայում դեպի երրորդ հարկի գմբեթավոր մատուռներ, իսկ հյուսիսայինը՝ միայն նկուղային սենյակ՝ գմբեթավոր մատուռի տակ: Սենյակների անկյուններից սկսվող, ծխականաձուղի կամարակապ թաղի վրա՝ արևմտյան պատին կից տեղադրված քարե աստիճանները բարձրանում են շինության երկրորդ մակարդակ՝ երրորդ հարկում տեղադրված գմբեթավոր մատուռների հատակների միջը:

Երրորդ հարկում կան աշտարակների վրա տեղադրված, արտաքուստ ուղղանկյուն հատակագծով, ներքուստ խաչաձև, արևելյան կիսաշրջան խորանով, գմբեթավոր, սիմետրիկ դասավորությամբ երկու փոքրիկ մատուռներ (արտաքին չափերը՝ 3,60 x 2,67 մ): Դրանց միակ մուտքերը բացված են միմյանց հանդիպակաց երկայնական պատերից, որոնք կից են երկրորդ հարկի սենյակներ

48 Երզնկեան Գ., նշվ. հոդվ., էջ 230:



Նկ. 16 Հոռոմոսի ծխականարի արևմտյան ճակատի խաչքարը (լուս.՝ անհայտ հեղինակի, Ժան-Միշել Թիերրիի արխիվ)

Նկ. 17 խաչքար Ամիուն (լուս.՝ Ն. Մառի, 1900-ական թթ.)

Նկ. 18 Անիի Մայր տաճարի արևմտյան ճակատի խաչքարը (լուս.՝ Պ. Տոմապետյանի, 2013 թ.)

Նկ. 19 Անիի մերձակայքում գտնվող Կարմիր վանքի եկեղեցու արևմտյան ճակատի խաչքարը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2008 թ.)

իջնող աստիճաններին: Մատուռների խաչաձև, երկլանջ տանիքները և գմբեթի անկյունային տուժքաներն ամփոփվել են հարթ ծածկասալերով, իսկ կլոր թմբուկով գմբեթները՝ կոնաձև վեղարներով, որոնք շարված են եղել ուղղանկյուն ատամնավոր ծածկասալերով: Արխիվային լուսանկարներում նկատելի են գմբեթների անկյունային տուժքաների

մնացորդները: Երրորդ հարկի մատուռների գմբեթները կազմում են կառույցի երրորդ մակարդակը:

Դեկորատիվ հարդարանքի միակ տարր կարելի է համարել հարավային աշտարակի արևմտյան ճակատի վերին հատվածում տեղադրված խաչքարը (Ժ-ԺԱ դդ.): Այն մշակված է կամարակալ շրջանակի մեջ ներառված և կենաց ծառից սկիզբ




Նկ. 20 Հոռոմոսի Վերին վանքն արևելքից (լուս.՝ անհայտ հեղինակի)

Նկ. 21 Հոռոմոսի Վերին վանքի հարավային գմբեթավոր մատուռը (լուս.՝ Ա. Թամանյանի թանգարանի արխիվ)

Նկ. 22 Տեղերի վանքը հարավ-արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2014 թ.)

Նկ. 23 Եղիպատրուշի վանքը հյուսիս-արևելքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2009 թ.)



ՊՇ. 1 Զոռոմոսի ծխակամարի վերակազմությունը (հեղ.՝ Ա. Զակոբյան (ԶՃՈՒ), 2015 թ.)

առնող, եռաբողբոջներով ավարտվող երկնյուղ թևերով մեծադիր պարզաոճ խաչաքանդակով (նկ. 16): Նմանօրինակ խաչքարեր հանդիպում են Անի մայրաքաղաքում (նկ. 17), Մայր տաճարի (նկ. 18) և Կարմիր վանքի եկեղեցու արևմտյան ճակատներին (նկ. 19):

Ծխակամարի վերին հարկի՝ զույգ մատուռներով հորինվածքը հետագայում՝ ԺԲ-ԺԳ դդ., կիրառվել է Հոռոմոսի Վերին վանքում՝ Սբ. Հովհան-

նես գլխավոր եկեղեցու երկու կողմերի դամբարանների երկրորդ հարկերում (նկ. 20, 21), ինչպես նաև Տեղերի վանքի գավթի տանիքի արևմտյան (նկ. 22) և Եղիապատրուշի վանքի գավթի արևելյան եզրերին (նկ. 23): Ի տարբերություն Հոռոմոսի և Տեղերի վանքերի մատուռների բարձր թմբուկների՝ ծխակամարի թմբուկներն ավելի ցածր են:

Ինչպես վերն արդեն նշեցինք, ծխակամարի հյուսիսային աշտարակի հյուսիսային պատի ստո-





Նկ. 24 Հռոմոսի ծխականամարն արևմուտքից: Նկ. 25 Ծխականամարի արևմտյան ճակատի խաչքարը: Նկ. 26 Ծխականամարը հարավ-արևելքից: Նկ. 27 Ծխականամարը վերևից: Նկ. 28 Ծխականամարի առաջին հարկի հորիզոնական հատույթը: Նկ. 29 Ծխականամարի երկրորդ հարկի հորիզոնական հատույթը (եռաչափ մոդելավորումը՝ Պ. Ֆրանգյանի (ՀՃՈՒ), 2025 թ.)

րին շարքերում փորագրված է եղել 1102 թ. արձանագրություն: Հիմք ընդունելով գմբեթների ցածր թմբուկները և վեղարների ուղղանկյուն ատամնավոր ծածկասալերը, քիվերի լուծումները, 1102 թ. արձանագրության առկայությունը, ինչպես նաև արևմտյան ճակատի՝ Ժ-ԺԱ դարերին բնորոշ խաչքարը՝ կարծում ենք, որ Հռոմոսի ծխականամարը կառուցվել է Ժ-ԺԱ դարերում՝ Բագրատունյաց տիրապետության ծաղկուն ժամանակաշրջանում:

Նշենք, որ հատակագծային չափերի և արխիվային լուսանկարների հիման վրա կարողացանք ստեղծել ծխականամարի վերակազմության գծագիրը (գծ. 1): Ըստ այդմ՝ առաջին հարկն ունի մեկ աստիճանից կազմված 0,3 մ բարձրությամբ գետնախարիսխ: Առաջին մակարդակի բարձրությունը՝ առաջին և երկրորդ ներքին հարկերը միասին, կազմում է 7,19 մ, իսկ երրորդ հարկի գմբեթավոր մատուռներինը մինչև գմբեթների խնձորակների գագաթը՝ 7,37 մ: Ծխականամարի ամբողջ բարձրությունը 14,86 մ է: Հարավային աշտարակի ներսի առաջին հարկի մատուռի բարձրությունը 3,89 մ է, իսկ երկրորդ հարկի սենյակներինը՝ 2,77 մ: Երրորդ հարկի գմբեթավոր մատուռների հատակից մինչև գմբեթատակ քիվը 3,89 մ է, իսկ գմբեթի բարձրությունը՝ 2,27 մ: Հարավային աշտարակի առաջին հարկի մատուռի հյուսիսային պատի 9 կոնսոլային աստիճանների

հաջորդում է 3 աստիճան՝ առաստաղի արևմտյան եզրին բացված մուտքին կից, որոնք միասին կազմում են Ալիշանի նշած 12 աստիճանները: Երկրորդ հարկի սենյակները, ըստ պահպանված հատվածների, հիմքում ավելի փոքր են, քան վերին կեսում: Երկրորդ հարկի սենյակի պատին կից 8 աստիճանները բարձրանում են դեպի երրորդ հարկի գմբեթավոր մատուռներ:

Ծխականամարը կառուցվել է կարմիր և մուգ դարչնագույն տուֆի՝ արտաքուստ և ներքուստ սրբատաշ շարվածքով՝ բացառությամբ երկրորդ հարկի սենյակների, որոնց ներքին պատերն ունեն անմշակ քարերի կոպտատաշ շարվածք: Ի տարբերություն արտաքին հարուստ քիվագոտիների՝ ներքին քիվերն ավելի պարզ ոճի են: Առաջին և երրորդ հարկերի մատուռների խորաններում առկա են ցածր բեմեր: Առաջին հարկի մատուռը լուսամուտ չունի, նույնիսկ՝ խորանից բացված, իսկ երրորդ հարկի յուրաքանչյուր մատուռ լուսավորված է եղել արևելյան և արևմտյան պատերից բացված կամարակապ մեկական, ինչպես նաև գմբեթի թմբուկից բացված երկուական փոքրիկ լուսամուտով: Հարավային աշտարակի արևմտյան ճակատի խաչքարը տեղադրված է այնպես, որ հարավային գմբեթավոր մատուռի կենտրոնական առանցքը և խաչքարի հյուսիսային եզրը մեկ գիծ են կազմում:



Նկ. 30 Հռոմոսի ծխականմարի երրորդ հարկի հորիզոնական հատույթը: Նկ. 31 Ծխականմարի լայնական կտրվածքը դեպի արևելք: Նկ. 32 Ծխականմարի հարավային աշտարակի առաջին հարկի ներքին տեսքը դեպի արևելք: Նկ. 33 Ծխականմարի հարավային աշտարակի առաջին հարկի ներքին տեսքը դեպի արևմուտք (եռաչափ մոդելավորումը՝ Պ. Ֆրանգյանի, 2025 թ.)



Վերջում նշենք, որ վերակազմության գծագրերի և հիմնականում արխիվային լուսանկարների հիման վրա ՀՃՈՒ հիմնադրամի աշխատակից Պարգև Ֆրանգյանը ստեղծել է Հռոմոսի ծխականմարի եռաչափ մոդելը, որի շնորհիվ առավել պատկերավոր դարձան այս բացառիկ կառույցի ծավալային և հորինվածքային առանձնահատկությունները (նկ. 24-37):



Նկ. 34 Հռոմոսի ծխականմարի հարավային աշտարակի երկրորդ հարկի ներքին տեսքը դեպի հյուսիս: Նկ. 35 Ծխականմարի երրորդ հարկի հյուսիսային մատուռը հարավից: Նկ. 36 Ծխականմարի երրորդ հարկի հարավային մատուռի ներքին տեսքը դեպի արևելք: Նկ. 37 Ծխականմարի երրորդ հարկի հարավային մատուռի ներքին տեսքը (եռաչափ մոդելավորումը՝ Պ. Ֆրանգյանի, 2025 թ.)

ՍԱՐԻԿԻ ԱՄՐՈՅԸ

Գագիկ Սարգսյան



Ամրոցի արևմտյան ճակատի ընդհանուր տեսքը (լուս.՝ հոդվածագրի, 2011 թ.)

Տեղադրություն. գտնվում է Արցախի Հանրության շրջանի Հայկական (Սիրիկ) գյուղից 2,1 կմ արևմուտք (39.486554, 46.852255, ծ. մ.՝ 1584 մ)՝ Սարիկ գետակի հոսանքով վեր՝ ձախափնյա զգալի թեքությամբ լանջեր ունեցող ժայռազագաթին:

Անվանում. հայտնի է նաև Սիրիկ ձևով:

Պատմություն. պատմության ելեջներում ամրոցի դերակատարության մասին տեղեկություններ հայտնի չեն: Սակայն նկատի ունենալով բնությունից պաշտպանական հարմարություններով լիովին օժտված տեղանքը և պահպանված շինությունների ճարտարապետական առանձնահատկությունները (վերգետնյա խեցեղեն չի հայտնաբերվել)՝ կարող ենք նախնականորեն ասել, որ այն իր նշանակությանը ծառայել է թերևս Թ՝ դարից մինչև ԺԳ դարը:

Ամրոցը բաղկացած է պարսպից, աշտարակներից և ջրավազանից: Այն հայտնաբերել և ուսումնասիրել է 2011 թ. մեր՝ Արցախի հնագիտական արշավախումբն իմ ղեկավարությամբ:

Հնագիտական նկարագրություն. կառուցված է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ձգվող, նրստվածքային ապարներից կազմված լեռնաբազուկի՝ սրածայր ցից ժայռերով պսակված արևելյան՝ ամենաբարձր և նեղ ու ժայռոտ կետում (ի դեպ, ամրոցի տեղանքն ունի միջնադարյան բերդերին բնորոշ ամենաբարձր հատկանիշները՝ դժվարամատչելիություն, ջրի առկայություն, կարևոր անցքի վրա՝ ձոր՝ ճանապարհ, հսկողություն):

Մեր ուսումնասիրության ժամանակ ամրոցն արդեն խիստ ավերված էր. պահպանվում էին եզրային երկու՝ հիմնական՝ արևմտյան ստորին և բարձրադիր՝ արևելյան, նեղ ու երկար հատվածները:

Միջնամասը չի պահպանվել. կործանվել է ժայռագծի վերին հատվածի փլուզման հետևանքով: Վերջինս հավանաբար պայմանավորված է ժայռագծի բնական էրոզիայով և ուժեղ երկրաշարժով, որի պատճառով ամրոցը երկատվել է: Երկու հատվածների միջև առաջացել է մոտ 12 մ երկարությամբ և 10 մ խորությամբ փլուզում և իր հետ անհետացրել նաև ամրոցի կենտրոնական մասը: Այս ամենի հետևանքով երկու հատվածների միջև առկա է դժվարանցանելի ժայռոտ իջվածք, իսկ բարձրության նիշերի տարբերությունը կազմում է մոտ 5 մ:

Արևմտյան ստորին հատվածը տեղակայված է համեմատաբար հարթ մակերեսի վրա: Այստեղ պահպանվել է մոտ 4–5 մ բարձրությամբ ճակատային արևմտյան պարիսպը՝ շուրջ 35 մ երկարությամբ: Այն գրեթե ուղղաձիգ ձգվում է հյուսիս-արևելք՝ հարավ-արևմուտք ուղղությամբ և ունի ծավալից դուրս եկող երեք սնամեջ և քարուկիր աշտարակներ, որոնք տեղադրված են եզրերում և միջնամասում: Կենտրոնական կիսակլոր աշտարակը ճակատային պարսպագիծը բաժանում է երկու հավասար հատվածների:

Ճակատային պարսպի դիմաց տարածվում է քիչ թեքություն ունեցող հրապարակ: Պարսպի հյու-



Ամրոցի մեծ աշտարակը հեմապատով, արևմտյան ճակատի հարավային աշտարակը, երկու հատվածների միջև առաջացած փլուզվածքը և մեծ աշտարակն արևմուտքից (լուս.՝ հոդվածագրի, 2011 թ.)

սիսային մասում պահպանվել է մոտ 2 մ լայնությամբ գլխավոր մուտքի կամարակապ բացվածքը, որը հետագայում փակվել է անկանոն շարված հողածեփ պատով: Պարսպի ներսում մուտքը բացվում է ուղղանկյուն նախասենյակի մեջ, իսկ հարավային և հյուսիսային կողմերի փլատակներում նկատվում են այլ սենյակների պատերի մնացորդներ: Ճակատային պարսպի հյուսիսային անկյունային աշտարակը կցված է ուղղահայաց, պատաման կտրած ժայռին, որը, ամենայն հավանականությամբ, պաշտպանական պարսպի դեր է կատարել: Հարավային կողմում անկյունային աշտարակից թեքվող պարսպից, ինչպես նաև հարակից շինություններից գրեթե ոչինչ չի պահպանվել, քանի որ փլուզումը հասել է գրեթե մինչև հարավային աշտարակը:

Երկրորդ՝ բարձրադիր հատվածի շինությունները գտնվում են արևմտյան ստորին հատվածի հյուսիսային աշտարակից մոտ 50 մ հեռավորության և շուրջ 5-6 մ ավելի բարձր նիշով ձգվող նեղ ու երկար ժայռային ելուստի վրա: Այստեղ՝ փլուզվածքի հարավային եզրի ամենաբարձր կետում, կանգուն է մեծ ու հզոր աշտարակ-դիտակետը: Աշտարակի հիմքն ուղղանկյուն է, իսկ մոտ 6-7 մ բարձրությամբ պահպանված վերնամասը սնամեջ է՝ կլոր, կոնաձև շարվածքով: Ուշագրավ է, որ աշտարակը կառուցված է բարձրադիր հատվածի ամենանեղ՝ մոտ 7 մ լայնությամբ ժայռագծի վրա, և նրա ուղղանկյուն

հիմնամասն ամրացնելու նպատակով ցից ժայռի ստորոտից՝ մոտ 10 մ ներքև, շարված է ուղղահայաց հեմապատ: Բարձրադիր հատվածն ընդհանուր առմամբ վատ է պահպանվել: Նրա երկարությունը կազմում է մոտ 15-17 մ, իսկ լայնությունը՝ մինչև 10 մ: Այն երկու կողմերից շրջապատված է եղել պարիսպներով: Համեմատաբար լավ է պահպանվել հյուսիսային պարսպագծի միջնամասը՝ երկու կիսաբոլորակ աշտարակներով: Հարավային կողմում պահպանվել է պարսպի միայն մի հատված:

Տարածքի մակերեսին նկատվում են առանձին փլատակված պատեր, ինչպես նաև մոտ 3-5 մ չափերով, ամուր պատերով շարված ուղղանկյուն կառույց, որը հավանաբար ծառայել է որպես ջրամբար:


Ակնհայտ է, որ արևմտյան ստորին և բարձրադիր արևելյան հատվածները սկզբնապես ներառված են եղել մեկ միասնական պարսպագծի մեջ:

Ամրոցի բոլոր շինությունները կառուցված են տեղական, միջին չափի ճեղքած, անմշակ կրաքարով՝ կրաշաղախի համադրությամբ, և արտաքուստ սլաղված են եղել կրածեփով: Պահպանված պարիսպների և շինությունների ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 170 մ, իսկ առավելագույն լայնությունը՝ շուրջ 35 մ:

Մարիկի ամրոցը թողնում է սահմանային պահակային հենակետի և միաժամանակ ամրացված



Ամրոցի կենտրոնական բարձրադիր և արևմտյան ստորին հատվածները (լուս.՝ հոդվածագրի, 2011 թ.)



Ամրոցի պահպանված շինությունների հատակագիծը (չափ.՝ հոդվածագրի, 2011 թ.)

իշխանական դոլակի տպավորություն: Այն ուղիղ տեսողական կապ է ունեցել Արցախի հարավային ուղղությունը փակող և ռազմավարական կարևոր դիրք զբաղեցնող Բերդաբար (Ջրաբերդ–Մյուլքու-

դարա) ամրոցի հետ և որպես պահուստային հենակետ՝ կարող էր ներգրավվել հարավից սպառնացող վտանգների չեզոքացման գործում:

«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԹԱՀՄԱԶՂՈՒԼՈՒԻ» ՆՈՐԱՀԱՅՏ ՁԵՌԱԳԻՐԸ

Բաֆֆի Բորթոշյան



Կազմված գիրքը և ձեռագիր երրորդ օրինակի ներածության էջը (լուս.՝ հոդվածագրի, 2017 թ.)

2017 թ. Թեհրանի Արտակ արք. Մանուկյանի անվան հայոց ազգային-ազգագրական թանգարանի ֆոնդապահոցի¹ մեզ հաջողվեց հայտնաբերել Թամբուրի Հարությունի² «Պատմություն Թահմազղուլուի» աշխատության³ ձեռագրի երրորդ տարբերակը:

1 Թանգարանում ուսումնասիրություններ կարողացել ենք կատարել՝ շնորհիվ Թեհրանի ազգային մարմինների թույլտվության և Իրանի պատմական եկեղեցիների կենտրոնի տնօրեն Շերի Ավետյանի հրավերի:

2 Հեղինակի անվանումն այս օրինակում Թամբուրի Յարութին է, Վենետիկի օրինակում՝ Թամբուրի Արութին, Թամբուրի Քուչիկ Յարութին (Դահմազղուլու խանըն թվարիքի, Վենետիկ, 1800, էջ 3, 27-28), Մատենադարանի օրինակում (№ 2722 ձեռագիր, թերթ 36-53)՝ Թամբուրի Քուչուկ Յարութին (Խորխորունի Մ., Բյուշուք Արութին. Պատմություն Թահմազ Դուլու, «Գիտական նյութերի ժողովածու», 1941, № 1, էջ 108 (բնօրինակում, էջ 40բ): Նա ԺԸ դարի առաջին կեսի հայ երաժիշտ, սազանդար-աշուղ, թամբուրահար, երգիչ, տեսաբան և մանկավարժ է: 1730-ական թթ., որպես կատարող-երաժիշտ, ծառայել է սուլթան Մահմուդ Ա-ի (1730-1756) պալատում: 1735 թ. Օսմանյան կայսրության մեծ վեզիր Մուստաֆա փաշայի շքանքի կազմում այցելել է Իրան: Երկու տարի ծառայել է Նադիր շահին՝ վերջինիս՝ Հնդկաստան արշավանքների տարիներին: Այստեղ էլ շարադրել է «Պատմություն Թահմազղուլուի» և «Արևելյան երաժշտության ձեռնարկ» աշխատությունները (Այվազեան Ա., Շար հայ կենսագրության, հ. Ա, Կ. Պոլիս, 1893, էջ 120: Հայկական սովետական հանրագիտարան, հ. 4, Երևան, 1978, էջ 135):

3 Ձեռագրում նշված դեպքերի՝ 1735-1740 թթ. ականատեսն է Թամբուրի Հարությունը: Նա 1735 թ. ուղեկցել է Մուսթաֆա փաշային՝ Նադիր շահի արքունիքում Օսմանյան դեսպանին, շարունակել ծառայությունը Մուսթաֆա փաշայի հեռանալուց հետո: 5 տարի ծառայելով՝ Կ. Պոլիս է վերադարձել 1740 թ. (Yacoub Artin Pacha, Journal de Tambouri Aroutine sur la conquête de l'Inde par Nadir

Առաջինը, որը Վենետիկում է, հայատառ օսմաներենով հրատարակվել է 1800 թ.⁴, իսկ Մատենադարանում գտնվող աշխատության՝ հայտնի երկրորդ օրինակի հայերեն թարգմանությունը կատարվել է 1941 թ. Մ. Խորխորունու աշխատասիրությամբ⁵:

Անհայտ գրչի՝ Թամբուրի Հարությունից լսած⁶ և հայատառ օսմաներենով գրի առած ԺԸ դարի այս ձեռագիրը միևնույն կազմի մեջ ամրացված է նույն դարի⁷ տպագիր մի Ավետարանի վերջում: Համաձայն կազմի վրա թողնված 1943 թ. հետագա հիշատակության՝ Ավետարանն Էրզրումից բերվել է Թավրիզ, հետո՝ Ռաշտ. «Յիշատակ գրեց Ս. Ն. 1943 թի. փետրվար 19-ին: Էրզրում, Թավրիզ, Ռեշտ»⁸:

Schah (Tahmas Kouly Schah) 1735-1740, "Bulletin de l'institut égyptien", tome VIII, 1914, p. 170):


4 Ֆրանսերենով լույս է տեսել 1914 թ.՝ Bulletin de l'institut égyptien, tome VIII, 1914, pp. 174-232. Թարգմանությունը կատարել է Հակոբ Արքինը:

5 Ըստ Մ. Խորխորունու՝ դժվար թե ձեռագիրը (խոսքը Մատենադարանի օրինակի մասին է) հեղինակի՝ Թամբուրի Հարությունի ինքնագիրը լինի, որովհետև այն արտագրված է 1797 թ.՝ հեղինակի նկարագրած դեպքերից 62 տարի անց, իսկ ձեռագրի սկզբի մասում միևնույն գրչի կողմից արտագրված է մեկ այլ աշխատություն (Խորխորունի Մ., նշվ. հոդվ., էջ 128):

6 Այդ մասին նշել է անհայտ գրիչը (տե՛ս էջ 18):

7 Տիտղոսաթերթը պղծված է, հետևաբար տպագրման տարեթիվն անհայտ է:

8 Ձեռագրի մասին առաջին անգամ հրապարակել ենք 2021 թ. (Բորթոշյան Բ., Արտակ արք. Մանուկյանի անվան Թեհրանի հայոց ազգային-ազգագրական թանգարանի հավաքածուն, Երևան, 2021, էջ 66):



Ձեռագրի 2-րդ և 3-րդ էջերը (լուս.՝ հոդվածագրի, 2017 թ.)

Թամբուրի Հարությունի աշխատության այս տարբերակն ունեցել է 39 թերթ՝ 1-78-ը համարակալված էջերով: Մեզ է հասել 37 թերթ (պակասում է 2 թերթ՝ 19-20 և 29-30 էջերը): Ձեռագիրն անավարտ է: Հաշվի առնելով հայտնի տարբերակների հետ առկա տարբերությունները՝ հարկ ենք համարում ներկայացնել նորահայտ ձեռագրի բնօրինակը, քարզմանությունը և համեմատական բնութագիրը մյուս երկու օրինակների հետ:

Անհրաժեշտ է նշել, որ ի տարբերություն այս ձեռագրի՝ Մատենադարանի օրինակն ունի վերնագիր՝ «Թեվայրիխի Թահմագուլու»⁹ և բաժանված է 14 գլուխների, իսկ Վենետիկի օրինակը վերնագրված է «Դահմասգուլու խանըն թեվարիքի»¹⁰ և ունի 3 բաժին:

Խնդրո առարկա մեր տարբերակը վերնագրված չէ, այն սկսվում է անհայտ գրչի ավելացրած ներածությամբ և չունի հստակ բաժանումներ: Վերջինս, ըստ իր հաղորդած տեղեկության, պատմությունը լսել է Թամբուրի Հարությունից:

Նշենք, որ երեք տարբերակների միջև առկա են բազմաթիվ տարբերություններ (հատկապես առանձնանում է նորահայտ ձեռագիրը, մինչդեռ հայտնի երկու օրինակները հիմնականում նույնական են), օրինակ՝ շարադրանքի, դեպքերի հերթականության, նախադասությունների կազմվածքի, օգտագործված բառերի: Որոշ մասերում կան նաև բաց թողնված հատվածներ: Նշվածներին անդրադարձել ենք համապատասխան տեղերում¹¹:

9 Թարգ.՝ Պատմություն Թահմագուլուի:

10 Թարգ.՝ Թահմագուլու խանի պատմությունը:

11 Համեմատականները կատարելիս ներկայացրել ենք միայն կարևոր տարբերությունները: Այստեղ կարևոր ենք համարում

Թարգմանություն

Շահ Թահմագի պատմությունը ներկայացնում է ճեզ: Ցանկանում են նկարագրել, թե ինչպիսին է եղել նա: Մի քիչ լսեք, քանի որ մենք էլ նույնպես հանդիպեցինք մի խելացի և վարպետ մարդու, որը Շահ Թահմագի գլխավոր նվագաժամ էր: Այն բոլոր երկրները, որ շահը գնում էր, նա էլ նրա հետ էր գնում: Այնպիսի գիտակ և խելացի մեկն էր, որ ինչ արել է ամբողջ տարին, տեսրակում ամբողջությամբ գրել է և մտքում պահել: Եվ քանի որ տեսանք, որ նրա խոսքը հավաստի է, ապա գրեցինք¹²: Սակայն Շահ Թահմագի արմատների մասին ավելի հին տեղեկությունները՝ մանկությունից մինչև շահ լինելը, այս վարպետին՝ Թամբուրի Հարությունին, պատմել է Շահ Թահմագի *հորեղբայրը*¹³: Նա էլ մեզ պատմեց, իսկ մենք գրեցինք: Հիմա մեզ լսող ընկերներին ասենք, և մի քիչ լսեք: Աշխարհն այսպես է եղել, այսպես էլ կզմա¹⁴:

շեշտել, որ Թամբուրի Հարությունի պատմությունն անհրաժեշտ է նաև համեմատել Նադիր շահի գլխավոր քարտուղար Միրզա Մեհդի խանի «Նադիր շահի պատերազմների պատմություն» աշխատության պարսկերեն բնօրինակի հետ:

12 Այս ներածությունը չկա Վենետիկի և Մատենադարանի օրինակներում և հաստատում է, որ պատմությունը Թամբուրի Հարությունից լսելով է գրի առնվել:

13 Վենետիկի և Մատենադարանի օրինակներում նշված է «հորեղբոր որդին»: Ներածության մեջ ներկայացված այս տեղեկությունը մյուս երկու օրինակում էլ նշված է այլ հատվածներում: Տե՛ս Դահմասգուլու խանըն թեվարիքի, էջ 63 և *Խորխորունի Մ.*, նշվ. հոդվ., էջ 119 (բնօրինակում, էջ 47բ):

14 Անհայտ գրչի ներածության ավարտը:

1099¹⁵ թվականին¹⁶ Շահ Աբասը¹⁷, **Բաղդադից** դուրս (2) գալով, հարձակվում է օսմանցիների վրա¹⁸: Այդ ժամանակ մեր Սուլթան Մուրադը¹⁹ վերցնում է իր բանակը և հասնում մինչև **Դիարբեքիր**: Հետո Սուլթան Մուրադը նվեր է ուղարկում, և հաշտվում են: Եվ այս **Դիարբեքիրում** մի աղանդ կար՝ շատ դժվար: Փաղիշահը սրանց տալիս է Շահ Աբասին, իսկ Շահ Աբասը սրանց գաղթեցնում է, **Քալաթում**²⁰ տեղավորում, և այդտեղ են մնում²¹: Այս Շահ Թահմազն այդ քրդերից էր, որ ասում են **Դիարբեքիրի** քուրդ, բայց իրականում նրան ասում են **քալաթցի**, քանի որ այդտեղ է մեծացել:

Գանք Շահ Թահմազի պատմությանը: Այս Շահ Թահմազը, երբ 30 տարեկան²² երիտասարդ հողագործ էր, մի խնդիր է ունեցել: Դրա համար գնացել է Սպահան²³ և խնդիրը ներկայացրել: Երկու տարի շարունակ նվերներով է մոտեցել: Նվերը վերցրել են, հյուրասիրել, ասել են՝ կլինի, որոշում են կայացրել, սակայն փափագը չեն կատարել: Մի օր էլ «առանց նվերի է» ասելով՝ ծեծել ու վռնդել են: Երկու տարի այսպես գնում-գալիս է, բայց արդյունքի չի հասնում, և փափագը (3) չի իրականանում:

Շահ դառնալուց հետո ձանձրությանից այս պատմությունն անձամբ էր պատմում իր *դիվանի անդամներին*²⁴ և զինակիցներին, նրանք էլ ամիսը մի քանի անգամ իր ներկայությամբ այս պատմության կրկնությունը բեմադրում էին, իսկ ինքն ասում էր. «Ահավասիկ այս սրիկաների բանն ու գործը միշտ սա է եղել»:

Գանք նրան, որ փափագը չիրականանալուց և ուզածը չստանալուց հետո նեղվում է և սկսում **Խորասանի**²⁵ շրջակայքում գողություն անել, մարդ թալանել, ճանապարհի կտրել և ուղևորներին թույլ չտալ

անցնել²⁶: Լուրը հասնում է **Խորասանի** խանին, թե քո սահմաններում այսպիսի մի ճանապարհի կտրող է երևան եկել, որը մարդ է թալանում և սպանում: Սա էլ մի տասնապետ է ուղարկում: Մի կերպ սրան բռնում, բերում է խանի մոտ: Խանը հարց է տալիս.

– Դո՞ւ ես մարդ թալանողն ու սպանողը:

Թահմազդուլուն չի ժխտում և ասում է.

– Այո՛, իմ խա՛ն, ճիշտ է, ես եմ:

– Սրիկա՛, դու չգիտե՞ս, որ այստեղ խան կա, ի՞նչ հանդգնությամբ ես այդ գործն անում, – շարունակում է խանը:

Երբ սա չի պատասխանում, խանն ասում է.

– Կտրե՛ք սրա վիզը:

(4) Թահմազդուլուն էլ սկսում է աղաչել.

– Ամա՛ն-ամա՛ն, իմ խա՛ն, մի՛ կտրիր իմ վիզը, ինձ մի դժվար գործի՛ դիր, զինվորներիդ հետ մինչև դատաստանի օրը քեզ ծառայություն մատուցեմ: Իմ կեղտոտ արյունը թափելու պատճառ մի՛ եղիր:

Դիվանում գտնվող խաները և բեկերը ևս խնդրում են խանին.

– Այսպիսի մարդու արյան մեջ մի՛ թաթախվիր: Եթե ուզում ես սպանել, մի օր պատերազմի ուղարկիր: Այդտեղ կմեռնի, արանքում դու էլ կազատվես արյան պարտքից:

Այսպիսով, խանը ներում է Թահմազին և մի տասնապետի մոտ նշանակում: Մոտավորապես այսպես է փրկվում նա:

Զինվոր դառնալուց հետո լուր է գալիս, թե ուզեկները մտել են **Խորասան**: Գյուղերի վրա են հարձակվել²⁷, քանի որ նրանց սովորությունը դա էր²⁸: Խանը լսում է և Թահմազի տասնապետին գործուղում ուզեկների դեմ պատերազմի: *Տասնապետն իր հեծյալներով հարձակվում է ուզեկների վրա: Ուզեկները լավ կռվողներ են լինում և սրանց սկսում են նեղել և ստիպում հանձնվել, սակայն այդտեղ Թահմազդուլուն մի հերոսություն է անում, վիրավորվում է և ուզեկներին ստիպում նահանջել*²⁹: Սրա տասնապետը գալիս է և խանին ասում.

15 Վենետիկի և Մատենադարանի օրինակներում պատմությունը սկսվում է Մուսաաֆա փաշայի այցով՝ 1735 թ.:

16 Հիջրի 1099 թ. համապատասխանում է 1687-1688 թթ.: Այն չի համապատասխանում նշված պատմական դեպքերի ժամանակին, ինչպես նաև այդ թվականը չկա մյուս երկու ձեռագիր օրինակներում:

17 Խոսքը պարսից Շահ Աբաս Ա-ի (1587-1629) մասին է:

18 Մեֆյան պետության կողմից Բաղդադի նվաճումը և նշված դեպքերը տեղի են ունեցել 1623-1624 թթ.:

19 Խոսքն օսմանյան սուլթան Մուրադ Գ-ի (1623-1640) մասին է:

20 Քալաթ կամ Կալաթ (کلات). քաղաք Իրանի Իսլամական Հանրապետության Ռազավի Խորասան նահանգում (36.995158, 59.767443):

21 Վենետիկի և Մատենադարանի օրինակներում շեղագիր հատվածի փոխարեն նշված է. «...մինչև Ստամբուլում նորին մեծություն Սուլթան Մուրադը պատրաստվում էր, Շահ Աբասը Դիարբեքիրի շրջակա գյուղերի բնակիչներին քշում է դեպի Քալաթ»:

22 Մյուս երկու օրինակում 30 տարեկանը չի հիշատակվում: Հաշվի առնելով, որ նա ծնվել է 1688 թ., նշված դեպքերը տեղի են ունեցել 1710-ական թթ. երկրորդ կեսին:

23 Սպահան կամ Ասպահան (اصفهان). քաղաք Իրանի համանուն նահանգի կենտրոնը (32.658216, 51.672005):

24 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է «կրկնօրինակողներին»:

25 Խորասան (خراسان). երկրամաս Իրանի հյուսիս-արևելքում, այժմ ընդգրկում է 3 նահանգ՝ Հյուսիսային, Ռազավի և Հարավային Խորասաններ:

26 Մյուս երկու օրինակում նշված է նաև, որ մեն-մենակ է արել այս բոլորը:

27 Ուզեկ Ուրգենջ Շիր խանի հայտնի ներխուժումը Հյուսիսային Խորասան տեղի է ունեցել 1717 թ. (Encyclopedia Iranica, Editor Yarshater E., vol. XVI, Fascicle 6, Encyclopedi-Khorasan XIV, Ghahreghlou K., Khorasan. X. History in the Safavid and Afsharid Period, Leiden, 2020, p. 654), որին մախթուդ ժամանակներում եղել են նաև այլ ներխուժումներ:

28 Մյուս երկու օրինակում նշված է նաև, որ Խորասանի շրջակա և հարևան ուզեկական գյուղերի միջև իրար վրա հարձակվելու սովորություն է եղել:

29 Վենետիկի օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է. «Խանն այսպիսի ժամանակներում մարդ էր նշանակում և այս անգամ նշանակում է Թահմազդուլուն տասնապետին՝ ուզեկների դեմ պատերազմելու: Սրանք՝ 10 հոգի, իսկ ուզեկները՝ 4-5 հոգի: Այդտեղ Թահմազդուլուն մի հերոսություն է անում և ուզեկներին ցիրուցան անում»: Իսկ Մատենադարանի օրինակում նշված է. «Խանը կարգադրում է այն տասնապետին, որի տասնյակի մեջ է լինում Թահմազդուլուն: Գնում է, կռվում: Եվ այդ կռվում Թահմազդուլուն քաջություն է ցույց տալիս: Ուզեկները լինում են 4-5 հոգի, իսկ սրանք 10 հոգով հույս են տալիս ու ուզեկներին ցրում»:

– Իմ խա՛ն, այս երիտասարդը, որի կյանքը բաշխեցիր, մեծ քաջություն ցույց տվեց: (5)

Խանը գոհ մնալով Թահմազին տասնապետի աստիճանի է բարձրացնում: Մերթ ընդ մերթ, երբ ուզեցները գյուղերի վրա են հարձակվում, նրանց դեմ նրան էր ուղարկում: Սա էլ գնում էր ու երեսը պարզ անում: *Խանն էլ տեսնելով, որ նրան որտեղ ծառայության էր ուղարկում, մեկին հինգով էր իրականացնում, նրան հազարապետ է նշանակում: Ապա տեսնելով, որ ծառայության մեջ շատ հավատարիմ է, նրան նշանակում է էշիկադասը*³⁰, այսինքն՝ քափուջուրաշը³¹:

Օրերից մի օր էլ, երբ խանն իր սենյակում մեռնակ գիրք էր կարդում, Թահմազը, *դռնապաններին դուրս հանելով*³², ներս է մտնում և ընկնում խանի ոտքը: Խանը հարցնում է.

– Ի՞նչ կա, որդի՛:

– Աստծու հրամանով քո աղջկա ձեռքն եմ խնդրում, – ասում է սա:

– Տալիս եմ, – պատասխանում է խանն առանց տատանվելու:

Թահմազություն դառնում է խանի փեսա:

Որոշ ժամանակ անց Մյուրվեհիզը³³ **Քանդահարից**³⁴ հարձակվում է և **Ֆերահը**³⁵ գրավում: Ավելի առաջանալով՝ գրավում է **Հերաթը**³⁶, այնտեղից էլ առաջանալով՝ գալիս է **Խորասանի** վրա, բայց ոչինչ անել չի կարողանում, որովհետև Թահմազություն աներոջ և **Խորասանի** զորքի հետ միասին փախցնում է Մյուրվեհիզին: Այդ ժամանակ Մյուրվեհիզը **Խորասանի** խանին ասում է.

– Հասնեմ, **Սպահանը** գրավեմ, և դուք այդ ժամանակ ինքներդ ինձ կաղաչեք:

Սրանք էլ (6) բշտում են Մյուրվեհիզին և ասում.

– Ինչ որ ձեռքիցդ կգա, արա՛:

Նա էլ զորքը վերցնում է և **Սպահանը** գրավում³⁷, սակայն սրա նախարարապետը Միրի Մահմուդ³⁸

անունով մեկն է լինում: Հերոսությունը սա է անում և **Սպահանը** գրավում³⁹:

Բռնում է Շահ Հյուսեինին⁴⁰, որը 34 զավակ ուներ, 27-ին սրախողխող է անում շահի աչքի առաջ, հետո նրան էլ է սպանում⁴¹: *Ապա 11 օր անց*⁴² *ինքն էլ է սատկում*⁴³, և Միրի Մահմուդը շահ է դառնում և նրատուն նրա տեղը: Հետո Միրի Մահմուդը խելագարվում է. գիժ է լինում և իր ուսից մինչև դաստակն ուտում էր: Միրի Մահմուդի նախարարապետ Շահ Էշրեֆն⁴⁴ էլ տեսնելով, որ սա անհույս է, Մահմուդի գլուխը կտրում է և ինքն էլ շահ դառնում: Սկսում է շահի՝ ողջ մնացած 7 զավակներին *փնտրել*⁴⁵, իսկ իմաստուն դայակները, նրանց փախցնելով, թաքցնում են *հեռու մի տեղ*⁴⁶: Հետո աֆղաններն են գալիս և սկսում են օսմանցիների դեմ պատերազմել, ջարդում են և ջարդվում⁴⁷: Ինչ երկարացնենք, մեզ հարկավոր է Թահմազությունի՝ շահ դառնալու պատմությունը:

Հետո Թահմազություն ասում է ամերոջը.

– Մեզ համար մահ է գրված, որովհետև մեր շահին աֆղանները սպանեցին, մեր երկիրը գրավեցին: (7) Որոշ ժամանակ անց կգան, մեզ էլ կգրավեն: Ճիշտ ժամանակը հիմա է, ե՛լ, նրա վրա հարձակվիր:

– Մեր զինվորները քիչ են, նրանք՝ շատ, ինչպե՞ս պետք է անել, – պատասխանում է խանը:

– Իմ խա՛ն, աստված եթե տա, քչին-շատին չի մայի, կտա՞⁴⁸, – ասում է Թահմազություն:

Հետո⁴⁹ Թահմազություն և խանը, վերցնելով **Խորասանի** զորքը, դուրս են գալիս, քաղաք առ քաղաք պատերազմելով՝ նվաճում են: Աֆղան զինվորներին ցրիվ տալով և կոտորելով՝ հասնում են **Սպահան**⁵⁰: *Շահ Էշրեֆն էլ դրանց դեմ է դուրս գալիս, սկսում են պատերազմել և աֆղաններին կոտորելով՝ Սպահանը գրավում են*⁵¹: *Շահ Հյուսեինի որդիներին գտնում են:*

39 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է. «Հյուսեին շահի և զավակների սպանությունն է կատարում Միր Մահմուդը, քանի որ Մյուրվեհիզը մահանում է Սպահանը գրավելուց անմիջապես հետո»:

40 Խոսքը պարսից շահ Սուլթան Հյուսեինի (1694-1722) մասին է:

41 Սուլթան Հյուսեինը գլխատվել է 1727 թ. Միր Մահմուդ Հոթաքու հաջորդի՝ Աշրաֆ Հոթաքու հրամանով:

42 Միայլ է, քանի որ Միր Վալիս Հոթաքին արդեն վախճանվել էր:

43 Մյուս երկու օրինակում Միր Մահմուդ Հոթաքու՝ 11 օր հետո մահանալու մասին չի հիշատակվում: Վերջինս մահացել է 1725 թ.:

44 Խոսքը Պարսկաստանի շահ Աշրաֆ Հոթաքու (Շահ Աշրաֆ Ալիիջ, 1725-1729) մասին է:

45 Մյուս երկու օրինակում փնտրելու մասին խոսք չկա:

46 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է. «...ոմանց տանում են այլ երկրներ, ոմանց՝ թաքցնում մոտիկ վայրերում»:

47 Մատենադարանի օրինակում այս հատվածից հետո նշվում է մահ. «Հետո գնում են Գիլան և Մոսկվայի դեմ են պատերազմում, ջարդում և ջարդվում»:

48 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածը չկա:

49 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է. «...երբ աֆղանները Սպահանում էին»:

50 Տեղեկությունը 1729 թ. է:

51 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է. «Աֆղաններին Սպահանից էլ են փախցնում»:

30 Սենեկապետ:

31 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է. «Խորասանի խանը Թահմազությունն տասնապետությունից բարձրացնում է հիսնապետի աստիճանի և ուր և ինչ գործի որ ուղարկում է, նա հաջողությամբ է վերադառնում: Խանը նրան բարձրացնում է հարյուրապետի աստիճանի, հարյուրապետությունից՝ հազարապետության, և որովհետև չափազանց գործունյա է լինում, մի օր էլ նրան բարձրացնում է սենեկապետության աստիճանի»:

32 Մատենադարանի օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է. «ոտմամանները հանելով»:

33 Խոսքն Աֆղանստանի կառավարիչ Միր Վալիս Հոթաքու (1673-1715) մասին է:

34 Քանդահար կամ Կանդահար (کندهار), քաղաք Աֆղանստանում՝ համանուն նահանգի կենտրոնը (31.618551, 65.711808):

35 Ֆարահ (فراه), քաղաք Աֆղանստանում՝ համանուն նահանգի կենտրոնը (32.382167, 62.111419):

36 Հերաթ (هرات), քաղաք Աֆղանստանում՝ համանուն նահանգի կենտրոնը (34.358603, 62.185988):

37 Սպահանի գրավումը տեղի է ունեցել Միր Մահմուդ Հոթաքու կողմից 1722 թ., իսկ Միր Վալիս Հոթաքին մահացել է 1715 թ.:

38 Խոսքը Պարսկաստանի շահ Միր Մահմուդ Հոթաքու (Շահ Մահմուդ Ալիյի, 1722-1725) մասին է:

*Թահմազ*⁵² անունով 14 տարեկան որդի ուներ: Ասում են՝ շատ սիրում էր: Նրան բերում են և շահ դարձնում: Գլխին թագ են դնում, շահ է դառնում⁵³:

Այդ ժամանակ Թահմազդուլուի աներն ինքն իրեն նշանակում է Շահ Թահմազի նախարարապետ, իսկ փեսային էլ *իր նախկին տեղում*⁵⁴ խան է նշանակում: Սակայն, երբ Մյուրվեհիզը գրավել էր Սպահանը, քաղաքի ունեցվածքը և զանձերը տարել էր Քանդահար: Մյուրվեհիզի ոսկերչապետը *ջողայեցի մի հայ էր, մեր ընկերն էր*⁵⁵: Նա պատմեց⁵⁶ մեզ և ասաց.

– Իմ ձեռքերով կարմիր (8) խաչերի⁵⁷ վրայից ադամանդներ, սուտակներ, նոսաքարեր և զմրուխտներ պոկեցի, մի պարկի մեջ լցնելով՝ կշռեցի, մոտ 30 բաթման⁵⁸ շահթաշը⁵⁹ էր: Շահթաշը ասվածի ամեն մի բաթմանը 4,5 յողգա⁶⁰ է կշռում:

Գանք դրան, որ Խորասանի խանը նախարարապետ եղավ, սակայն փող չկա, որ մի բան անի: Օրինապահ, խելացի, վստահելի և իզիթ մարդ էր: Սա ծաղիկներով զորգի կամ կարպետի ծաղիկները երկու մատով այնպես էր տեղից հանում, որ տեսնողները կարծում էին՝ մկրատով է փորել: Ահա այսպիսի իզիթ մարդ է եղել այս Թահմազդուլուի աները:

Այս խանը մի օր մտածում է և շահին ասում.

– Հիմա պարտականությունները կատարելու ժամանակն է: Օսմանցիների հետ վատացել ենք, այդ կողմից վախ ունենք: Մոսկվան էլ մեր ամբողջ երկիրը գրավել է, եթե մեզ վրա մի արշավանք էլ կազմակերպի, փող չունենք, որ զինվորներին տանք: Այսպես մնալով չի լինում, առանց փողի գործ չի ստացվում: Ինձ Հնդկաստան դեսպան ուղարկիր, Հնդկաստանի փառլիզահից պարտքով մի քիչ փող վերցնեմ, բերեմ, զինվորներին բաժանենք և թշնամուն մեր տիրության դուրս հանենք: Հետո, եթե աստված մեզ տա, մեր պարտքը կտանք⁶¹:

Շահ Թահմազն էլ պատասխանում է.

52 Խոսքը պարսից Շահ Թահմասպ Բ-ի (1722-1732) մասին է:

53 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է. «Շահ Հյուսեինի Թահմազ անունով տղային գտնում են, որին այդտեղ էին պահել, և նրան շահ են կարգում՝ Շահ Թահմազ անունով և հավատարմության երդում տալիս: Հազիվ 13 կամ 14 տարեկան լինել՝ մի սիրուն, ազնիվ, վիզը՝ երկար, աչքերը և հոնքերը՝ սև: Հազիվ թե այսքան վայելույ մեկը նստած լինի գահին: Մենք նրան չենք տեսել, բայց Սպահանում մեզ ցույց տվեցին նրա նկարը: Այնպիսին էր, ինչպես վերևում նկարագրեցի»:

54 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածը չկա:

55 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է. «...ձերմնի հայ էր, նրա հետ հանդիպեցի»:

56 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է. «Լացելով պատմեց»:

57 Վենետիկի օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է՝ «ոսկի խաչերի», իսկ Մատենադարանի օրինակում՝ «ոսկի թագերի»:

58 Մեկ բաթմանը հավասար է 7,692 կգ:

59 Չափման միավոր է:

60 Մեկ յողգան հավասար է 1,282 կգ:

61 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածը փոքր-ինչ այլ ձևով է ներկայացված, սակայն իմնական միտքը նույնն է՝ բացի «Մոսկվան մեր ամբողջ երկիրը գրավել է»-ից, որն առկա չէ:

– Շատ լավ, դու գիտես, սակայն ես անտեղյակ պատանի եմ: Դու որ գնաս, նախարարապետ ո՞ւմ նշանակեմ:

(9) – Իմ փեսային նշանակիր:

Շահ Թահմազն էլ Թահմազդուլուին ասում է.

– Քեզ նախարարապետ եմ նշանակում:

– Ես նախարարապետի տեղակալ չեմ լինի, ինձ մի հրամանագիր տո՛ւր, որ ոչ մեկն իմ գործերին չխառնվի, և ես էլ իմ իմացածի պես աշխատեմ,– պատասխանում է նա:

Շահ Թահմազն էլ, «շատ լավ» ասելով, ձեռքը մի հրամանագիր է տալիս: Գլխից մի ցցունք հանելով՝ դնում է նրա գլխին և ասում.

– Թող սրանից հետո քեզ անվանեն Թահմազդուլու:

Անգամ այսպիսի մի հրամանագիր է տալիս. «Եթե նույնիսկ ես քո համաձայնությամբ չշարժվեմ, ինչ նվաստացուցիչ բան ուզում ես, իմ նկատմամբ կարող ես անել»:

Թահմազդուլուն դառնում է նախարարապետ և պատրաստություններ տեսնելով աներոջը ճանապարհ է դնում: Վեց-յոթ օր էր անցել, երբ նրա հետևից մարդ է ուղարկում և մի հնարքով բերել է տալիս աներոջ գլուխը: Երբ բոլոր խաները, բեկերն այս բանը հասկանում են, սկսում են վախենալ Թահմազդուլուից: Ուժեղ խաներին և բեկերին, ամեն մեկին մի պատրվակ հնարելով, սպանում է: Հին խաներից ոչ ոք չի մնում, գործին ծառայողներին միանգամից վերացնում է, իսկ մնացածին հաշվի չի առնում: Դրանից հետո Աճեմ⁶² պետությունը վերցնելով իր ափի մեջ՝ սկսում է պատերազմել օսմանցիների դեմ և հաղթում է⁶³: Մոսկվայի դեմ էլ արշավանք է սկսում (10), Գիլանում⁶⁴ հաղթում և պարտվում, ինչևէ:

Հիմա կասեք, թե սրանք ինչպե՞ս էին գոյատևում: Փող չունեին, որտեղի՞ց էր տալիս զինվորների հասանելիքը: Լուր էր ստանում, թե մեկը մի քսակ⁶⁵ փող ունի, կանչել էր տալիս ու ձեռքից խլում: 100 դուրուշ էր տալիս և ասում. «Սա քեզ բավարար է, սրանով ապրիր»:

Այսպես բոլոր հարուստներին և վաճառականներին կողոպտեց և փողերը վերցրեց:

Երբ Շահ Թահմազն օսմանցիների դեմ էր պատերազմում, սրան մի լուր է հասնում, թե «Ի՞նչ ես կանգնել, աֆղանները գալիս են Խորասան մեծաքանակ զորքով»:

Երբ Թահմազդուլուն սա լսում է, Շահ Թահմազին ասում է.

– Մինչև իմ գալն օսմանցու դեմ մի՛ պատերազմիր: Գնամ, աֆղանների մոտից վերադառնամ, ու միասին կպատերազմենք:

– Եթե օսմանցին հարձակվի, ես կանգնե՞մ,– հարցնում է Շահ Թահմազը:

62 Իրան:

63 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է. «Հաղթեց և պարտվեց»:

64 Գիլան (گیلان). նահանգ Իրանի հյուսիս-արևելքում՝ Կասպից ծովի հարավարևմտյան ափին:

65 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է. «հազար քսակ»:

– Եթե մենք չհարձակվենք, օսմանցին չի հարձակվի,– պատասխանում է Թահմազդուլուն:

– Մինչև քո գալը ես օսմանցիների դեմ չեմ պատերազմի,– հավաստիացնում է նա:

Թահմազդուլուն հասնում է **Խորասան**՝ աֆղաններից ազատելու: *Յրում, կոտորում, սպանում է, մինչև որ հաղթում է*⁶⁶, իսկ Շահ Թահմազը հարձակվում է օսմանցիների վրա, պատերազմում, սակայն պարտվում է, և շատ ձախողություններ են լինում⁶⁷: Շահ Թահմազը, երբ պարտվում է, փախչելիս (11) ձիուց ընկնում է և մնում ճանապարհին: Խելագար մի օսմանցի ուզում է նրան խփել, բայց **Բադղադի** նահանգապետ Ահմեդ փաշան⁶⁸, նրան հանդիմանելով, ասում է. «Ձեռքդ քաշիր, խո՛ղ, նա շահ է: Դու ո՞վ ես, որ նրա վրա գնդակ արձակես»: Նա էլ քաշում է ձեռքը⁶⁹:

Թահմազդուլուն **Խորասանում** հաղթում է թշնամուն: Գալիս, տեսնում է, որ շատ վատ ձևով են պարտվել: Սրտում ոխ է պահում Շահ Թահմազի նկատմամբ և նրան խմիչքի վարժեցնում: Միշտ մտածում էր, թե ի՞նչ է լինելու, եթե նրան խաբեությանը վերացնի: Ուրոշ ժամանակ անց մի խորամանկության է դիմում, այն է՝ շահին խմիչքով խաբել: *Քանի որ իշխանությունը և հրովարտակ գրելն իր ձեռքում էր*⁷⁰, ապա մի հրովարտակ է գրում և տարածում **Իրանում**: Գրում է, որ բոլոր ազդեցիկ խոսք ունեցող և հարց լուծող մարդկանց ուզում են՝ ամսի այսինչ օրը **Սպահանում** ներկա լինեն: Շահ Թահմազին էլ ասում է.

– Իմ շահ, միասին *հինգ օր*⁷¹ խրախճանք կազմակերպենք, հաճույքներին տրվենք, խրախճանքը չդադարեցնենք: Ուրախանանք, գինովնանք, դիմումներին չնայենք, դիմում տվողներին էլ վռնենք, սա էլ մի տեսակ գործ է:

Շահ Թահմազը չի մտածում, որ իր դեմ դավ է նյութում, քանի որ քրոջը Թահմազդուլուի (12) մեծ տղայի հետ էր ամուսնացրել, խնամի էին: Արդեն նրան վստահում էր և տալիս է իր համաձայնությունը:

Այդ հրովարտակներն ուղարկելուց հետո սկսում է շահի հետ խմել: 5 բաժակի տեղ 10-ն է խմում⁷² և շահին էլ խմեցնում: *Մինչև 5 օր*⁷³ բաժակը դատարկ չթողեց, խմիչքից չհեռացրեց, մինչև որ **Ղզլբաշ**⁷⁴ պետության բոլոր խաները, բեկերն ու կրոնապետներն իր ա-

սած օրը եկան և հավաքվեցին: Բոլորը եկան **Սալի-դաբադ**, որը **Սպահանում** օդատուն մի տեղ էր⁷⁵: Այստեղ գեղեցիկ պալատ ուներ՝ մաքուր օդով, խոտածածկ հրապարակով, որտեղ բոլորը շաքրով կանգնած էին իրար մոտ: Պալատում գտնվող Թահմազդուլուն, դուրս գալով հրապարակ, իր հրովարտակով հավաքվածներին հարցնում է.

– Գիտե՞ք՝ ձեզ ինչու եմ կանչել:

– Ո՛չ, մեր խա՛ն, չգիտենք:

Ապա առանց սրտի խաթի՝ գնում է, պալատից գրկելով դուրս է հանում Շահ Թահմազին, հարբած և անգիտակից վիճակում պառկեցնում խոտածածկին: Ներկաները տեսնում են՝ թագը մի կողմում է ընկած (13), թուման փաշան⁷⁶ փսխել է, գլուխը տգեղ և կեղտոտված՝ խոտերի վրա անգիտակից պառկած է: Ձգվում են Շահ Թահմազից, քանի որ խայտառակ վիճակում տեսան նրան: Այդ ժամանակ Թահմազդուլուն խաներին, կրոնապետներին և բեկերին ասում է.

– Դուք այս շահով չեք կարող իշխել: Այս շահի հետ կարծում եք՝ ձեր տիրույթներից թշնամուն դո՞ւրս եք հանելու և դրանից հետո ձեր ընտանիքներով և երեխաներով հանգի՞ստ եք ապրելու:

Նրանք անխոս կանգնած էին: Թահմազդուլուն շարունակում է.

– Ուրեմն ինձ լսեք՝ ձեզ ինչ եմ ասում: Մեր այս շահը դեռևս երիտասարդ երեխա է, *սրան կբանտարկեն*⁷⁷, մենք միասին կաշխատենք, թշնամիներին մեր տիրույթից դուրս կվռնենք: Մինչև այդ մեր շահն էլ խելքի եկած կլինի, նորից իր գահին կնստեցնենք:

Երբ բոլորը համաձայն էին և ընդունում են այս առաջարկը, Շահ Թահմազին անմիջապես նստեցնում են պատգարակի մեջ և ուղարկում **Սեբզկար**⁷⁸ քաղաք՝ բանտարկության: *Իր հայրենակիցներից մեկին պահակ է նշանակում՝ այլ մարդու չվստահելով*⁷⁹: Մեկ օր անց էլ շահի կնոջն ու երեխաներին նրա մոտ է ուղարկում: (14) Երբ Շահ Թահմազը սթափվում է, հարցնում է հազարապետին. «Ինձ ո՞վ է տանում»: Հազարապետն էլ պատասխանում է. «Կալանավորված ես, իմ շահ»: Շահը հասկանում է գլխի գալիքը և ոչ մի բան չի ասում: Այդ հազարապետը, որի հսկողությանն էր հանձնված շահը, Թահմազդուլուի բարեկամն էր և նույն նահանգից:

Այսպես կառավարումն անցնում է Թահմազդուլուի ձեռքը: Սկսում է օսմանցիների դեմ պատերազմել, ապա հաշտվում է: Եվ այնպես է ստացվում, որ *օս-*

66 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածը չկա:

67 Մյուս երկու օրինակում նշված է նաև. «Թագավորական խայտառակություն եղավ»:

68 Խոսքը Բադղադի նահանգապետ Էյուբիզադե Ահմեդ փաշայի (1724-1747) մասին է:

69 Մյուս երկու օրինակում նշված է նաև. «Հետո ղզլբաշները դժվարությամբ ձի են հասցնում: Այս դեպքը Սպահանում ղզլբաշները պատմեցին»:

70 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածը չկա:

71 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է. «5-10 օր»:

72 Մյուս երկու օրինակում նշված է նաև, որ «10-ի տեղ 15-ն է խմում»:

73 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է. «մինչև պատվիրակությունների ժամանումը»:

74 Իրան:

75 Մյուս երկու օրինակում նշված է նաև. «Նման է Քյաղըթիանե շրջանին, և որ տեսել է այն»:

76 Թուման փաշա նշանակում է շահ:

77 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է. «Ձեր համաձայնությամբ սրան կբանտարկեն»:

78 Սեբզկար (سیزوار). քաղաք ԻԻՀ Ռազավի Խորասան նահանգում (36.205728, 57.687454):

79 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է. «Բարեկամներից և հայրենակիցներից պահակ նշանակեց և այլ նահանգի մարդկանց չվստահեց», իսկ Մատենադարանի օրինակում մեկ պահակի փոխարեն նշվել է հազար պահակ:

մանցիները նախապես գրաված քաղաքները⁸⁰ կամավոր սկսում են հանձնել⁸¹: Մոսկվայի դեմ էլ է պատերազմում և նրանց դուրս հանում **Գիլանից**: Սակայն որոշ բերդեր, որտեղ օսմանյան զորք կար, չեն ուզում հանձնել: Չինվորներն ասում են. «Փաղիշահը տվել է, բայց մեր արյունով ենք գրավել, չենք տալու»: Թահմազդուլուն նրանց դեմ պատերազմ է սկսում: Փաղիշահից նորից հրովարտակ է բերել տալիս, որից հետո նրանք բերդերը հանձնում են, իսկ Թահմազդուլուն դեսպաններ է ուղարկում:

Այնուհետև զորքը վերցնելով՝ գնում է **Մուղանի** անապատ⁸²: Մուղանի անապատում 4000-5000 հազար **խորասանցու**՝ իր մերձավորներից, ասում է.

– Ես ձեզնից այսպիսի մի բան եմ ուզելու: Ինչպես կթելադրեմ ձեզ, այդպես էլ կասեք:

Թելադրում է այն, (15) ինչ որ ուզում էր: Եվ նորից հրովարտակներ տարածելով՝ կանչում է կրոնապետներին, նախարարներին, խաներին, բեկերին և մույնիսկ նրանց, ում խոսքը քիչ թե շատ կշիռ ունեն: Նրանք էլ, ինչպես նախորդ անգամ, գալիս են և շարվում **Մուղանի** անապատում. կրոնապետները՝ կրոնապետների, խաները՝ խաների, բեկերը՝ բեկերի մոտ⁸³: Թահմազդուլուն ասում է.

– Գիտե՞ք՝ ձեզ ինչո՞ւ եմ կանչել:

– Ո՛չ, չգիտենք, մեր խա՛ն:

– Ահավասիկ Ձեր տիրույթներից թշնամիներին հանեցի, հարգելիներ՝, այսուհետ խաղաղությո՜ւն է, և տիրում է օրենքը: Գնացե՛ք, ձեր շահին հանե՛ք դուրս, ես էլ գնամ իմ նահանգը, մի քիչ հանգստանամ:

Ապա ինչպես որ նախապես Թահմազդուլուն թելադրել էր, *հավաքվածները*⁸⁴ սկսում են խնդրել և պաղատել.

– Մեր տե՛ր, դու մեզ թողնելով ո՞ւր ես գնալու: Մենք քեզ ենք շահ ճանաչում, այլ շահ չենք ճանաչում, քեզ գիտենք և քեզ ենք ուզում:

Այսպես շահ կանչելով՝ սկսում են պաղատել: Երբ բոլորը լսում են այս պատասխանը, տասը հազար հոգի էլ նրան կողմնակից է դառնում: Եվ այնտեղ կանգնած կրոնապետներից, խաներից և բեկերից (16) ոմանք ասում են.

– Մի՞թե կարելի է նման բան, երբ շահը դեռ կա, փոխարինող շահ կլինի՞, հատկապես որ շահի որդին էլ է:

Թահմազդուլուն լսում է բոլոր չուզողների առարկությունները, սակայն դիս պահելով՝ այդ ժողովում ոչ մեկին ոչինչ չի ասում: Այդ ուզողներին հարցնում է.

– Ինձ ուզո՞ւմ եք:

– Այո՛, ուզում ենք,– ասում են նրանք:

– Եթե ինձ ուզում եք, ուրեմն մեկական *կնքված*⁸⁵ մուրհակ տվե՛ք,– շարունակում է խանը:



Նադիր շահը վեզիրի հետ (նկ.՝ ԺԸ դ., պահվում է Կանադայի ազգային պատկերասրահում)

Բոլոր ուզողները տալիս են մուրհակը և աղոթելով Թահմազդուլուն իրեց շահ նշանակում, իսկ բոլոր չուզողներին սրի է քաշում, ապա իր անունով դրամ հատում՝ վրան գրելով. «Սպիտակ դրամ, աշխարհի տիրակալ, շահնշահ Նադիրի դրամը սա է»: Դրանից հետո ինքն իրեն անվանում է Նադիր շահ⁸⁶:

12 տարեկան մի դուստր ունեն: Երբ շահ է դառնում, մտածում է. «Չլինի՞ ամուսնանա և սրիկայի մեկին իր ծոցը տանի»: Եվ աղջկան խեղդում է, քանի որ շատ խանդոտ էր:

Դրանից հետո, թագավորական գահը ցանկանալով, **Մուղանի** անապատից դուրս գալով (17), զորքի հետ գնում է **Սպահան**: Երբ **Սպահան** է հասնում, Թահմազդուլուի՝ շահ լինելու հանգամանքը *սպահանցիները՝ մեծից փոքր, սկսում են իրար հետ խորհրդակցել*⁸⁷: Թահմազդուլուն երբ տեսնում է, որ իրեն որպես շահ չեն ընդունում, այդ ժամանակ մեծ տղայի կնոջ գիրկը մի անմեղ երեխա կար⁸⁸, մոր գրկից բերում, գահին է նստեցնում և *ճակատը համբուրելով՝ շահ*⁸⁹ ընտրում: Ապա սպահանցիներին ասում է.

86 Նադիր շահ Աֆշար (1736-1747):

87 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է. «Սպահանցիների մոտ դժգոհություն առաջացավ, և իրար հետ սկսեցին խորհրդակցել»:

88 Խոսքը 1734 թ. ծնված Շահրուխի մասին է՝ Նադիր շահի որդու՝ Ռիզագուլու և Ֆաթմա Բեգումի որդին:

89 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածը չկա:

80 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է. «Օսմանցիները գրաված բերդերը կամովին տվեցին»:

81 Մյուս երկու օրինակում նշված է նաև. «Գերիներին էլ ուզեց, և օսմանցիները տվեցին»:

82 Մուղանի դաշտավայր կամ տափաստան:

83 Հավաքը տեղի է ունեցել 1736 թ. սկզբին:

84 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է. «խորասանցիները»:

85 Մյուս երկու օրինակում շեղագիր բառը չկա:

– Դուք գիտե՞ք՝ սրա մայրը շահ Թահմազի բույրն է։ Շահի դուստրից է ծնվել։ Ինձ չե՞ք ուզում, թող սա լինի ձեր շահը, սրան ի՞նչ կասեք։

Նրա անունով դրամ է հատել տալիս։ Երեխան 15 ամսական⁹⁰ էր, լալիս էր և մորից կաթ էր ուզում, իսկ նա շահ էր սարքել, գահին նստեցրել։ Բոլոր խաներին ու բեկերին ժողովի է կանչում ու ասում.

– Գիտե՞ք՝ ձեր շահը ի՞նչ է հրամայում։ Ասում է՝ բարեկամիս բարեկամ եղեք, թշնամու՝ թշնամի։ Ասում է՝ ով ինձ լավ է ծառայում, նրանց լավ կպարգևատրեմ։

Ամենող (18) լալիս է, կաթ է ուզում, իսկ Թահմազ-դուլուն ժողովի մասնակիցներին այս խոսքն է ասում։ Ինչպես կզաքիսն է մտնում հավերի բույրը, և ոչ մի հավ չի փրկվում, այնպես էլ նա, երեխային մի քանի օր շահ կարգելով, մտնում է **Սպահան**։ **Սպահանում** ինչքան հակառակորդ և իրեն չուզող կար, ոչ մեկը ձեռքից չի փրկվում։ Տարածքը մաքրում է և հետո մորից շահ դառնում։

Շահ լինելուց հետո մունետիկ է կանչել տալիս 4 օր։ Առաջին օրը կանչում են, թե «Շահին հարցնելու լինեք, ապա նա չարյար⁹¹ է», երկրորդ օրը՝ թե «Շահը դզվալ⁹² է», երրորդ օրը՝ թե «Շահը հայ է», չորրորդ օրը՝ թե «Շահը հրեա է»։ Ահա այսպես է իր մասին կանչել տալիս շահը։

Հինգերորդ օրը **Սպահանի** բոլոր արհեստավորներին ժողովի է կանչում և ասում.

- Ես չորս օր մունետիկներ կանչել տվեցի, լսեցի՞ք։
- Այո՛, մեր շահ, լսեցինք, բայց չհասկացանք՝ ինչու։
- Ես այս խոսքը կանչել տվեցի, քանի որ...

(19-րդ և 20-րդ էջերը պարունակող թերթը պոկված է)։

(21) գնում ես, միմարեի նման ձողեր են կառուցված, դրանք ուղեցույց են բռնում և այդպես ես գնում, քանի որ եթե ձողերից աջ կամ ձախ շեղվեցիր, ճանապարհդ կորցնում ես։ Միմարեի չափ ավագով լցված մեկ-երկու անտեսանելի փոսեր կան։ Եթե ձին ոտքը այնտեղ դնի, ապա փրկության մասին միայն աստված գիտի. փորձելով ազատվել՝ ավելի է խրվում և գնում դրա մեջ։ Այդ ձողերը դրա համար են կառուցվել։ Երբ քամի փչի, մինչև ականջներդ ծածկվում են։ Այդ երկու քաղաքները մի սովորություն ունեն։ **Յագդում**⁹³ և **Քերմանում**⁹⁴ սուրեթ⁹⁵ են գործում և վաճառում՝ մարդու և կենդանու համար։ Դա **Դիարբեքի** կարմիր կտորի նման մի բան է։ Սուրեթով ամեն ինչ պատրաստում են՝ քթոց, բերանոց և ակնոց։ Մենք էլ գնեցինք մարդու և կենդանու համար։ Սակայն աչքի

հատվածում վարագ կոչվող ապակու նման մի բան են օգտագործում, որը նորից այդ ավագի միջից է դուրս գալիս և այն սուրեթին է ամրացվում։ Մարդը կամ կենդանին, երբ սա հագնում է, ճանապարհին նեղություն չի քաշում։

Նաղիր շահի բանակը, երբ անցնում է այստեղով, ուժեղ քամի է լինում, մոտ 1000 քսականոց ապրանք է մնում։ Իրենց կյանքի համար վախենալով՝ նույնիսկ չեն փնտրում՝ մտածելով՝ հանկարծ փոսերի մեջ չխրվեն։ (22) Սա էլ պետք է իմանալ, որ եթե նրանց գյուղերը չհասնելով՝ ճանապարհին մնացիր, ոչ մի կողմ չշեղվես, միակ ճարը ճանապարհին գիշերելն է։ Այդտեղ երեկոյան մի լեռ կտեսնես աջ կողմում, իսկ առավոտը դա արդեն ձախում է. քամին է այդ կողմ տարել։ Մարդու վիճակը շատ դժվար է, եթե այդ աշտարակները չլինեն, քանի որ քամին այդ ավագը վերցնում և այլ տեղ է կուտակում։ Ավագի մրրիկի մասին այսքանով բավարարվենք։

Հետո **Քերմանից** չորս օրում հասանք **Փալանկ**⁹⁶։ Տեսանք Չալօղլու Ռուստամի սերնդին։ Այդ խանին Նաղիր շահը տվել էր **Փալանկի** խանությունը, որը Ռուստամի սերնդից էր և նախապես էլ այդտեղի խանն էր։ Մեզ շատ լավ հյուրասիրեց։ Ինքը խելացի մի իգիթ էր, բարձրահասակ, սև ունքերով և սև աչքերով։ Նման կազմվածքով մարդ շատ կա **Ռումելիում**⁹⁷, բայց այդպիսի աչքերով մարդ չեմ տեսել, քանի որ նրա մի աչքը 3 կովի աչքի չափ էր։ (23) Իմացիր, որ ես չեմ չափազանցում, այլ քիչ եմ ասում։ Երեք տարեկան տղա զավակ ուներ, որը 12 տարեկանի նման էր։ Աչքերն էլ հոր աչքերից ավելի մեծ էին երևում։

Գանք այս շրջանի ճանապարհներին։ **Քերմանից** մինչև **Սիստան**⁹⁸ ամբողջությամբ անապատ է։ Պարսկերեն ասում են՝ **Կյուրայուպի յաբան**, իսկ թուրքերեն, կարծում եմ՝ **Կյուլիպի յաբան**։ Երեք օր մնացինք, հետո դուրս եկանք և 6 գիշեր հետո հասանք **Սիստան**, որտեղից էլ **Քանդահարը** 10 գիշեր հեռու էր։

Ինչևէ, շատ չերկարացնենք։ Հասանք **Քանդահար**։ Շատ հարգալից վերաբերմունք ցույց տվեցին և հյուրասիրեցին Թահմազդուլուն և Նաղիրն այնպես, ինչպես **Իրանի** գլխավոր դատավոր պատվարժան Աբդուլլահ և **Մոսկվայի** Սալեհ էֆենդիները։ Քանի որ Նաղիրշահին ասել էինք, որ (Մուստաֆա) փաշան փաղիշահի միջախորն⁹⁹ էր, փաշային փորձելու նպատակով այնպիսի ձի էր ընտրել, որը, սանձի 2 կողմներից 2-ական մարդ բռնելով հանդերձ, կանգնում էր հետևի ոտքերի վրա, դիմացից մոտեցողին՝ կծում, հետևից մոտեցողին (24) աքացի էր տալիս, իսկ կողքից մոտեցողին՝ հարվածում։ Ահա այսպես ոջիլի բնավորությամբ մի կենդանի էր։

90 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է. «15-16 ամսական»։

91 Մուննի մահմեդական։

92 Շիա մահմեդական։

93 Յագդ կամ Եգդ (يزد). քաղաք Իրան՝ համանուն նահանգի կենտրոնը (31.893796, 54.369548)։

94 Քերման (كرمان). քաղաք Իրան՝ համանուն նահանգի կենտրոնը (30.290785, 57.078649)։

95 Դիմակ։

96 Մեզ չի հաջողվել պարզել բնակավայրը։

97 Հարավային Բուլղարիա։

98 Սիստան (سیستان). երկրամաս Իրանի հարավարևելյան հատվածում։ Տարածվում է նաև Աֆղանստանի և Պակիստանի հարավարևմտյան սահմաններով։

99 Պալատական ձիապան։

Մի օր Թահմազդուլուն կանչում է փաշային և ասում.
– Ես մի ձի ունեմ, բոլորովին չեմ հավանում, թող
բերեն, հեծնի՛ր, տե՛ս՝ ինչպիսի՞ն է:

Ձին բերում են, ինչպես ասել էի, ոջիլի բնավորու-
թյամբ կենդանի, մի տեղ չի կանգնում: Մուստաֆա
փաշան հասկանում է Նադիր շահի նպատակը:
«Աստված մեծագոր Օսմանյան պետությունը հավերժ
պահի, նույնիսկ թշնամուն թող բարեկամ դարձնի»:
Պետական կարողությունը գործի է դնում, Աստծու
կամքով էլ բարձրահասակ է, ձիավարություն էլ գիտի:
Մյուս կողմից ձին աշխույժ շքում էր և ցատկոտում,
իսկ Նադիր շահի մարդիկ նայում էին, թե ինչպես
պետք է հեծնի, նույնիսկ զարմացել էին: Ձիուց երկու
քայլ հեռու պատրաստվեց, ոտքը դրեց ասպանդակին
և առանց վարանելու ուստյունով հեծավ: Այդ ժամա-
նակ Թահմազդուլուն և նրա բոլոր մարդիկ զարմա-
ցան. «Մի՞թե այսպիսի հեծյալ կլինի աշխարհում»:
Գովքն արեցին, ձին էլ զարմացավ, թե ինչ պատահեց
(25). այդ անհանգիստ բնավորությամբ ձին կատվի
նման էր դարձել: Մի քանի րոպե մնաց և իջավ:

Նադիր շահն ասաց.

– Աստծու կամքով, փաշա՛, փաղիշահի¹⁰⁰ հացն ես
կերել, քեզ հալալ լինի:

Այս տեսարանը աչքովս տեսա, փա՛ռք Աստծուն,
շահի ասածը չեղավ:

Մի քանի օրից գործերն ավարտելով՝ մեծապատիվ
Մուստաֆա փաշան դեպի Ռուռում¹⁰¹ շարժվեց, իսկ ես՝
որպես նվագաձու, մնացի շահի մոտ:

Այստեղ պատմեմ, թե Թահմազդուլուն ինչպիսի
խաբեությամբ գրավեց Քանդահարը և Բալխը¹⁰²:
**Քանդահարի չորս կողմերում աշտարակներ կառու-
ցեց, չորս կողմը փակեց, որ ոչ ոք դուրս չգա: Միրզալի
խանին նշանակեց այդ աշտարակների վերակացու,
իսկ ինքը գնաց, մեկ ամիս նստեց Բալխում: Տարբեր
խաբեությունների դիմեց, բայց ճար չգտավ, ապա ա-
կանապատեց բերդի աշտարակը, բարոյք լցրեց և մին-
չև ականները պատրույգ հասցրեց: Հետո այդ կողմից
հարձակվեցին բերդի վրա: Բոլոր զինյալները լցվեցին
այդ աշտարակի վրա և պատերազմեցին, ապա պատ-
րույգը վառեցին: Երբ կրակը հասավ բարոյքին, այս
(26) աշտարակը պայթեց, իսկ ներսի բոլոր զինվոր-
ները մահացան: Թահմազդուլուն ձախից մտավ
բերդ: Բալխի շահը եկավ, ընկավ ոտքը, խնդրեց, որ ի
սեր Աստծո, ժողովրդին խնայի, իսկ իրեն՝ որպես գե-
րի, ինչ ուզի, անի:**

Երբ այսպես ասաց, ապա նա (Թահմազդուլուն)
պատասխանեց.

– Աստված քեզ օրհնի, քանի որ դու, քեզ թողած,
խնդրեցիր՝ ժողովրդին խնայեմ, քեզ չեմ վերացնի, սա-
կայն հարկ եմ ուզում:

*Չիմացանք՝ քանի հազար քսակ վերցրեց: Բալխի
շահի մեծ որդուն նշանակեց խան, իր մարդկանցից
մեկին էլ, որպես քեղխուդա (մեծավոր), մոտը թողեց,
իսկ Բալխի շահին իր հետ բերեց Քանդահար*¹⁰³:

Այս Բալխի շահը երիտասարդ էր: Գեղեցիկ խոս-
քով, կարմիր դեմքով, կարճ հասակով, մաքուր մաշկով
մարդ էր: Կրոնապետներն էլ հետն էին: Հանեցին Նա-
դիր շահի դիմաց: Շահն ասաց.

– Ամեն մեկը մեկ-երկու քաղաք եք գրավել, շահ
ներկայանալով՝ հպարտանում ենք: Փաղիշահ (թա-
գավոր) կվայելի ասել Իրանի շահին, Ռուռումի շահին,
Հնդկաստանի շահին և Մոսկվայի ֆռանկին, այնպես
որ, երբ թշնամին մեկ, երկու կամ հինգ քաղաք գրավի,
ոչ մի ազդեցություն չի ունենա:

– Շահա, մեզ ուզեց անվանել եմ նրա համար, որ
մեզանից ամեն մի (27) ցեղ մի քանի քաղաք է գրա-
վում և իրեն թագավոր է հռչակում,– պատասխանեց
Բալխի շահը:

Նադիր շահը խնդաց և ասաց.

– Բարի, բայց այսպես գործելը լավ չէ ձեզ համար:

Մի քանի օր հյուրասիրեց և խալաթ հագցնելով՝ ու-
ղարկեց Բալխ՝ նորից խանություն անելու:

Սրանից հետո պատմեմ **Քանդահարի** նվաճումը,
տե՛ս՝ ինչպիսի խաբեությամբ գրավեց հազիվ 16 ամ-
սից: **Քանդահար** ասածը զառիթափ ժայռ է: Չափա-
զանց բարձր և շատ երկար, մեծ լեռ է, դրա կեսի վրա
բերդ են կառուցել, իսկ մյուս կեսը բերդից դուրս են թո-
ղել: Այնպիսի զառիթափ ժայռ է, որ ոչ մի թերություն
չունի, իսկ այդ պարսպապատը 60000 մարդ հազիվ
կկարողանա պաշարել: Ահա այսպիսի պարսպա-
պատ մեծ բերդ էր: Եթե աշտարակների հատակից դե-
պի վեր նայելու լինես, գլխարկդ վար կընկնի գլխիցդ,
այդքան բարձր է: Մեջը ռումբ էին գցում, երեխաների
հոգը չէ, իրենց խաղն էին շարունակում:

Ժամանակին Չմրութ անունով մի շահ է լինում:
Մեղա՛ Աստծո, իրեն Աստծո տեղ էր դրել, անգին քա-
րերը ծակել տալով՝ մորուքի մագերից էր կախել:
Չմրութ (28) շահ մի՛ ասեք ու անցեք: Իրականու-
թյունն այն է, որ **Քանդահարը** դրախտի ու դժոխքի է
վերածել, հարստություն էլ շատ է ունեցել: Այսպես են
մեզ պատմել քանդահարցիները:

Քանդահարն անմատչելի մի տեղ է, սակայն
դժբաշ շահերի ժամանակ Ուլախ Պուղտանի իշխա-
նությունների մնաց քանդահարցիները ևս վրացի խա-
ների են ենթակա եղել, քանի որ Մյուրվեիզի ժամանակ
վրացի խան կար: Եթե հարց տաք, թե ինչպե՞ս Մյուր-
վեիզը հայտնվեց, ապա կասեմ, որ այդ ժամանակ
վրացի խանը¹⁰⁴ հաճույքներ սիրող մի մարդ էր: Գնում
էր **Քանդահարի** գյուղերը, երկու-երեք օր զվարճա-
նում, որից հետո գալիս էր, իր ծառաների հետ մտնում
Քանդահար: Սրա քեֆ անելու մշտական ձևն այս է լի-
նում: Մյուրվեիզն այդ մահանգի բեկերից մեկն էր,

100 Մուլթան:

101 Կ.Պոլիս:

102 Բալխ (بلخ). քաղաք Աֆղանստանում՝ համանուն մարզի
կենտրոնը (36.768311, 66.900564):

103 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածը չկա:

104 Խոսքը Քարթլիի թագավոր Գեորգի 11-րդի (ծն. 1651-մահ.
1709) մասին է:

շատ աֆղանների իր կողմն էր հավաքել: 150-ը՝ իրեն թևափակումը, խորհրդակցել են և որոշել, որ երբ վրացի խանը մի օր նույնպես զվարճանալու գնա, գիշերը **Քանդահար** գնալու ժամանակ հարձակվեն, խանին և նրա մարդկանց սպանեն ու **Քանդահարին** տիրանան: Այդպես էլ արել են:

(29-րդ և 30-րդ էջերը պարունակող թերթը պոկված է):

... (31) ոչ մի վրիպում չեն թողում: Որոշ ժամանակ այսպես աշխատեցին, երկու կողմն էլ տեսավ, որ ճար չկա: Թահմազդուլուն զինվորներին զգուշացրեց՝ ասելով.

– Տրեխներ հագնել և մինչև առավոտ բերդն ականներով հարվածելով՝ անցք բացել, ապա բերդի ավերված հատվածով հարձակվել: Եթե մի կերպ բերդից ներս մտնենք, ապա այն շուտով կգրավենք:

Այս զգուշացումից հետո զինվորները պատրաստվեցին, սկսեցին բերդը ռմբակոծել, ապա մի հատվածն ավերեցին և հարձակվեցին: Պարզվում է, որ ներսում աֆղանները պատրաստվել էին և ամբողջ պարսպապատի վրա քարեր էին կուտակել: Ամեն մի քարը 100 յոդկա¹⁰⁵ է կշռում: Երբ ղզլբաշ զինվորներն այդ գառի-թափ լեռան կեսը բարձրացան, ներսից աֆղաններն այդ քարերը գլորեցին ներքև, Աստված ցույց չտա: Լեռն ասածս գառիթափ ժայռ է, քարերը, դեպի ներքև գլորվելով, կոտրատվեցին: Ամեն մի քարը 10 քարի բաժանվեց, ամեն մի քարը 10 մարդ կոտորեց, 10-ին էլ վիրավորեց: Տեսանք, որ զինվորներն այսպես ներքևում լցվեցին, կասես՝ ոչ մեկը չի փրկվելու: Այդ բերդի հատակը հող չէր, որ (32) քարը թաղվեր մեջը, այլ գառի-թափ ժայռ է: Քարն ընկնելու ժամանակ թռչում է և ընկնելով 10 կտոր է լինում: Այդ պատճառով ղզլբաշներից այդքան կոտորվեցին: Այդ օրը մինչև երեկո հազիվ գոհվածներին և վիրավորներին փոխադրեցին բանակ:

Այդ օրը չկարողանալով գրավել բերդը՝ սկսեց խաբեության դիմել: Դեսպան ուղարկեց բերդ և այսպես ասաց. «Հյուսիսին¹⁰⁶ խանը թող գա ինձ հետ հանդիպելու: Ինչքան կարող եմ, կհյուրասիրեմ, ոչ մի վնաս չեմ տա նրան և նույնիսկ նրա մարդկանց: Երբ գան, գրություն կուղարկեմ, կերդվեմ, որ վնաս չի լինի, որովհետև երկու մահմեդական իրար դեմ հանելը վայել չէ: Լսել եմ նաև, որ ձեր զինվորներն ու զինամթերքն էլ շատ են, 3-4 տարի բավարարելու չափ կա: Եթե ասեք, որ Թահմազդուլուն կգնա, իմացեք, որ ես գնացողներից չեմ և 15 տարի էլ կսպասեմ: Մինչև բերդը չնվաճեմ, չեմ հեռանա»:

Նրանք էլ հավաքվել են մի տեղում, որոշ մասը տրամաբանական, իսկ մյուսներն անընդունելի են համարել այս խոսքերը: Ինչևէ, ասել են.

– Թահմազդուլուն թող գրություն գրի, (33) կնիքն էլ վրան լինի, երդվի, որ մեզ չի վնասելու, մենք էլ հավատանք և գանք:

Միջնորդը բերում է այս լուրը: Թահմազդուլուն ասում է.

– Հրամայում եմ մի խելամիտ գրություն գրել:

Գրությունը գրեց, երդվեց Հյուսիսին խանին, խաներին, բեկերին և բերդում գտնվողներին, որ վնաս չի հասցնելու: Գրեց և ուղարկեց: Նրանք էլ կարդացին, հավանեցին և ասացին.

– Թահմազդուլուի խաբսիայը¹⁰⁷ կգնանք:

Առավոտյան Հյուսիսին խանը նվերներով, բեկերով և կրոնապետներով եկավ Նադիրի խաբսիայը: Թահմազդուլուն Հյուսիսին խանին հագցրեց կաֆտան՝ «Ապրե՛ս, Աստված օրհնի» ասելով: Բեկերին էլ հյուրասիրեց՝ խալաթ հագցնելով:

– Սրանից հետո իմ ծառայության մեջ եղեք, – ասաց՝ խոստանալով ամիսը 20-ական դուրուշ ուլուֆե¹⁰⁸:

– Տե՛ր, քեզ հոգով-մարմնով կծառայեմք, – ասացին նրանք և **Քանդահարը** հանձնեցին Նադիրին:

Մի քանի օր հետո Թահմազդուլուն Հյուսիսին խանին ասաց.

– Քեզ ուղարկելու եմ մեր շահի մոտ:

– Տե՛ր իմ, ինչո՞ւ: (34)

– Մեր շահը գրություն է ուղարկել մեզ: Գրել է. «Լսել եմ, թե Մուրվեհի որդի Հյուսիսին խանը **Քանդահարը** ձեզ է հանձնել և ձեզ մոտ է եկել: Ուզում եմ տեսնել, թե ինչպիսի՞ մարդ է»: Դրա համար էլ ուղարկելու եմ:

– Տե՛ր իմ, արդյո՞ք մեզ չի վնասելու, – հարցնում է Հյուսիսին խանը:

– Բոլորովին մի՛ վախեցիր, քեզ նրանից վնաս չի լինի:

Հյուսիսին խանին ուղարկեց **Սեբզևար** քաղաք՝ շահ Թահմազի մոտ: Նրա հետ մի քանի հարյուր զինվոր նշանակեց, իսկ հետո մի գրություն գրելով՝ ուղարկեց շահին. «Քեզ ուղարկում եմ Մուրվեհի որդի Հյուսիսինին, որի հայրը քո հոր և եղբայրների դահիճն է և ամբողջ երկրիդ ավերողը: Հիմա դու էլ նրանց վրեժը սրանից կառնես»:

Երբ Շահ Թահմազի ձեռքը հասավ Թահմազդուլուի նամակը, կարդաց: Նրա սուրհանդակին այսպես պատասխանեց Շահ Թահմազը.

– Ես ի՞նչ անեմ Մուրվեհի որդուն՝ Հյուսիսին խանին: Ինքն է ինձ բանտարկել, իշխանությունս վերցրել, իմ փոխարեն ինքն է կառավարում, մի շարք անհավատների (35) ինձ վրա մուսաշը¹⁰⁹ նշանակել: Բանտում նեղության մեջ եմ, խոսքս չի անցնում, ինքն էլ Մուրվեհի նման անողորք է, դաժան, ինձ Մուրվեհի որդուն է ուղարկում իբր ավար: Եթե ուզում է ինձ լավություն անել, ապա այս բանտից ինձ թող ազատի, թագավորությունն իրեն լինի: Մի տեղ թող ուղարկի, գնամ, երեխաներիս հետ մի չոր հաց ուտեմ, փառք տամ Աստծուն, իմ մոտ նշանակած անհավատների երեսը չտեսնեմ:

¹⁰⁵ Չափման միավոր, որը հավասար է 1.282 կգ:

¹⁰⁶ Խոսքը Ղիլիջ Հոթաբու դիմատիպի վերջին կառավարիչ շահ Հյուսիսին Հոթաբու (մահ. 1738) մասին է:

¹⁰⁷ Նշանակում է՝ նրա ոտք դրած հողը, գործածվում է մեծարելու նպատակով:

¹⁰⁸ Աշխատավարձ:

¹⁰⁹ Կառավարիչ, վստահված անձ:

Մինչև սուրիանդակը կհասնեն Թահմազդուլուի մոտ, Հյուսեինն խանը հասավ Շահ Թահմազի մոտ: Տարան շահի դիմաց: Ասաց.

– Ո՞վ է սա:

– Մեր շահ, սա Մուրվեհի դրոշմն է:

Իմացավ, որ Թահմազդուլուի ուղարկած մարդն է և առանց մի բան ասելու վռնդեց: Հյուսեինն խանը հենց դուրս եկավ, Թահմազդուլուն նախապես պատվիրել էր, որ եթե Շահ Թահմազը նրան չսպանի, ապա մի քանի ժամվա ճանապարհի հեռացնելով՝ դուք սպանեք: Ինչպես ասել էր, այնպես էլ արեցին. սպանեցին Հյուսեինն խանին: *Այս սուրիանդակը Շահ Թահմազի ասածները փոխանցեց Թահմազդուլուին, վերջինս երբ լսեց, (36) սրտումը քեն պահեց*¹¹⁰:

Գանք **Քանդահարին**: Այն գրավելուց հետո Թահմազդուլուն դրա դիմացի դաշտում իր համար **Քանդահար** է կառուցում: **Քանդահարի** ժողովրդին դատարկելով և բոլորին տեղ հատկացնելով՝ այնտեղ լցրեց: Իսկ հին **Քանդահարը** հիմքից այնպես քանդեց, որ նույնիսկ հայտնի չէր, թե երբևէ այնտեղ եղե՞լ են քաղաք, բերդ, տներ: Քաղաքում եղած ունեցվածքն ու եկամուտը վերցրեց, կարգ ու կանոն հաստատեց, ապա իր զինվորների հետ արշավեց դեպի **Հնդկաստան**:

Թահմազդուլուն, երբ **Քանդահարում** կարգ ու կանոն հաստատեց, այդ ժամանակ միայն ցանկացավ գնալ **Հնդկաստան**: Նախ զինվորներին վերցնելով՝ հասավ **Քալաթ**¹¹¹: **Քալաթ** ասվածը **Քիրքուքի**¹¹² նման մի երկիր է, բերդը, օդը և բնությունը նույնն են: Մի լեռան գագաթին է, ունի 10.000 աֆղան:

Թահմազդուլուն հրամայեց հարձակվել, իսկ 10.000-ն էլ, բերդից դուրս գալով, սկսեցին պատերազմել: Փամփուշտները սպառվեցին, սրերը հանվեցին, սրերը կոտրվեցին: Հրացանների կոթերով պատերազմեցին, կոթերը ջարդվեցին: Քարերով պատերազմեցին, ընդհանրապես պատերազմից (37) չփատվեցին, մինչև բոլորն այդ պատերազմում զոհվեցին: Սակայն ղզլբաշներից էլ շատ մարդ մահացավ: 10.000 աֆղան զինվորից ոչ ոք չփախավ, ոչ ոք գերի չընկավ, բոլորը զոհվեցին, սա էլ այսպես պետք է իմանալ: **Քալաթի** բերդը քանդեց, հողին հավասարեցրեց: Այդ աֆղան զինվորներից մեկի գանգը ես տեսա, գագաթը չափեցի, երկու թզաչափ էր:

Այնտեղից դուրս եկավ և հասավ **Մահմուդ Ղազնևի**¹¹³: Սրանք չղիմաղեցին և անմիջապես հանձնվեցին: Ապա գնաց **Մահմուդ Ղազնևի**¹¹⁴ դամ-

բարանն այցելելու: Այդտեղից դուրս ելավ և հասավ **Քաբուլ**¹¹⁵: Մի սուրիանդակ ուղարկեց, ուզեց որդուն և պաշարեց: **Քաբուլում** ոչ ոք Թահմազդուլուն չդիմավորեց: 7-8 օր մատցինք, ձայն-ձուն չկա: Թահմազը կասկածեց, չլինի՞ **քաբուլցիները** մի խորամանկության են դիմում, նրանք ներսն են նստած, իսկ մենք՝ դուրսը: **Քաբուլի** դիմացն այգիներ են՝ խիտ ծառերով: Շատ հովասուն մի տեղ է, և դրա մեջ է **Քաբուլ** քաղաքը՝ շրջապատված խիտ ծառերով: Թահմազը սկսեց ծառերը կտրել: Մի փոքր տեղ բերդը տեսանելի դարձավ, և այն իր տեղից սկսեց երևալ (38): Բերդի դիմաց մի քանի տուն կար, դրանք այրեց և քանդեց: Ներսից լուր եկավ, որ վաղը պատերազմելու ենք:

Ներսից 400 զինվորական 25 դուրուշով փայտ և սուր է վերցրել: Թահմազդուլուն պատրաստ է: Հետևյալ օրը բենկելիկ¹¹⁶ և շիրա խմեցին, ապա բերդի դարպասը բացելով, փայտ, սուր և վահան ձեռքերի մեջ պահած՝ հետիոտն դուրս նետվեցին: Թահմազդուլուի ձիավորները սկսեցին փախչել: Սրանք 400-ն էլ հետիոտն հետապնդեցին նրանց, ծառերի միջից հանեցին բաց տարածք: Գլլբաշներն այնքան նահանջեցին, որ այդ հիմար, հարբած և շվարած զինվորները քաղաքից հեռացան: Այդ ժամանակ շրջվեցին և 400-ին էլ շրջապատելով բռնեցին: Այդ զինվորներից երկուսին բռնեցին և բերեցին: Ներսի անցուղարձն իմացանք: Ինչևէ, քաղաքը հանձնեցին Թահմազդուլուին:

– Ո՞ւր է այս քաղաքի խանը,– հարցրեց նա:

Պարզվեց, որ քաղաքը հանձնողը խանի նշանակած քաղաքագլուխն է:

– Մեր շահ, փախել է **Ջալալաբադ**¹¹⁷,– ասացին:

Թահմազը 7 (39) դեսպան ուղարկեց, որ գա: Հաղորդեց՝ երբ գա, նրան կիյուրասիրի: **Քաբուլի** խանն այս 7 դեսպանից 6-ին սպանեց, իսկ 1-ի քիթն ու ականջը կտրելուց հետո հետ ուղարկեց:

Թահմազդուլուն սրտնեղեց: Այդ ժամանակ որդին, որը սուրիանդակ էր ուղարկել, եկավ հոր հետ տեսնվելու: Երբ որդուն տեսավ, բացահայտ ասաց. «Որդի՛, ես գնում եմ Հնդկաստան: Քեզ հետ այստեղ միասին մնալով՝ կարոտս առնեմ, այդպես գնամ Հնդկաստան»: Փաթաթվեց, երկու այտը համբուրեց և ուս ուսի տված՝ որդուն մտցրեց իր հարենը: Հետո գաղտնի ի՞նչ ասաց, ի՞նչ խոսեցին միասին՝ ոչ ոք չիմացավ: Դու մի ասա այդ հարեմում որդուն ասել է. «Լավ կլինի՛ Շահ Թահմազին և բոլոր որդիներին սպանես, որպեսզի ինձանից հետո ասպարեզը քեզ մնա: Ես գնում եմ Հնդկաստան, ո՞վ իմանա, կվերադառնա՞մ, թե՞ ոչ: Ինձնից հետո քո լինելության խնդիրն է»:

110 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածը չկա:

111 Քալաթ (کابل), քաղաք Պակիստանում՝ համանուն մարզի կենտրոնը (29.027204, 66.579552):

112 Քիրքուք (کركوك), քաղաք Իրաքում՝ համանուն նահանգի կենտրոնը (35.470012, 44.394705):

113 Ղազնևի (غزنوی), քաղաք Աֆղանստանում՝ համանուն նահանգի կենտրոնը (33.556856, 68.423197):

114 Ղազնևիների պետության տիրակալ (998-1030) Մահմուդ Ղազնևիի դամբարանը գտնվում է Ղազնևի քաղաքի բերդից 1 կմ արևելք (33.557548, 68.438054):

115 Քաբուլ (کابل), Աֆղանստանի մայրաքաղաքն է (34.539791, 69.162307):

116 Բանկից (կանեփից) պատրաստվող թմրեցուցիչ խմիչք:

117 Ջալալաբադ (جلال آباد), քաղաք Աֆղանստանում՝ Նանգար-հար գավառի կենտրոնը (34.423002, 70.446723):

Եթե հարցնես, թե որդուն ի՞նչ գործ հանձնեց, ապա նրան բեյլերբեյի¹¹⁸ վալի¹¹⁹ նշանակեց, որ 30 հազար զինվորով նահանգները շրջի, կարգ ու կանոն հաստատի, գործը սա էր (40): Մտածում ենք, որ գաղտնի պատվիրել է, որ Շահ Թահմազին սպանի, քանի որ հիշաչար մարդ էր¹²⁰:

Քանդահարի վրա հարձակման ժամանակ, քանի որ նրանք քաղաքով շատ դժվար զինվորներ էին սպանել, դի էր պահել: 25 հազար մարդ տարավ **Քանդահարից**՝ ամեն մեկին ամսական 20-ական դուրոշ տալով: Այս **Քալխի** բերդերը գրավելու ժամանակ ամեն մի պատերազմում քանդահարցիներին առջևից ուղարկեց, մյուսներին հետևում ստուգող նշանակեց: Երես թեքողին սպանել տվեց և այսպես բոլորին ոչնչացրեց:

Մի **քանդահարցու** հարցրի, նա ասաց. «Թահմազի հետ **Հնդկաստանից** Իրան վերադառնալու ժամանակ 25000 հազար մեր զինվորներից քարը տրաքի 3000-ն էինք մնացել»:

Որ երկիրը գրավում էր, այնտեղ իրեն ենթակա մի կառավարիչ էր դնում և հեռանում, այդպիսով՝ ամեն երկրից պաշար էր ստանում:

Որդին ելավ, ճանապարհ ընկավ դեպի Իրան, իսկ Թահմազուլուն զինվորների հետ գնաց **Ջալալաբադ**: **Ջալալաբադ** ասածը ըմբոստ մի տեղ էր: Տարբեր խաբեություններով **Ջալալաբադը** գրավեց և այդ խանին բռնեց, դազանի մեջ եռացրեց, իսկ քաղաքի¹²¹ (41) ամբողջ բնակիչներին արի քաշեց, մինչև իսկ՝ շներին ու կատուներին: Այդ ամբողջ նահանգը հրկիզեց: Այնպես քանդեց, որ կարծես ոչ մի նահանգ այստեղ երբեք էլ չէր եղել: Այնպես արեց, որ տեղում ոչ մի բան հայտնի չէր: Տեսնողները զարմանում էին՝ արդյո՞ք այստեղ էր **Ջալալաբադը**:

Բայց ձեզ զարմանալի մի բան պատմեմ, մոռացել էի ասել: Այս **Քաբուլ** քաղաքում 16 թնդանոթ կար, որ Լենկթեմուրն էր ձուլել տվել: Այնքան գեղեցիկ էին, համաչափ, որ նման գեղեցկություն գոյություն չունեին, ամբողջ մակերեսները՝ ռուսի¹²² գրիչով փորագրված: Թվում է, թե նոր է ձուլվել: Մաքուր բրոնզից էին, յուրաքանչյուրի երկարությունը 15-16 արշին¹²³ էր: Մենք ամեն օր գնում էինք դիտելու: **Քաբուլի** զինվորները շատ են ցանկացել այս թնդանոթներից մեկը բարձրացնել բերդ և Թահմազի զինվորների վրա կրակել, բայց չեն կարողացել:



Նադիր շահի որդու՝ բեյլերբեյ նշանակելու արարողությունը Դնդկաստան մեկնելու նախօրեին (նկ.՝ ԺԸ դ.)

Թահմազուլուն ցանկացավ դրանք Իրան տանել, բայց չկարողանալով՝ ճարահատյալ բոլորը տեղում կտոր-կտոր արեց: Քանի որ շարունակելու էր առաջ գնալ, վախից շատ փոքր թնդանոթ ձուլել տվեց. հանկարծ այդ զարմանալի թնդանոթներով իր գլխին մի խնդիր չբացեց:

Եվ այս **Ջալալաբադ** քաղաքը հիմնահատակ (42) քանդելուց հետո գնաց **Խալբեթի լեռնանցք**¹²⁴, որի մի ծայրից մյուսը գնալը 24 ժամ է տևում: Լեռնանցքի մյուս ծայրում **Փեշավարի**¹²⁵ Նասըր¹²⁶ անունով խանն իր զինվորներով սպասում էր:

Գանք Թահմազուլուի որդուն, որը վալի և բեյլերբեյ եղավ և շարժվեց դեպի Իրան: Հասավ, իր իշխանությունը հաստատեց և Շահ Թահմազին սպանեց:

Պատմեն ձեզ, որ երբ Թահմազը **Հնդկաստանից** Իրան վերադարձավ, ես էլ գրություն վերցրի և շարժ-

118 Իշխանաց իշխան:

119 Վատահված անձ, փոխանորդ:

120 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածը մի քիչ այլ ձևով է ներկայացված: Տե՛ս Գահմասգուլու խանըն թեվարիքի, էջ 85-86 և **Խորխորունի Մ.**, նշվ. հոդվ., էջ 127:

121 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածի «Դազանի մեջ եռացրեց» մասը չկա, իսկ Մատենադարանի օրինակում, ի տարբերություն այս և Վենետիկի օրինակների, նշվում է, որ խանին չի կարողացել բռնել:

122 Ոճավորված բարդ զարդանախշի տեսակ՝ բաղկացած ծիլերից, տերևներից և կենդանական մոտիվներից:

123 Մեկ արշինը 690 սմ է:

124 Լեռնային կարևոր անցում Պակիստանի համանուն շրջանում՝ Աֆղանստանի սահմանին (34.098296, 71.156634): Ընդհանուր երկարությունը Ջամրուդից մինչև Լանդի Կոտալ 40 կմ է, լեռնանցքի ավելի փոքր հատվածը ձգվում է 13 կմ դեպի արևմուտք՝ մինչև Աֆղանստանի Լոյա Դակո քաղաք: Լայնությունը՝ 15-130 մ, զագաթնակետը՝ ծ. մ.՝ 1028 մ:

125 Փեշավար (پشاور). քաղաք Պակիստանում՝ համանուն նահանգի կենտրոնը (33.992483, 71.551311):

126 Խոսքը Մեծ մողոլների կայսրության Փեշավարի նահանգապետ Նավաբ Նասիր խանի մասին է:

վեցի դեպի **Ռում**: Հասա **Սեբգևար** քաղաք, որտեղ Շահ Թահմազին բանտարկել էր, բայց սպանելը չգիտեի: Մի քանի օր մնացի այնտեղ: Միրզա Ալի անունով մեկի հետ բարեկամացա, երկար գրուցեցինք և ծանոթացանք: Ես էլ տեղեկացա Շահ Թահմազի սպանության մասին: *Ասաց. «Եղբայր Հարութին, չէի սպի, բայց տեսնում եմ՝ դու Օսմանյան պետության հայերից ես: Գաղտնիք պահում ես, ասում եմ, որ իմանաս՝ ինչ վատ բան է եղել»*¹²⁷:

Այդ ժամանակ, որ մենք լեռնանցքում էինք, Թահմազի որդին եկավ, **Սեբգևար** քաղաքից 5 ժամ հեռու կանգնեց, բանակը տեղավորեց և հազարապետներից մեկին ասաց.

– Գնա՛, Շահ Թահմազի որդուն և կնոջը հարեմում սպանիր: Նրան էլ առավոտ կանուխ (43) հանիր և մեկերկու ժամ ճանապարհ բերելով՝ այնտեղ սպանիր:

Հազարապետը պատասխանում է.

– Ես Շահ Թահմազի հացն ուտելով եմ մեծացել, ես նրան պարտական եմ, ինձ վրա իրավունք ունի: Ընդունելի չէ, որ այդպիսի բան անեմ, բայց ընդունելի է, եթե դու ինձ սպանես հանուն նրան: Ինձ սպանե՛ք, սպանե՛ք, միայն այդպիսի գործ մի՛ հանձնարարեք: Ձեր հորը՝ շահին լսելով՝ հո չեմ սպանելու: Եթե նույնիսկ ինձ սպանես, ես մահը կնախընտրեմ, քան նման մարդու վրա սուր բարձրացնեմ:

– Ա՛յ անպատիվ, հրամանս չե՞ս կատարում: *Դա-հիճ բերեք*¹²⁸, – արտենդեց Թահմազուլուի որդին:

Այս հազարապետն ընդհանրապես չնվնձաց, և *խեղճը կանգնեց դահճի դիմաց: Հետո մոտը կանգնածները խնդրեցին, և հազարապետին չսպանեց*¹²⁹: Հետո **Խորասանի** քրդերից մի հազարապետի կանչեց, նույն հրամանը նրան էլ փոխանցեց: Այդ քուրդն էլ հանձն առավ.

– Իմ խա՛ն, ես կսպանեմ:

Այս քուրդ հազարապետը մի քանի մարդկանցով մտավ Շահ Թահմազի հարեմը: Վշտալի Շահ Թահմազը լսեց գլխի գալիքը: Այս քուրդն առանց խղճմտանքի սպանելու նպատակով նախ բռնեց Շահ Թահմազի որդուն:

– Գիտեմ, որ ինձ և կնոջս (44) սպանելու ես, սակայն այս 12 տարեկան որդուս խնայիր և մի՛ սպանիր: Տա՛ր քեզ գերի, ծառա և սպասավոր, կարող է մի օր սա ձեզ համար շատ պետք գա, – պաղատելով ասաց Շահ Թահմազը:

Շատ խնդրեց Թահմազը, բայց անհավատ և անողորմ քուրդ հազարապետը նրան չլսեց: Որդին էլ այնպես էր աղաչում և *պաղատում, որ հոր և մոր սիրտը կտոր-կտոր էր լինում: Որդու պաղատանքը*

*լսելով՝ մարդ ինքն իրեն նրանց տեղը կոներ և խրնդրանքը կկատարեր, նույնիսկ քարից արցունք կհոսեր*¹³⁰:

Այս անիրավ քուրդը Շահ Թահմազի աչքի առաջ որդու գլուխը կտրեց: Կինն էլ 5-10 օրից ծննդաբերելու էր, նրա փորն էլ պատռեց: Շահ Թահմազին էլ **Սեբգևարից** մեկ-երկու ժամ հեռու հանեց և վիզը կտրեց: Սա *լացելով*¹³¹ մեզ պատմեց ընկերս՝ **սաբգևարցի** Միրզա Ալին: Ահա այսպես է կատարվել Շահ Թահմազի սպանությունը:

Հիմա անցնենք նրան, որ Թահմազուլուն վերցրեց զինվորներին և հասավ լեռնանցք: Բանակը շարեց լեռնանցքի սկիզբը, իսկ մյուս ծայրին Նասր խանը սպասում էր: Թահմազուլուն (45) մտածում էր, թե ի՞նչ խաբեությամբ կարող էր անցնել: Քանի որ լեռնանցքի միջով կա՛մ մեկ ձիավոր, կա՛մ հիմար կկարողանան անցնել, ավելին չի անցնում: *Եթե ուզում ես Հնդկաստանից գալ, ապա այդ լեռնանցքով պետք է անցնես, այլ տեղ չկա: Այս լեռնանցք ասվածն ամբողջությամբ զառիթափ ժայռեր են, լեռն էլ ո՛չ ծայր ունի, ո՛չ էլ վերջ*¹³²: Այդ միջոցին մի լրտես եկավ և ասաց.

– Իմ շա՛հ, ձեզ անցնելու մի ճանապարհ կա, բայց շատ զառիթափ է:

– Որտե՞ղ է դուրս գալիս, – հարցրեց Թահմազը:

– Նասր խանի սպասած տեղից մեկուկես կամ երկու ժամ հեռու՝ մյուս կողմում:

– Շա՞տ է զառիթափ:

– Իմ շա՛հ, հետիոտն մարդ կզնա, բայց ձիով անկարելի է գնալ:

Այդ ժամանակ Թահմազուլուն ձիերին չարխաներ հագցրեց, ցորեն բովել տվեց, ձիերի ուտելիքը վերցնելով՝ զիջելով այդ զառիթափ տեղով անցավ՝ մեծ ջանքեր թափելով: Առավոտյան երկուսուկես ժամ էր մնացել, դուրս եկավ դաշտ՝ **Փեշավարի** խանի սպասած վայրի հետևում:

Փեշավարի խանը և զինվորները լեռնանցքում քնած էին: Խանի մտքով չէր էլ անցնում, որ Թահմազուլուն այս լեռնանցքից անվնաս (46) կանցնի: Հանգիստ քնել են: Ընդհանրապես չէին մտածում, որ Թահմազուլուն այդ նեղ տեղով կանցնի: Թահմազուլուն իր հետ տարած բոլոր զինվորներին գզու-շացրեց.

– Օրն այս օր է, ժամն այս ժամն է, եթե պարտվենք, ոչ մեկս չի փրկվելու:

Եվ աղոթելով հեծան ձիերը, իսկ Նասր խանն ու զինվորները, այս բոլորից անտեղյակ, քնած են լեռնանցքում: Թահմազուլուն հասավ նրանց քնած տեղը և **Հնդկաստանի** բոլոր զինվորներին սպանեց: **Փեշավարի** Նասր խանն էլ վիրավորվեց: Թահմազուլուն 3 բլուր գանգ դիզել տվեց: *Լեռ-*

127 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածը մի քիչ այլ ձևով է ներկայացված, ինչպես նաև ունի հավելյալ տեղեկություններ, որ Միրզա Ալին դժբաղ էր, որ դժբաղ երկրի մահմեդականները և հայերը ծայրաստիճան բանասերկու էին:

128 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է. «Բավական ես»:

129 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածը չկա:

130 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածը չկա:

131 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է. «լացելով և գաղտնի»:

132 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածը չկա:

մանցքը բանալով՝ լուր ուղարկեց բանակին, նրանք էլ այդ լեռնանցքով անցան և եկան: Լեռնանցքի այս կողմում բանակը շարեց¹³³: Երեք օր այնտեղ մնաց: Հետո Թահմազդուլուն դիվան կազմեց և բերել տալով Նասր խանին՝ ասաց.

– Ով խա՛ն, լեռնանցքը լա՞վ բացեցի:

– Ո՛չ, իմ շահ, արիությանը և քաջությանը չեկար, – պատասխանեց խանը:

– Դիշտ ասացիր, խա՛ն (47), բայց սա այնպիսի մի լեռնանցք է, որ մի անգամ մեծ Ալին է գրավել: Բայց առանց խաբեության կտրիճություն չի լինում:

Խանին հյուրասիրեց, վիրաբույժ նշանակեց, քանի որ վիրավորվել էր: Երեք օրից խանը լավացավ: Մուշտակ հագցնելով՝ Թահմազդուլուն նրան նորից Փեշավար քաղաքի խան նշանակեց:

Եթեկ¹³⁴ գետի մոտ մարդ նշանակեց, կամուրջներ կապել տվեց, որի վրայով անցանք: Ապա ամեն մի քաղաք, որտեղ հասնում էինք, հնազանդվում էին: Ներսում մարդ դնելով՝ անցնում էր, բայց այդ քաղաքների անունները չեմ հիշում: Հասանք Գեյ-հուն¹³⁵ գետի մոտ, որը հոսում է դեպի Քաշմիր¹³⁶: Մեծ ջուր էր, լայնքը եթե ասես, ապա Բահչե դոնի¹³⁷ մինչև Գալաթա¹³⁸ կլինեք, սակայն Քաշմիրից մի քանի օր հեռու կամուրջներ, նավակներ և նավեր պատրաստել տվեց, մենք այդպես անցանք:

Մենք, Լահոր¹³⁹ չհասած, մեր առաջապահ Հաջի խանն առաջ է գնում: Այդ ժամանակ Բահադուր խանն¹⁴⁰ արագ ֆերման ուղարկեց, թե՛ թշնամին գալիս է, եկեք, քաղաք մտեք, հանկարծ ձեզ մի վատ բան չլինի: Այդ ֆերմանը բոլորը լսեցին և մտան քաղաք: Ով բանի տեղ չդրեց, Հաջի խանը հասավ նրանց: Դիմադրեցին, սա էլ մի մասին սպանեց: Հետո Թահմազդուլուն մի լրտես (48) ասաց.

– Ուշադիր եղիր, իմ շահ, սրան Բահադուր խան են ասում: 80 հազար ձիավորով իջնում է ու հեծնում, քանի որ սա Հնդկաստանում ուժեղ խան է, հռչակ ունի:

133 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածը մի քիչ այլ ձևով է ներկայացված, մաև ունի հավելյալ տեղեկություններ. «Ես՝ Թամբուրի փոքր Հարությունն էլ, այդ բանակի հետն էի: Հասանք կիրճի մեջտեղը և քնեցինք: Ինչպես վերևում հիշել էի, կիրճի մեկ ծայրից մյուսը 24 ժամվա ճանապարհ է, մի օրում չէինք կարող անցնել: Հետևյալ օրը՝ երեկոյան, դուրս եկանք կիրճից, տեսանք՝ ջարդել, կոտրել, երեք բլուր գանգ են հավաքել»: Տե՛ս Դահմազդուլու խանըն թեվարիքի, էջ 27-28 և Խորխորունի Մ., նշվ. հոդվ., էջ 108:

134 Հավանաբար Ինդոս գետն է:

135 Հավանաբար Ջիելում կամ Ջիելամ գետն է:

136 Քաշմիր. երկրամաս, այժմ հատվածաբար Հնդկաստանի և Պակիստանի կազմում է:

137 Կ.Պոլսի պարսիկ դարպասներից մեկը (41.015027, 28.972622), որը բացվում է դեպի Ոսկեդշյուր ծոց:

138 Թաղամաս Կ.Պոլսում (41.021997, 28.975797):

139 Լահոր (لاهور). քաղաք Պակիստանում՝ Փենջաբ գավառի կենտրոնը (31.587565, 74.314423):

140 Խոսքը Մեծ մողոլների կայսրության Լահորի կառավարիչ Ջաքարիա Խան Բահադուրի (կառավարել է 1726-1745) մասին է:

– Աստված ողորմած է, կա՛ն նրան կտա, կա՛ն մեզ:

Հասանք և ամբողջ Լահորի դեմ վրամներ խփելով՝ նստեցինք: Նրանք էլ բերդի դարպասը փակել, ներսում են նստել: Երեք օր հետո Բահադուր խանը մի քանի պատգամավոր ուղարկեց Թահմազդուլուն, թե վաղը ցանկանում է հանդիպել նրա հետ: Թահմազդուլուն համաձայն էր: Հաջորդ օրն ասացին, որ Բահադուր խանը 80000 ձիավորով գալիս է:

– Մի՛ խանգարեք, թող գա, – ասաց Թահմազդուլուն:

Բահչե դոնից մինչև Սամաթիա¹⁴¹ հեռավորության վրա գործը թողեց, իսկ ինքը երեք ձիավորով առաջացավ: Մի փամփուշտի հեռավորության վրա ձիուց իջավ, այդ երեք ձիավորներին էլ այնտեղ թողեց, հետիոտն թեմեննա¹⁴² անելով՝ եկավ հանդիպման:

– Ով խա՛ն, քո մասին հայտնեցին, թե կտրիճ և քաջ մարդ է (49), պատերազմող, գործն էլ՝ շատ: Ինչո՞ւ չպատերազմեցիր, – հարցրեց Թահմազդուլուն:

– Դիշտ ես ասում, շահս, – ասաց Բահադուր խանը, – սակայն չպատերազմելու պատճառը հետևյալն է: Մենք երեք երիտասարդ եղբայր ենք, մեր հայրն¹⁴³ էլ խան էր, շատ գիտուն և բանիմաց մարդ: Միշտ մեզ խրատում էր և ասում. «Որդիներս, Իրանի կողմից մի քաջ պիտի երևան գա: Եթե այդ ժամանակ ես մահացած լինեմ, իսկ դուք՝ ողջ, այդ քաջը ձեր ժամանակ երևան գա, իսկ դուք նրան դիմադրեք, ապա շատ կվնասվեք: Եթե հյուրասիրեք նրան, ապա նա էլ ձեզ շատ կհյուրասիրի, կհարգի ու կպատվի»: Մեր հայրը միշտ խոսում էր այս մասին: Հիմա, մեր շահ, երբ Դուք երևան եկաք, ես մտածեցի՝ արդյոք մեր հոր խրատին հետևե՞նք: Վերջիվերջո ես եզրակացրի, որ հոր խրատը լսողը չի գոյա, հոր խրատը լսելը լավ է: Որոշեցի չպատերազմել:

– Աստված կամեցավ, Աստված լուսավորի ձեր հոր հոգին, (50) իմաստուն մարդ է եղել: Ձեր հոր ասած մարդը ես եմ, – ասաց Թահմազդուլուն, ապա խալաթ¹⁴⁴ հագցրեց և շարունակեց: – Քեզանից ո՛չ նվեր եմ ուզում, ո՛չ էլ քո ունեցվածքից մի բանի կարիք ունեմ, ես շարունակելու եմ առաջ գնալ, դու միայն մարդ և պաշար ինձ հասցրո՛ւ:

– Իմ շահ, գլխիս վրա, ունեցվածքս և կյանքս դնում եմ հանուն քեզ, – պատասխանեց Բահադուր խանը:

Եվ Թահմազդուլուն մունետիկ կանչել տվեց իր գործըն՝ վա՛յ նրան, ով, Լահոր մտնելով, մի դրամի թալան կանի, բայց կարող են բանակից գնալ և Լահորում առևտուր անել:

141 Թաղամաս Կ.Պոլսում (40.999785, 28.931031):

142 Ողջույնի ձև է՝ առաջ խոնարհվելով, ապա ուղղվելով և ձեռքը գլխին դնելով:

143 Խոսքը Մեծ մողոլների կայսրության Լահորի (1713-1726) և Մուլթանի (1726-1737) կառավարիչ Աբդ ալ-Սամադ Խան ալ-Անսարու մասին է:

144 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է. «պալափուշ»:

Ես՝ Հարություն, երբ շրջում էի շուկայում, տեսա՝ **Լահորի** և շահի մարդկանց միջև վիճաբանություն էր սրամարտով: Այդ մասին լուրը հասավ շահին: Նա կարգապահներին ուղարկեց, նրանք էլ մոտ 400 հոգու բռնեցին, բերեցին շահի մոտ: Շահը հրամայեց, որ անմեղներին բաց թողնեն, իսկ բոլոր մեղավորներին սպանեն: *Մոտ 100 մարդու (51) վիզը կտրում են*¹⁴⁵, դրանից հետո բանակում կարգ ու կանոն է հաստատվում:

Ահա այսպես Բահադուր խանը մի զարմանալի բան ասաց՝ ճիշտ կամ սուտ, որի շնորհիվ ոչ մեկի քիթը չարյունելով՝ խաղաղություն տիրեց քաղաքին, իսկ **Լահորի** խանությունը նորից իրեն տրվեց:

Դրանից հետո Թահմազդուլուն սկսեց դեպի խորքն առաջանալ: Մի լրտես եկավ և ասաց.

– Իմ շահ, ամբողջ գործով **Ջհանաբադի**¹⁴⁶ դուրս եկավ:

Թահմազդուլուն հասավ **Սիրիհնդ**¹⁴⁷, մի քանի քաղաք ևս հասանք, անունները չգիտեմ: **Սիրիհնդը** տվեցին: Անցանք, և Թահմազդուլուն հասավ Մուհամմեդ շահին¹⁴⁸: Մուհամմեդ շահը եկել էր 6-7 օր հեռու մի տեղ, այնտեղ պատնեշներ կապել, թնդանոթներ տեղադրել, խրամատներ փորել, դիտակետեր և աշտարակներ կառուցել: Թահմազդուլուն էլ, ամբողջ բանակով շրջապատյալ կատարելով, հետևից դուրս եկավ դիմացը: Օրինակ՝ Մուհամմեդ շահը, պատնեշներ դնելով, ասենք թե մատած լինի **Կ.Պոլսում**, իսկ **Ջհանաբադը** իբր **Էդիրնեն**¹⁴⁹ լինի: Ասենք թե Թահմազդուլուն գալիս է **Իզմիրից**¹⁵⁰ (52) տպավորություն թողնելով, որ **Սկյուտար**¹⁵¹ կհասնի և այստեղ դեմ դիմաց կպատերազմի, սակայն նա գործով գալիս է **Իզմիրից** և **Ադալարի**¹⁵² առջևով դիրքավորվում **Քյուչուքչեքմեչենում**¹⁵³:

Տպավորություն է ստեղծվում, թե Թահմազդուլուն ինքն է **Ջհանաբադի**ց դուրս եկել, իսկ Մուհամմեդ շահը՝ այլ երկրից, քանի որ նա իր գահից ավելի հեռու էր: Հիմա կհարցնես, թե ինչպե՞ս Թահմազդուլուն շրջանցելով հայտնվեց Մուհամմեդ շահի հետևի հատվածում: Կասեմ՝ **Հնդկաստանն** էլ *այստեղի մնամ*¹⁵⁴ է. մի կողմում **Միջերկրական** ծովն է, իսկ

մյուս կողմում՝ **Սև** ծովը: Այնպիսի մի հարթ դաշտավայր է, որտեղ *երկինքը*¹⁵⁵ պնակի կափարիչի մման կպել է գետնին: Սա էլ կողքանց անցավ նրանց թիկունքը, նրանք մեզ են տեսնում, մենք էլ՝ նրանց:

Մուհամմեդ շահը նախատեսում էր մեզ դիմավորել: Մտածում էր, որ երբ Թահմազդուլուն գործը կտեղավորի, ապա դրանց, կենտրոնում թողնելով, կոչնչացնի: Իրականում այդպես էլ սկսեց, միայն թե Թահմազդուլուն դրան պատրաստվել էր և քաղաքից եկած գործի դեմ կռվելով՝ (53) մի մասին ստիպեց փախչել և Մուհամմեդ շահի դեմ պատերազմեց:

Գանք նրան, թե ինչքա՞ն էր Թահմազդուլուի բանակի բանակը, եթե հարցնեք: Այսպես՝ ռոճիկ ստացողները *68.000*¹⁵⁶ էին, իսկ ամբողջ բանակը՝ 300.000: Մեկ էլ հնարավոր էր դրսից բանակ մտնել, բայց դուրս գալ հնարավոր չէր, մինչև շահի համապատասխան գրությունը չլիներ: Կարող ես հարցնել՝ հնարավոր չէ՞ր փախչել, կասեմ, որ հնարավոր չէր, քանի որ առջևում կան չարքաչները¹⁵⁷, հետևում՝ 3-4 ժամ հեռվում, կան սյուրյուջյուններ¹⁵⁸: Բանակի աջ և ձախ կողմերում նույնպես մման մարդիկ ունի: Եթե նրանց ձեռքն ընկար, հնարավոր չէ՝ չտանեն Թահմազդուլուի մոտ, և պարզ է, թե նա նույն վայրկյանին ինչ է անելու: Բանակում կար 50.000 կին: Սրանցից 10.000-ը պոռնկություն էին անում: Մեկը պոռնիկ է սիրել իր երկրում և հետն է բերել, մի ուրիշը՝ իր կնոջը, մյուսները՝ ջարիյեն¹⁵⁹, անգամ 3 կանանցով մարդ կար: Պետք եղած ժամանակ այդ 50.000 կանանց զինվորների հետևում ձիերի վրա նստեցնելով՝ նոսր շարքերով շարում էր կողք կողքի, իսկ գլխներին կալքակ կամ բյորկ¹⁶⁰ էր հագցնում: Երկար-երկար (54) պատի պես շարում էր՝ թշնամիներին ցույց տալով, թե իբր զինվորներ էին: Մեկ-մեկ մման խաբեություններ էր անում:

Մայրամուտին 4 ժամ էր մնացել, երբ Մուհամմեդ շահի դեմ պատերազմը սկսվեց: Մինչև մթնելը հուժկու պատերազմեցին: Այդ պատերազմի ժամանակ Թահմազդուլուն դեմքն ու աչքերը գետնին էր քսում¹⁶¹, որովհետև շատ հզոր պատերազմ եղավ:

145 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածը չկա:

146 Ջհանաբադ կամ Դելիի՝ Հնդկաստանի մայրաքաղաքը (28.655314, 77.239430):

147 Սիրիհնդ. քաղաք Հնդկաստանում, Փոմոջաք նահանգում (30.635644, 76.396406):

148 Խոսքը Մեծ մոլոլների կայսրության տիրակալ (1719-1748) Միրզա Նասիր ուլ-Դին Մուհամմեդ շահի մասին է:

149 Էդիրնե. քաղաք Թուրքիայում՝ համանուն նահանգի կենտրոնը (41.677659, 26.559592):

150 Իզմիր. քաղաք Թուրքիայում՝ Քոջայեյի նահանգի կենտրոնը (40.770132, 29.953683):

151 Թաղամաս Կ.Պոլսում (41.041658, 29.047618):

152 9 կղզիներից կազմված թաղամաս Կ.Պոլսում (40.871101, 29.092689):

153 Թաղամաս Կ.Պոլսում (41.008592, 28.776071):

154 Ենդագիր հատվածը հաստատում է, որ Թամբուրի Հարություն այն պատմել է Կ.Պոլսում:

155 Ենդագիր բառն ավելացվել է ըստ Մատենադարանի օրինակի:

156 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է. «35.000»:

157 Զինվորներ, որոնց պարտականությունն է թշնամուն շրջափակել: Մատենադարանի օրինակի թարգմանությունը սխալ է, նշված է «չարքաչ»:

158 Զինվորներ, որոնք զբաղվում են լոգիստիկայով և տրանսպորտային գործունեությամբ:

159 Երիտասարդ կին, որին առևանգել են օտար երկրներից, զրկել ազատությունից, և նա լիովին ենթարկվում էր իր տիրոջը:

160 Գլխարկի տեսակներ:

161 Արտահայտությունը փոխաբերական իմաստով նկարագրում է այն մարդուն, ով խորապես զոջում կամ ծայրահեղ տխրում է, ով գործնականում խոնարհվում է գետնին և փորձում շտկել իրավիճակը: Մատենադարանի օրինակի թարգմանությունը սխալ է, իբր «Հողոսվեց դեմքը և քիթը»: Պատերազմը տեղի է ունեցել 1739 թ. փետրվարին Հնդկաստանի Կարնալ քաղաքի մոտակայքում:



Միրզա Նասիր ուղ-Դին Մուհամմեդ շահը (նկ. ԺԸ դ.)

Հնդկաստանի զինվորները լավ դիմացան և շատ դիմադրեցին: Քանի որ երբեք պատերազմ չէին տեսել, ապա անկանխատեսելի էր այս իրողությունը: Ինչ վերաբերում է Թահմազդուլուն և նրա զինվորներին, ապա վիճակը պարզ է, այսքան ժամանակ նրանք, **օսմանցիների, Մոսկվայի** և այլ թշնամիների դեմ մշտապես պատերազմելով, հմտացել էին: Հիմա ապրեն նրանք, որ այսքան դիմացան: Երբ մթնեց, բռնեցին **Հնդկաստանի** հրամանատար Սադեթ խանին¹⁶², և երկու կողմերն էլ հետ քաշվեցին: Նրան բերեցին բանակատեղի: Առավոտյան Սադեթ խանին կանչեց իր մոտ, հարցրեց **Հնդկաստանի** զինվորների, զինամթերքի և պարենի մասին: Սադեթ խանը պատասխանեց.

– Մարդ, զինամթերք և զինվոր շատ ունենք, և ամեն բան էլ մեզ մոտ շատ է:

(55) Թահմազդուլուն համոզվեց, որ եթե մի անգամ էլ պատերազմի, ապա պարտությունն անխուսափելի է: «Այս **Հնդկաստանի** զինվորները, դեռևս պատերազմի փորձ չունենալով, արյան հոտին վարժված չլինելով, միանգամից 4 ժամ սրով կռվեցին: Եթե մի քանի օր վարժվեն, ապա իմ մոտից չեն թողնի», – խորհում է նա: Սկսեց մտածել, թե ինչ խորամանկության դիմի:

162 Խոսքը Սադեթ խան Նիշապուրու (ծն. 1680-մահ. 1739) մասին է: Հնդկաստանում Ավադի թագավորության առաջին կառավարիչն էր (1722-1739):

Կանչելով Սադեթ խանին՝ ասաց.

– Մուհամմեդ շահն իմ եղբայրն է, ես եկել եմ նրան տեսության, հյուր չի՞ ընդունի:

Սադեթ խանը չպատասխանեց:

– Գրի՛ր Մուհամմեդ շահ եղբորս, որ ես նրան տեսության եմ եկել, բարեկամության համար եմ եկել և ոչ թշնամության: Վերջապես ինչպես կուզես, գրի՛ր, միայն թե մեզ իրար դեմ չհանես, – հրամայեց Թահմազդուլուն:

Սադեթ խանն իր շահին ինչ պետք էր, գրեց և ուղարկեց: Մուհամմեդ շահը նամակը կարդաց և պատասխանեց.

– Ենթադրաբար 300.000 զինվոր¹⁶³ ունի, աշխարհում որտե՞ղ է տեսնված այսպիսի հյուր:

Թահմազդուլուն կանչեց Սադեթ խանին և դժվար կացության մեջ դնելով՝ (56) ասաց.

– Տե՛ս, խա՛ն, այս գործը դու հաջողեցրի՛ր, շատ լավ, ապա թե ոչ, ինքդ վերացած համարի՛ր: Ես չեմ եկել հետ գնալու, ես եկել եմ մեռնելու:

Սադեթ խանն էլ ի՛նչ անի, հոգին անուշ է: Ինչ արեց, չարեց, իր իմացած ձևով գրեց: Մուհամմեդ շահին հավատացրեց և լուր ուղարկեց, թե՛ առավոտյան կգամ: Նա Սադեթ խանին վստահում էր և իր վաղեմի խաներից լինելու համար շատ էր սիրում, քանի որ սուտասան չէր, և ամբողջ **Հնդկաստանը** նրան հավատում էր: **Հնդկաստանում** որտեղ **Ռաջպուտների**¹⁶⁴ դեմ պատերազմ էր լինում, նա գնում էր և նրա երեսը պարզ անում: Ահա սրա համար Մուհամմեդ շահը, Սադեթ խանին վստահելով, «կգամ» պատասխանն ուղարկեց: Եվ իր նախարարապետ Գամերդի խանը, Նիզամ ալ-Մուլքը¹⁶⁵, բոլոր նախարարները, կոռնապետները և մեծ ու փոքր իմաստուններն ասացին. «Տե՛ր մեր, ինչո՞ւ եք մեղսրտել, որ վաղը գնալու մասին եք հայտնում: Փառք Աստուծո, շատ մարդ, պարեն և զինվոր ունենք, թե՛ թնդանոթ, թե՛ զինամթերք և զանձեր շատ ունենք: Եթե նույնիսկ զինվորի պակաս եք զգում, բոլորին լո՛ւր ուղարկեք, հրամաններ արձակելով՝ (57) զինվոր հավաքե՛լ տվեք: Եթե այլ թշնամիներ էլ ունենք, լուր ուղարկե՛ք մեր հարևաններին: Ժամանակն է: Բարեկամությունն այսօրվա համար է, նման ժամանակներում մենք ձեզ հետ միասին պատերազմել ենք, հիմա եկեք մեզ օգնության, այս թշնամուն դուրս մղենք մեր տիրության, դրանից հետո նորից մեր բարեկամությունը բարեկամություն կլինի: Այսպես կասենք ու մեր տիրության թշնամուն կհանենք:

163 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է. «200.000 մարդ»:

164 Ցեղախումբ Հնդկաստանի հյուսիսում, ԺԸ դարի սկզբին նրանց նահանգներն ունեին ժամանակավոր անկախություն: Մատենադարանի օրինակում այս բառը չկա:

165 Խոսքը Միր Բամար ուղ-Դին Խան Միդդիքի (ծն. 1671-մահ. 1748) մասին է: Հայտնի է նաև որպես Ասաֆ Ջահ, Նիզամ Ա: Հնդկաստանում Հայդարաբադի Ասաֆ Ջահի դինաստիայի հիմնադիրն է և Հայդարաբադի առաջին նավաբը:

Աստծո հրամանով այդ Թահմազին ուժասպառ կանենք, կթողնի, կգնա»:

Այլա Մուհամմեդ շահը նորից պատասխան ուղարկեց Թահմազուլուին. «Ես քո ոտքը չեմ գա, քո դեմ պատերազմելու եմ, ժամանակին պատրաստ եղիր»:

Թահմազուլուին նորից կանչեց Սադեթ խանին և նեղանալով հանդիմանեց.

– Հենց վաղը սկսելու եմ պատերազմել: Առաջինը քեզ եմ գլխատելու և նոր միայն պատերազմի գնամ:

Եվ վնդեց: Սադեթ խանը համոզվեց, որ մեռնելու է, խաբեց Մուհամմեդ շահին և սիրտը շահելով բերել տվեց նրան: Թահմազուլուին էլ մեկ այլ օթաղ¹⁶⁶ կանգնեցրեց: Մի ծունկը՝ ներքևում, մյուսը՝ վերևում, մեջքով հենված նստած էր: (58) Երբ ասացին՝ Մուհամմեդ շահը գալիս է, ուզեց տեսնել՝ ձիո՞ւմ է գալիս, թե՞ տախտրվանով¹⁶⁷: Բայց նա գալիս էր ոչ ձիով, ոչ տախտրվանով, ոչ էլ հետիոտն, այլ, ինչպես այստեղ¹⁶⁸ է լինում, ազնվականների կամ պաշտոնյաների մակույկների մամ, որոնք հիմնականում 7 գույգ են լինում, հետևի կողմում՝ սադաֆով զարդարված շրջանակով նստատեղով: Այդպիսի մի բան էր նրա գահը: Պատրաստված էր մի քանի փայտից, շուրջը, ինչպես ասացի, 4 մատ լայնքով և նուրբ սադաֆագործությամբ շրջանակ էր կապված, և ներսում նստած էր: Սպիտակ հագած 6-ական մարդ, հետևից և առջևից ուսերին դրած, տանում է, կարծես դագաղ են տանում: Իսկ ինքը նստած մի ձեռքում նարգիլե¹⁶⁹ է բռնել, իսկ մյուսում՝ մարփիչ¹⁷⁰: Եկավ, ներքև իջավ, 5-10 քայլ արեց և գոչեց.

– Ով շահ:

Թահմազուլուին օթաղից ցատկեց, հասավ նրան: Երկուսն իրար փաթաթվեցին, համբուրվեցին և ձեռք ձեռքի բռնեցին: Թահմազուլուին իր օթաղ ուղեկցեց, և սկսեցին (59) գրուցել: Հետո ուտելիք մատուցեցին, ճաշեցին: Երբ արդեն լավ քեֆ արեցին, Մուհամմեդ շահն ասաց.

– Գնամ բանակատեղիս:

– Հատուկ ձեզ համար օթաղ ենք կանգնեցրել, – ասաց Թահմազուլուին:

– Ո՛չ, չի լինի, որ բանակատեղիս չգնամ:

Թահմազուլուին թողեց, որ գնա: Հաջորդ օրը Մուհամմեդ շահից լուր եկավ. «Պատերազմ ունեմ»: Ըստ երևույթին, նրա նախարարապետն ու նախարարները համաձայնության չեն եկել:

Թահմազուլուին նորից կանչեց Սադեթ խանին ասաց.

– Երեկ շահը մեզ մոտ էր: Եթե մեր սրտում կեղծիք, թշնամանք կամ խաբեություն լիներ, երեկ կգործադրեինք: Ասել ենք, որ բարեկամության և տեսության ենք եկել: Գրի՛ր Մուհամմեդ շահին, թող գա, մի քանի խոսք ունեմ նրան ասելու, ապա թողնեմ, այստեղից հեռանամ:

Սադեթ խանը գրեց և նորից բերել տվեց շահին: Դրանից հետո Թահմազուլուին էլ բաց չթողեց Մուհամմեդ շահին.

– Եղբայր, 6-7 օր քեզ հետ այստեղ կզվարճանանք և կգրուցենք: Հետո ես իմ (60) տիրույթը կգնամ, դու էլ՝ քոնը, և նորից մեր բարեկամությունը կմնա բարեկամություն: Բանակիդ գրություն գրի՛ր, որ ամեն մեկն իր տեղը գնա, և թողանթներն ու զինամթերքը թող հավաքեն:

Մուհամմեդ շահը մի քանի հարյուր մարդկանցով մնաց Թահմազուլուի բանակում: 6-7 օր զվարճանալուց հետո Թահմազուլուին ասաց.

– Եղբայր, քանի որ մինչև այստեղ եմ հասել, անանց **Ջհանաբադը** տեսնելու վայել չէ՝ գնամ:

Մուհամմեդ շահն էլ, ինչ անի, պատասխանեց.

– Համեցի՛ր, միասին գնանք, եղբայր:

– Մի՛ վախեցիր, իմ բանակի պաշարն ու մթերքը շատ են, քո քաղաքից ոչինչ չեմ ուզի:

Նրանք, ամեն մեկը մի ձի նստած, միասին ճանապարհ ելան դեպի **Ջհանաբադ**: Երրորդ օրը Թահմազուլուին Մուհամմեդ շահին ասաց.

– Մի գրություն գրի՛ր, որ մեզ համար տեղ պատրաստեն:

Նա էլ գրեց, որ իր պալատի մի հատվածն ազատեն, քանի որ Թահմազուլուին մի քանի օր հյուր է լինելու: Չորրորդ օրը Թահմազուլուին Մուհամմեդ շահին ասաց. (61)

– Այսպես բացահայտ մտնել չի լինի, գիշերով կմտնենք: **Ջհանաբադ** մտնելիս դու տախտրվանի մեջ նստի՛ր, չորս կողմն էլ ծածկի՛ր, որովհետև ժողովուրդը երես կառնի, հետո քեզ չի հարգի:

Մուհամմեդ շահը դյուրահավատ մարդ էր, հավատաց: Միայն նա չէ, այլ գրեթե բոլոր **հնդկաստանցիք** միամիտ են: Ինչպես որ ասել էր, այդպես էլ արեց: Մենք էլ միասին էինք: Գիշերը **Ջհանաբադ** մտնելուն պես Մուհամմեդ շահին բանտարկեց, գանձերը հափշտակեց, վաճառականներին թալանեց, ամբողջ քաղաքը արբաբ¹⁷¹ արեց: Կանչեց Սադեթ խանին և ասաց.

– Դավաճան պաշտոնյա, Մուհամմեդ շահի հացը կերար, խալաթը հագար և այսքան ժամանակ նրա իշխանության ներքո առաջնորդ եղար: Դու մի ափ արյունից վախեցար, սակայն եթե մեռնեիր հանուն քո տիրոջ, նա էլ մշտապես քեզ ողորմի կասեր: Տիրակալի՛ դավաճան, հիմա իմ առաջն ես, քեզ սպանելով ունեցվածքդ կգրավեմ, երեք որդիներդ էլ թշվառության մեջ կմնան: Կորի՛ր, դիմացս մի՛ կանգնիր:

¹⁶⁶ Վրան:

¹⁶⁷ Առանց անիվների տրանսպորտային միջոց, որն օգտագործվում է մարդկանց տեղափոխելու համար: Դրվում է մարդկանց ուսերին, իսկ երբեմն քարշ են տալիս ուղտերով, փղերով և ձիերով:

¹⁶⁸ Նկատի ունի Կ.Պոլիսը:

¹⁶⁹ Կոկլակ:

¹⁷⁰ Կոկլակի ձող:

¹⁷¹ Ծառա:

Սադեթ (62) խանն այս խոսքերը լսելուց հետո ինքնասպան եղավ: Մարդ ուղարկեց, ունեցվածքը գրավեցին և բերեցին: Այս Սադեթ խանն ապրելիս է եղել **Դեկանում**¹⁷², բնիկ իրանցի էր՝ **Իրանի Նիշապուր**¹⁷³ նահանգից: Թե՛ **Դեկանում**, թե՛ **Բենգալիայում**¹⁷⁴ տուն-տեղ է ունեցել:

Մի քանի օր հետո Մուհամմեդ շահի պալատի դռան դրսի կողմում Թահմազդուլուն բանակի շուկան սարքված էր: Դեմ դիմաց երկու շարք վրաններ էին կանգնեցվել, նրանց մեջտեղի հատվածը փողոցի էր նմանվել: Բանակի շուկայի պահպանության համար նշանակել էր 1000 ջազայիրճի¹⁷⁵, որոնք *9 տրամանոց*¹⁷⁶ փամփուշտ արծակող¹⁷⁷ էին:

Այստեղ կան էջնաս կոչվող մի խումբ մարդիկ, որոնք **Ջհանաբադում** ո՛չ տուն ունեն, ո՛չ տեղ, *բայց այդ նահանգից են*¹⁷⁸: Ինչ երկարացնենք, այս էջնասից 4-5 հարյուր թափթփուկներ խորհրդակցում են իրար հետ. «Մեզնից որոշ մասը՝ 5 տարի, մյուսներս 10 տարի այստեղ քարշ ենք գալիս, իսկ Թահմազդուլուն նահանգը գրավեց: Եկեք հարձակվենք սրա *բանակի վրա*¹⁷⁹, նրան նեղացնենք: Նա էլ կխփի: Մենք, այս առիթից օգտվելով, մի քիչ կթալանենք և մեր նահանգը կգնանք: (63) Այստեղ ինչքա՞ն անկողին պետք է մաշեցնենք, մի՞թե կարելի է»:՝

Մեկ էլ տեսնում ենք, երեկոյան՝ էգանի¹⁸⁰ ժամանակ, այս էջնասները հարձակվում են բանակի շուկայի վրա: Թահմազդուլուն տեղեկանում է, սակայն նրան չեն ասում, որ էջնասներն են հարձակվել: Ասում են, որ քաղաքաբնակներն են թալանելու նպատակով բանակի վրա հարձակվել:

– 1000 ջազայիրճի ևս թող գնա: Մինչև առավոտ փորձե՛ք կանգնեցնել, ապա թե ոչ, ես գիտեմ իմ անելիքը,– ասաց նա:

Էջնասները չկանգնեցին: Առավոտյան՝ էգանի ժամին, Թահմազդուլուն դուրս եկավ պալատից, կանգնեց բանակի շուկայի դիմաց և ցասկոտ հայացքով հրամայեց.

– Կրակի՛ տվեք և թալանե՛ք քաղաքը:

Չինվորները տարածվեցին քաղաքում, թալանեցին և կրակի տվեցին քաղաքը, երեխա, կին և աղջիկ գերի վերցրին:

Մի քանի օր անց քաղաքացիներից մի երևելի վաճառական՝ գիտակ, բարեգործ, ամուսնացած, տնով-տեղով, և մոտ 100 հոգի խորհրդակցեցին.

– Հնարավոր է՝ Թահմազդուլուն կարծում է, որ այս մեղքը մենք ենք գործել, գնանք և տեղեկացնենք: (64)

– Ա՛յ մարդ, նա անողոք, անհավատ մարդ է, եթե հիմա գնանք, մեզ էլ կսպանի,– ասացին ոմանք:

– Եթե սպանում է, թող սպանի: Մեր պատիվը, երեխաները, ունեցվածքը, գույքը գնալուց հետո մենք ինչո՞ւ ենք մնում: Դրանից հետո մի՞թե ապրելու ենք,– շարունակեցին մյուսները:

Այսպես համաձայնության եկան և Թահմազդուլունի հայտնեցին իրողությունը:

– Ա՛յ սրիկաներ, թե որ խիզախ էիք, ինչո՞ւ դրսում չկռվեցիք,– զայրացած ասաց նա:

– Մեր շահ, այս գործն անողները բոլորը էջնասներն էին և խուժանները:

Թահմազդուլուն մտածեց, որ բանակի շուկայի վրա հարձակվելն իսկապես քաղաքացիների գործը չէր կարող լինել: «Ի՛նչ անիմաստ գործ արեցի»,– ասելով լաց եղավ: Մունետիկ կանչել տվեց. «Վա՛յ նրան, ով 3 օրվա ընթացքում իր վերցրած գերուն չի ազատում, 3 օր հետո, ում մոտ որ գերի գտնեմ, նրան սպանելու եմ»:

*Կարգապահներ նշանակեց բանակի ներսում: Գերիները և ծանր ապրանքները կուտակեցին: Այդպես իմացիր, որ այդ հզոր քաղաքի գերիները կուտակելուց հետո 4 գերի չգտնվեց: Կարգապահների գլխավորին ասացին, հասան և հայտնեցին շահին (65): Այդ ժամանակ հրամայեց, և 4-ին էլ գտան, իսկ գերիներին թաքցրածների գլուխները կտրեց: Սակայն արծաթից, ոսկուց, գոհարներից և մարգարտից փաստեր չգտնվեցին, ամենավատ տանողը 1000 թումանի թալան արեց*¹⁸¹:

Դրանից հետո Թահմազդուլուն Մուհամմեդ շահին բանտից հանեց և հավաքույթ կազմակերպեց: Միասին նստեցին, ճաշեցին: Որպեսզի բոլորը տեսնեն այդ պալատի կենտրոնում գորգեր փռեցին ու նստեցին: Ինչքան կատակերգու, սազ նվագող, աճպարար, դերասան, ծաղրածու, կրկնօրինակող, հաճոյախոս, զուռնա և դիոլ նվագող կար, բոլորին մի տեղում խաղացրեց:

172 Մարահարթ Հնդկաստանում, որի խոշոր քաղաքներից է Հայդարաբադը (17.361065, 78.474881):

173 Նիշապուր կամ Նորշապուր (نیشابور), քաղաք Իրանի Իսլամական Հանրապետության Ռազավի Խորասան նահանգում (36.218217, 58.779450): Քաղաքի անվանումն այս ձեռագրում նշված է Մուշապուր, իսկ մյուս երկու օրինակներում՝ Նիշապուր:

174 Երկրամաս Գանգես և Բրահմապուտրա գետերի ստորին հոսանքի ավազանում: Այժմ հատվածաբար Հնդկաստանի և Բանգլադեշի կազմում է:

175 Պարեկ:

176 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է. «90»: 1 տրամը 1,77 գրամ է:

177 Մատենադարանի օրինակում կա նաև հավելյալ տեղեկություն՝ գնեթի տեսակը. «Ֆիթիլի թիֆենը (թարգ. պատրույգով հրացանից)»:

178 Մատենադարանի օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է. «Էճնազը Ջհանաբադից չեն»:

179 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է. «Գանակի շուկայի վրա»:

180 Մահմեդական աղոթքի հրավեր:

181 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածը չկա: Դրա փոխարեն նշված է. «Ես՝ Թամբուրի փոքր Հայությունս, երեք օր հետո՝ երեկոյան, բանակի շուկայում էի: Երբ ուզում էի պալատի դռնից ներս մտնել, տեսա կանանց, երեխաների, աղջիկների, որոնց վրա միայն մեկական վարտիք կար, գլուխները ծեծելով, լաց ու կոծով դուրս էին գալիս: Մոտ 1000 հոգի կլինեին: Ես այնտեղ՝ դռների արանքում, սառած մնացի»: Տես Դահմասգուլու խանընթեքի վերջի, էջ 48 և **Խորխորունի Մ.**, նշվ. հոդվ., էջ 114-115 (բնօրինակում, էջ 44բ):

Այդ հավաքավայրի դիմաց հիմնականում **Աճեմի** շահերը Բայրամի¹⁸² ժամանակ և Նովրուզի ամսին կազմակերպում էին մաման հանդեսներ, որոնք կոչվել են Շեյալիլանթեր: Սա այնպիսի մի բան է, որ ոչ ոք մյուսի ձայնը չի լսում: Այնպիսի աղմուկ է լինում, որ ոչ մեկը մյուսին չի հասկանում: Այսպիսի խառնիխուռն մի բան է սա:

Մենք էլ այդ (66) Շեյալիլանթերի շրջանակներում սազ էինք նվագում, բայց նվագախմբի ձայնի պատճառով իրար չէինք հասկանում. մի՞թե հնարավոր էր սազ նվագել: Մեր կատարած մեղեդին չէինք հասկանում, ուր մնաց թե գործընկերների նվագածները հասկանայինք: Այնքան որ մեր ձեռքը գնում, գալիս էր, իբր միգրաբ¹⁸³ ենք խփում, բայց անիրական: Մինչդեռ դիտում էինք Թահմազդուլուն հավաքատեղիի ուղղությամբ, որտեղ Մուհամմեդ շահի հետ գրուցում էր: Ի՞նչ գրուցեցին, չլսեցի, միայն թե տեսա, որ գրույցի ընթացքում Թահմազդուլուն Մուհամմեդ շահի ցցունքը գլխից հանեց և կողքը դրեց՝ գետնի վրա: Որոշ ժամանակ անց նորից վերցրեց և Մուհամմեդ շահի գլխին դրեց: Այս բոլորը տեսանք, իսկապես մեր աչքերից էլ արտասուք հոսեց: Հետո տեսա, որ երկուսն էլ ոտքի ելան, ձեռքերը բարձրացնելով՝ աղոթեցին, գրկախառնվելով համբուրվեցին: Այնքանը լսեցի, որ Թահմազդուլուն Մուհամմեդ շահի աղջկան իր որդու համար է ուզել, և խնամի են դարձել¹⁸⁴: Այս հավաքույթից (67) հետո ևս 3-4 օր խնջույք արեց և դուրս եկավ:

Ջհանաբադի ներսում և դրսում ընդհանուր 90 օր խնջույք արեցինք: Երբ ճանապարհի ընկանք, Մուհամմեդ շահը 2-3 օր Թահմազդուլունի հետ ողջերթի եկավ: Այդտեղ իրար հրաժեշտ տվեցին, Մուհամմեդ շահը վերադարձավ **Ջհանաբադ**, իսկ Թահմազդուլուն ճանապարհվեց դեպի **Սինդ**¹⁸⁵: **Սինդը** մեր թեքված տեղից այնքան հեռու է, որքան **Էրզրումը Ստամբուլից**¹⁸⁶:

Սա էլ իմացեք, որ *Լահորից մի սուրհանդակ էր ուղարկել*¹⁸⁷՝ ասելով, որ ամսիջապես մոտոս թող գա:

Նա էլ սուրհանդակին ասել է. «Դու էլ, քո շահն էլ դալաթ եք արել: Նախ թող **Հնդկաստանը** գրավի, հետո ինձ հրաման տա: Թահմազդուլուն ինչացո՞ւ է, որ ես նրա ոտքը գնամ»:

Սուրհանդակն էլ, ինչպես լսել էր, եկավ և նույնությամբ հաղորդեց: **Հնդկաստանից** դուրս գալու ժամանակ նորից սուրհանդակ ուղարկեց: Երբ նորից չեկավ, քաշեց բանակը դեպի **Սինդ**: Սակայն ասվեց, որ ճանապարհը բավականին դժվարանցանելի է, խիտ անտառապատ, շոգ է և երկար: **Սինդի** խանը¹⁸⁸ համոզվեց, որ Թահմազդուլուն պիտի գա, հասնի, որովհետև գնացող-եկողների մաման գիշեր-ցերեկ ճանապարհի չէր կտրում և ճանապարհից գլուխ էր հանում: Ապա **Սինդի** խանն իր քաղաքացիներին կանչեց և ասաց.

– Մենք ցանկանում էինք և հույս ունեինք, որ Թահմազդուլուն (68) ճանապարհը չի գտնի, ճանապարհին ինքն էլ, զինվորներն էլ կմահանան¹⁸⁹: Սակայն մեր մտածածի պես չեղավ, որովհետև եկավ և հասավ: Հիմա շտապ մի բան ձեռնարկենք:

– Մեր խան, ելքը դու կգտնես, – ասացին նրանք:

– Բոլորդ ձեր տներն այրեք, ձեր հարստությունից ինչ կարող եք, վերցրեք, ինչ չեք կարող, թաղեք հողի տակ այնպես, որ Թահմազդուլուն երբ գա, բան չգտնի տանելու: Հետո ես բոլորիդ տները կկառուցեմ և վնասները կհատուցեմ:

Նրանք էլ այրեցին իրենց տներն ու քաղաքը¹⁹⁰, ինչ կարող էին, տարան, ինչը ոչ, թաղեցին և փախան ամառանոց, որը 6-7 օր հեռու էր: Ամռանը քաղաքը թողնում և գնում են այնտեղ, որն իրենց հարակից ծովի¹⁹¹ եզրին գտնվող ամառանոցն է: Բոլորն այնտեղ ամառանոց, ծովեզրին՝ դղյակ ունեն:

*Եվ ինչպես որ Սինդի ճանապարհը պատված է խիտ անտառներով, ապա դրանցից հետո ավելի վատ է. այդ ճանապարհին այծի ուլը կամ մեկ, կամ երկու քայլ կկարողանա անել, կամ էլ՝ ոչ մի քայլ: Ճանապարհի չարչարանքների մասին այսպես իմացիր, որ դրամով մահ էինք ցանկանում, սակայն մեզ սպանող կտրիճ չկար*¹⁹²:

182 Մահմեդականների գետնի:

183 Մատին անցկացվող նվագելու հարմարանք:

184 Մյուս երկու օրինակում կա նաև հետևյալ հավելյալ տեղեկությունը. «Չեմ տեսել, լսել եմ: Հարսանիք, բան չեղավ, որ մենք էլ իմանայինք: Ոմանք ասում էին՝ Մուհամմեդ շահի աղջիկն է, ոմանք թե՛ ուրիշի աղջիկն է: Է՛հ, դա էլ թող պակաս մնա, թող չիմանանք»:

185 Նահանգ Պակիստանի հարավարևելյան հատվածում: Հարավից սահմանակից է Արաբական ծովին:

186 Մյուս երկու օրինակում կա նաև հետևյալ հավելյալ տեղեկությունը. «Թե որտեղից թեքվեցինք դեպի Սինդ, դժվարանում եմ ճիշտ ասել, որովհետև անունները խրթին էին, և մտքումս չեմ մնացել: Այնքանը միայն գիտեմ, որ Լահորն անցել էինք, մանավանդ որ Լահորի Բահադուր խանին խալաթ հագցրեց, իսկ նա Թահմազդուլուն նվերներ տվեց: Եվ մի քանի օր զվարճացանք, Բահադուր խանին ինչ-որ պատվերներ տալուց հետո Թահմազդուլուն ճանապարհ ընկավ»:

187 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է. «Մինչև Ջհանաբադ գնալը Սինդի խանին մի սուրհանդակ էր ուղարկել»:

188 Խոսքը Միան Նուր Մուհամմեդ Խան Կալիֆորյի (ծն. 1698-մահ. 1755) մասին է: Մեծ մողոլների կայսրության Սինդի նահանգապետն էր (1719-1737), այնուհետև ստեղծելով ինքնիշխան պետություն՝ դարձավ Սինդի առաջին նավար՝ Մեծ մողոլների պետության կայսր: Մուհամմեդ շահը նրան շնորհում է Նավար Խուդա-Յար Խան տիտղոսը:

189 Մյուս երկու օրինակում կա նաև հավելյալ տեղեկություն. «Եվ նրա ամբողջ ունեցվածքը մեզ պիտի մնա»:

190 Խոսքը մայրաքաղաք Խուդաբադի (خدا آباد) մասին է (26.647016, 67.740305), որը պատկանում էր Միան Նուր Մուհամմեդ Խան Կալիֆորյին:

191 Խոսքը Արաբական ծովի մասին է:

192 Մատենադարանի օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է. «Իսկապես որ այս Սինդի ճանապարհներն այնպիսի դժվարանցանելի և զախավեժ են, որ այծի ուլը հազիվ մեկ կամ երկու քայլ կկարողանա անել կամ էլ ոչ մի քայլ: Թո՛ղ անտառի միջով անցնող ճանապարհների մասին խոսելը: Դժիշտ ասած, ես շատ էի ետ ընկնում և ասում՝ թող սպանեն, միայն թե այս ճանապարհներից ազատվեմ: Բայց ժամանակն այնպիսին էր, որ գայլն ու գառը միասին էին ման գալիս, ո՞վ էր ուզում մարդ սպանել»:

Այս Սինդ քաղաքը, որն այրեցին, այս ճանապարհի տաքությունից ավելի էր շոգ լինում, այնպես որ եթե հուլիս ամսում խմորը, (69) լավաշի պես բանալով, արևին դնես, հնարավոր է՝ եփվի:

Այսպես, նրանք որ շոգին այդքան սովոր են, չդիմանալով տարվա 4 օրերից մեկը¹⁹³ այդ հարակից ծովեզրի դղյակներում են անցկացնում:

Այս Սինդում մի հոր փորեցինք, կենսատու ջուր դուրս եկավ, բայց պետք է հորի գլխին կանգնել և խմել. եթե մոտավորապես 5 րոպե անցավ, ապա հնարավոր չէ՝ բերանոց մոտեցնես, քանի որ լեշի հոտ է գալիս¹⁹⁴: Այնպես տհաճ, շոգ մի տեղ է: Մի գլխաշոր ունեի, մերկանում էի, ջրից հանում, առանց քամելու փաթաթում էի գլխիս և նարգիլե էի պատրաստում: Սինչև պատրաստ լինելը գլխաշորը չորանում էր: Նորից էի ջրի մեջ թաթախում և վրաս առնում, ապա նայում էի, նարգիլեի կրակը հանգել է: Նարգիլեն նորից էի պատրաստում, բայց նորից գլխաշորը չփչոր էր, գլուխս պտտվում էր: Միշտ այս վիճակում էինք, ավելին ի՞նչ ասեմ, այս երկու հաճույքը միասին չկարողացանք անել: Սա էլ այսպիսի նահանգ է:

Գանք նրան, որ Թահմազդուլուն եկավ և տեսավ, որ քաղաքն այրել են և փախել: Որոնեց և այդտեղ մի մարդ գտավ, հարցրեց.

– Իմ շահ, 6 օր եղավ, որ դրանք փախել են: (70)

Ինչ երկարացնենք, լուրն առնելուն պես, վստահելով իր բազմաթիվ ձիերին, զինվորներին վերցնելով և շունչ չբաշելով, ընկավ սրանց հետևից: Նրանք առավոտ հասան արտաքին ծովեզրի քաղաքը, Թահմազդուլուն երեկոյան արդեն նրանց պաշարեց: Այդ ծովեզրին մեծ բերդ կար, որտեղ մենք բանակի հետ միասին եկանք: Մենք բանակատեղիում էինք, Թահմազդուլուն մոտ 10.000 ձիավորներով գնաց, հարձակվեց նրանց վրա: Ինչևէ, մեկ օրում գրավեց, բայց պահակ էր նշանակել, որևէ մեկի քիթը չարյունեց¹⁹⁵: Սինդի խանին երեք¹⁹⁶ որդիներով բռնեց, բայց ամբողջ այդ քաղաքի մարդկանց, ըստ նրանց վիճակի, արքաք արձակեց¹⁹⁷: Բռնեց խանին և բերեց: Անունը չիմացա, բայց անձամբ տեսա, շուրթերը և ձեռքերը բազուկներից ավելի պեպենոտ էին, նա աֆղան էր:

Թեև Սինդ քաղաքը Հնդկաստանի տիրակալի ենթակայության տակ էր, սակայն այս խանը Հնդկաստանի շահին չէր ենթարկվում: Հետո Թահմազդուլուն այս խանին ճնշեց, ամբողջ ունեցվածքը վերցրեց, նաև՝ գետնի տակ ինչքան արծաթ կար: Վերևում սենյակն այրվում էր, տեղը էին ցույց տալիս: Կրակի տակից հանեցին, բոլորը՝ սևացած¹⁹⁸:

193 Այսինքն՝ տարվա 3 ամիսները:

194 Մատենադարանի օրինակում շեղագիր հատվածը չկա:

195 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածը չկա:

196 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածը չկա:

197 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածը չկա:

198 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է. «Թահմազդուլուն ստիպեց Սինդի խանին, որ վերջինս խոստովանի, թե իր ունեցվածքը, կարողությունը ուր է

Թահմազդուլուն (71) տվեց իր ոսկերչապետին, որ սպիտակեցնի¹⁹⁹: Եվ 3 որդիներին պատանդ վերցնելով՝ տարավ Իրան:

Սինդ քաղաքում կարգ ու կանոն հաստատելուց հետո այդ շրջանի բոլոր քաղաքներից նվերներ վերցրեց²⁰⁰: Ապա այնտեղից, որտեղից որ շեղվել էր, որ մենք ասացինք նախապես, գնաց, այնտեղ վերադառնալով՝ դեպի Իրան ճամփա բռնեց²⁰¹:

Այստեղ մի բան պատմեմ Թահմազդից, որը մոռացել էի: Երբ Ջհանաբադից 7 օր հեռացել էր, և Սինդը դեռ հեռվում էր²⁰², բանակում մունետիկ կանչել տվեց. «Ովքեր Ջհանաբադի խառնաշփոթից մի բան են վերցրել, թող բերեն, տան, իրենց պատվավոր մադկանցից կհամարեն»:

Երբ ոչ մեկի պետքը չեղավ, դու մի ասի, առանց կաշկանդվելու, իր գործն արեց: Երբ Ճեյիուն գետը հասանք, կանանց՝ կին, տղամարդկանց՝ տղամարդ խուզարկուներ նշանակեց, կամուրջ պատրաստեց և մինչև անգամ նրանց ինտիմ հատվածները խուզարկել տվեց²⁰³: Ում մոտ որ բան գտավ, սպանեց: Իսկ մեծամասնությունը թալանածը ջուրն էր գցում: Լուրը հայտնեցին շահին, թե մահվան վախից բոլորը ջուրը նետեցին, իսկ նա ասաց. «Թող գցեն, միայն թե չհարստանան, հետո չեն մնա»²⁰⁴: (72)

Եվ շատ զանձեր նետեցին այդ Ճեյիուն գետը: Մեկի ձեռքին կար մի վեներտիկյան սնդուկ՝ լիքը մարգարիտներով, որի ամեն մի հատիկը սիսեռից մեծ էր: Սնդուկը բաց արեց և նետեց ջրի մեջ: Այս Թահմազդուլուն շատ նախանձ մարդ էր, այնքան նախանձ, որ ոչ ոքի հարստանալը չէր ցանկանում: Եվ ինչքան սազ մվագող կայինք, ոչ մեկիս թույլ չէր տալիս, որ մեկի վրանում սազ մվագեինք:

Հնդկաստանից վերադառնալիս լսել էինք, որ Ջհանաբադի շահի զանձարանից 3 գահ է վերցրել՝ մեկը՝ փիրուզից, մեկը՝ հասպիսից, իսկ մյուսը թան-

թաքցրել: Սինդի խանը խոստովանեց, որ հողի տակ է թաղել: Մարդկանց ներգրավեցին, հողի տակից հանեցին և՛ արծաթեղենը, և՛ ոսկեղենը, որոնք հորեհից սևացել էին»:

199 Մյուս երկու օրինակում կա նաև հավելյալ տեղեկություն. «Խանին նորից Սինդի խան կարգեց»:

200 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածը չկա:

201 Մատենադարանի օրինակում շեղագիր հատվածը մի քիչ այլ ձևով է ներկայացված. «Դեպի Իրան վերադարձի ճամփան բռնեց այն ճանապարհով, որով գնացել էինք. այսինքն՝ Լահորից մի քանի օր այն կողմ՝ մեր թեքված կետով: Թահմազդուլուն Իրան էր վերադառնում՝ իր նպատակին»:

202 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածը մի քիչ այլ ձևով է ներկայացված: Այսպես՝ «Վեներտիկի օրինակում» «Սինդ չգնացած, Ջհանաբադի թոհուրեհից և Ջհանաբադից 5-6 օր հեռանալուց հետո», իսկ Մատենադարանի օրինակում՝ «Սինչև Սինդ գնալը՝ Ջհանաբադի թոհուրեհից հետո, հենց Ջհանաբադը անցանք, 5-6 օր բանակում մունետիկ կանչել տվեց»:

203 Մատենադարանի օրինակում նշվում է միայն կանանց ինտիմ հատվածների խուզարկման մասին:

204 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է. «Ջինվորը պետք է հարուստ չլինի»:

կարծեք քարերով էր, որը կոչվում էր Թահտ Թավուզ²⁰⁵: *Երբ հասավ, ես տեսա դա*²⁰⁶: Ճանապարհին այն էինք տեսնում, որ վարպետներին հավաքել էր, ուր որ բանակը կանգ էր առնում, մարգարիտներով վրան էր գործել տալիս: Մարգարիտներից ամենափոքր հատիկը **Յալովայի**²⁰⁷ սիսեռի չափ էր: Այս տղա վարպետները, գերգեթ²⁰⁸ տեղադրելով, այդ վրանն էին գործում²⁰⁹:

*Եվ ամեն նահանգ, որ գրավեց, այդ նահանգից բազմաթիվ մարդկանց բերեց, ինչպես Մինդիգ բերել էր և իր մարդկանց պահակ նշանակեց*²¹⁰:

Երբ Թահմազդուլուն **Հնդկաստան** էր գնում, (73) ամեն մի ռազմական կարևոր տեղում իր մարդկանցից էր նշանակում, քանի որ ավելի էր խորանում, թիկունքից չէր թողելու՝ ճանապարհը կտրելին: **Լառոքի** խանն իր ոտքով եկել էր և հպատակություն հայտնել, սակայն այնտեղ էլ մարդ նշանակեց²¹¹:

Ասացին, որ **Քանդահարում** Թահտ Թավուզ է կանգնեցնելու, չկանգնեցրեց, **Ֆերահում** չկանգնեցրեց, եկավ, **Հերաթում**՝ բերդից դուրս, կանգնեցրեց, նրա կողքին էլ՝ մարգարիտներով վրանը: Մենք էլ, ամբողջ բանակն էլ գնացինք դիտելու: Թահտ Թավուզը ներսից և դրսից միակտոր ոսկուց է՝ թանկարժեք քարերով զարդարված, ներսում 5 մարդ է տեղավորվում: Ծածկն անհեմարան կախովի կամարի նման է: Այդ կամարի վրա ոսկուց սիրամարգ են պատրաստել ու կանգնեցրել, որի փետուրների գույնը գոհարներով են ստացել, *այնպես որ տեսնողը չի կարող տարբերել իսկական սիրամարգից*²¹², այդ իսկ պատճառով այն կոչում են Թահտ Թավուզ: Չողերն ու բոլոր մասերը սեղմիչներով հավաքովի էին: Այնպիսի հարմար մի բան է, որ երբ ուզեն, քանդում են և սնդուկների մեջ տեղավորում (74): Կից կանգնեցված մարգարիտներով վրանի վրա գործվել են մարգարիտ արվեստներ և ֆրանսիական քիարիներ, երկու սյուներն էլ՝ իսկական գոհարներով զարդարված: Վրանի մի պարանը սպիտակ էր, իսկ մյուսը՝ դեղին արծաթաթելերով, ցիցերից մեկը՝ ոսկի, մյուսը՝ արծաթ: Ահա այսպիսի վրան էր անձամբ պատրաստել տվել Թահմազդուլուն:



Մեծ մողոլների կայսրության տիրակալ Շահ Ալամ Բ-ն (1760-1806)՝ նստած իր Թահտ Թավուզում (նկ.՝ ԺԸ դ.)

Այսքանից հետո սա էլ իմացեք, որ **Հնդկաստանից** 70.000 *կուլ*²¹³ տարավ **Իրան**, այնպիսի համաչափ և գեղեցիկ *կուլեր*²¹⁴: հսկա, բարձրահասակ, ծարիր աչքերով, կմճիթները²¹⁵ գետնին են քսվում: Կենդանիները Հնդկաստանում այնքան շատ են, որ 30.000-ը ճանապարհին կոտորվեցին²¹⁶, իսկ 40.000-ը հասան **Իրան**:

Այդ **Հերաթ** քաղաքում էլ մեզ ծառայությունից ազատեց, հրաման-գրություն տվեց, և մենք էլ ճանապարհի ընկանք դեպի **Ստամբուլ**: **Հերաթից Խորասան** եկանք և 3 *օր*²¹⁷ մնացինք: Այստեղ մի մզկիթ կա, որ կոչվում է Իմամ Ռեզա²¹⁸, որի կտուրը կապարի փոխարեն ոսկով է պատված, իսկ առաստաղը ներքուստ մանդալի ցանցի նման շախմատաձև է և ոսկեզօծ: Երբ Թահմազդուլուն շահ է դառնում (75), այսպես պատմեցին, կտուրի և առաստաղի ոսկիները, ինչպես նաև միմարեի ոսկուց ալեմը²¹⁹ հանել է տալիս և մետաղադրամ հատում՝ ասելով.

205 Միրամարգի գահ:

206 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է. «Լսել էինք, բայց չէինք տեսել»:

207 Քաղաք և շրջան Թուրքիայի հյուսիս-արևմուտքում (40.633897, 29.248249):

208 Կտոր գործելու սեղան:

209 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածը մի քիչ այլ ձևով է ներկայացված. «Տղա վարպետներին, կնոջ նման գերգեթ տեղադրելով, վրան էր կարել տալիս»:

210 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածը մի քիչ այլ ձևով է ներկայացված. «Եվ վերադարձին, որտեղ որ իր մարդկանցից պահակ էր նշանակել, նրանց էլ իր հետ բերեց»:

211 Մյուս երկու օրինակում կան նաև հավելյալ տեղեկություններ այն մասին, որ խանի անունը Բահադուր էր, որ նա հպատակություն հայտնեց, բայց չհանձնվեց, ինչպես նաև այն, որ «Մինչև Քանդահար հասնելը վիճակն այս է»:

212 Մատենադարանի օրինակում շեղագիր հատվածը չկա:

213 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է. «կով, գոմեշ և խոշոր եղջերավոր անասուն»:

214 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածը չկա:

215 Մեզ հայտնի չէ, թե ի՞նչ նկատի ունի: Հավանաբար կովի ստիճների մասին է:

216 Մատենադարանի օրինակում շեղագիր հատվածը չկա:

217 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է. «13 օր»:

218 Իմամ Ռեզայի դամբարան (36.287838, 59.615782) համալիրը գտնվում է ԻԻՀ Մաշհադ քաղաքում:

219 Միմարեի գազաթի մետաղը:



Իմամ Ռեզայի դամբարանը (լուս.՝ համացանցից, 2020-ական թթ.)



Զաֆրան իջևանատունը (լուս.՝ Դավիդ Դադարի, 2012 թ.)

«Եթե ոտքս ուղիղ դնեմ, ոչ միայն ոսկով կպատեմ, այլև առջևս սեբիլ»²²⁰ կկառուցեմ»:

Այդպես էլ արել է: Մեքիլն էլ տեսա և հարցրի, թե կտուրը պատվա՞ծ է ոսկով: Ասացին. «Փորձաքարով ստուգելու հնարավորություն չունեինք, հավատացինք, գնաց»²²¹:

Այս **Խորասանի** ժողովուրդը շատ մոլեռանդ էր և խիստ բնավորություն ուներ: Քանի որ ասում են, թե ամեն ինչի հակառակն է հախից գալիս, ապա ձեզ **խորասանցիների** մասին մի բան փոխանցեմ: Այստեղ հնուց ամուսնացած և ընտանիքով հայեր չեն եղել: Թահմազդուլուն երբ շահ է դառնում, նպատակ է դնում **Խորասանում** հայկական մի թաղամաս հիմնել **Սպահանի Զուղայի** մասն: Ամեն գյուղից և քաղաքից *հայեր է պահանջում*²²², որ նրանց տեղափոխի **Խորասան**: Թե՛ քաղաքացիները, թե՛ գյուղացիները խորհրդակցելով որոշում են՝ ինչքան ցանկասեր, հարբեցող, անգործ, անպետք, հարկ չվճարող և մեծի-փոքրի հարգը չիմացող²²³ մարդ կա իրենց շրջակայքում, ուղարկեն, գնան: Այսպես են որոշում և ներկայացնում Թահմազդուլուն (76): Նա էլ բոլորին տանում է **Խորասան**: Տան, հողամասի, այգու և եկեղեցու տեղ է հատկացնում, կառուցելու համար էլ՝ 1000 թուման փող: *Մերն և գոնե է տալիս, որ ջուտ մշակեն*²²⁴: Մի քանի տարուց 1000 թումանն էլ, սերմերն էլ լրիվ ուտում են և ամբողջ օրը շշմամ ու հարբած շրջելով՝ **խորասանցիներին** բռնում են և ծեծում²²⁵:

Նրանք, որ մի ժամանակ ասում էին՝ եթե անհավատի շորն իրենց շորին դիպչեր, շորի այդ հատվածը կկտրեին և այդ Իմամ Ռեզա մզկիթի դիմացից անցնող հային կսպանեին: Հիմա հայերը քայլելով ներխուժում և *մտնում են մզկիթ*²²⁶, բայց Թահմազդուլուի սարսափից ոչ մեկը ոչ մի ձայն չի հանում: Մրանց հանում են դուրս, բայց մատների ծայրով իսկ չեն խփում: Ահավասիկ, իմացեք, որ մենք էլ այսպիսի քաջասիրտ մարդիկ ունենք, այսպիսի իմաստուն և առաքինի մարդիկ մեր ազգից անպակաս լինեն: Կասես՝ ինչո՞ւ: Ծնորիք ումի՞ց սովորեցիր: Անշնորհքից: Այս քաջասիրտ մարդկանց էլ տեսանք **Խորասանում**: Եկեղեցի կառուցելու համար Թահմազի հատկացրած 1000 թումանը կերել էին, քանի որ ես տեսա չորս պատերը՝ առանց ծածկի:

(77) Այս ճանապարհներով, որ գալիս էինք, *երբ Խորասանն անցանք*²²⁷, մի բարեգործի կառուցած իջևանատանը մնացինք: Քանի որ շրջանն ամայի էր, ապա *շատ է ավերվել*²²⁸: Այն կոչում էին **Զաֆրան** խան²²⁹. ամբողջ իջևանում զաֆրան²³⁰ է բուրում: **Քաղըրգա նավամատույցից**²³¹ մեծ է: Ներսում փողոցներ են, և քանի որ դրանք իրար մման են, ապա ներս մտնողը մոլորվում է: Շատ գեղեցիկ և խնամքով է կառուցված: Ասացին՝ հիմա ավագակների գիշերատեղ է, *մենք էլ մի գիշեր մնացինք*²³²: *Եկանք մի քաղաք և մեկից տեղեկացանք Զաֆրան խանի անվան բացատրության մասին*²³³:

220 Մզկիթներին կից քարե կառույց, որտեղ առկա էր խմելու ջուր: Նաև նշանակում է շատրվանով զբոսավայր:

221 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածը մի քիչ այլ ձևով է ներկայացված. «Այդ սեբիլն էլ տեսա, ասացին՝ սրա ծածկն էլ է ոսկի, մենք էլ հավատացինք. հո փորձաքարով ստուգելու հնարավորություն չունեինք»:

222 Մատենադարանի օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է. «Ամուսնացած և ընտանիքի տեր հայ է պահանջել»:

223 Բացի վերոնշյալներից՝ մյուս երկու օրինակում նշված է նաև «եանկազ և հարճավայրիս», որոնց նշանակությունը մեզ հայտնի չէ:

224 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է. «Մերն և լծասայլ է տվել»:

225 Մյուս երկու օրինակում նշված է նաև, որ լծասայլերն էլ կերան, ինչպես նաև, որ հայիոյում էին նրանց և նրանց դավանաբը:

226 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է. «Հարբած մտնում են մզկիթ»:

227 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածը չկա:

228 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է. «Մի քիչ է ավերվել»:

229 Իջևանատուն Սեբգևար քաղաքից 35 կմ արևելք (36.165698, 58.086478):

230 Քրքում:

231 Նավահանգիստ Կ.Պոլսում: Հայտնի է որպես Կոնստանկալիոն, Հովիանոսի, Սոֆիայի նավահանգիստ և Պորտուս Նովուս: Գործել է 6-րդ դարից մինչև օսմանյան շրջանը: Ամբողջությամբ ոչնչացել է 1748 թ. (մոտավոր տեղը՝ 41.004025, 28.969095):

232 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է. «Մենք էլ շատ մեջը չմտանք, իսկույն ճամփա ընկանք»:

233 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է. «Հասնելով մի քաղաք՝ մի աճեմցու հարցրինք այս

Իմաստն ասաց: **Սպահանի** վաճառականների հռչակը նախկինում տարածված էր և՛ **Հնդկաստանում**, և՛ **Սինդում**: Հետո մուլթանցի²³⁴ մի վաճառական **Հնդկաստանում** լսում է, նեղանում, մի քարավան ուղտերով զաֆրան է բեռնում, տալիս է իր ծառային և ասում.

– Սա տա՛ր **Սպահան**, մեկ մարդու մեկ մետաղադրամով վաճառիր:

Ծառան գալիս է **Սպահան**, մի սենյակ է վարձում ու նստում²³⁵: **Սպահանի** վաճառականները գալիս են (78) և ուզում²³⁶: Նա էլ ասում է.

– Ես ամբողջը մեկ մարդու մեկ աքչե մետաղադրամով եմ վաճառում:

Սրանք լսում են և խնդալով հեռանում: Մեկուկես տարի մնում է, հետո աղային լուր է ուղարկում: Աղան էլ ասում է՝ վերցրո՛ւ և **Հնդկաստան** արի՛: Նորից բեռնում է, որ տանի **Հնդկաստան**: Կամաց-կամաց գալիս է և հասնում **Զաֆրան** իջևանատան մոտ: Այս իջևանատուն կառուցող վաճառականն էլ հիմքը փորել էր և շաղախն էր պատրաստում: Վաճառականը հարցնում է.

– Ի՞նչ է բեռը:

– **Զաֆրան**, – պատասխանում է:

– Որտեղի՞ց ես բերում և ո՞ր ես տանում:

– **Հնդկաստանից** եմ բերել, նորից **Հնդկաստան** եմ տանում:

– Ինչո՞ւ չվաճառեցիր:

– Աղաս ասաց՝ տա՛ր **Սպահան** և մեկ մարդու վաճառիր մեկ աքչե մետաղադրամով: Մեկուկես տարի սպասեցի, այդպիսի մի վաճառական չգտա: Լուր ուղարկեցի աղայիս, նա էլ լուր ուղարկեց՝ վերցրո՛ւ զաֆրանը և արի՛: Ես էլ հիմա վերադառնում եմ: Իջևանատուն կառուցող վաճառականը **Սպահանի** պատիվը չի թողնում և ասում է.

– Բո աղան ահա այսքան վաճառական է ...²³⁷

(79-րդ էջը պարունակող թերթը պոկված է):

Զաֆրան խանի անվան մասին, և պատմեց: Իսկ Վենետիկի օրինակում շարունակելով՝ ասվում է. «Հարցնելով ասաց՝ բուրմունքը չզգացի՞ր: Մենք էլ ասացինք՝ զգացինք, բայց չիմացանք՝ ինչպես է եղել»:

234 Մուլթան (ملتان). քաղաք Պակիստանի Փանջաբ նահանգում (30.187119, 71.485577):

235 Մյուս երկու օրինակում շեղագիր հատվածի փոխարեն նշված է. «Մաքսը տալով՝ մտնում է մի իջևանատուն»:

236 Մյուս երկու օրինակում շարունակելով միտքը՝ գրված է. «Վաճառականները գալիս, հարցնում են.

– Սաֆրանը ծախո՞ւ է:

– Այո՛, ծախո է:

– Ի՞նչ ես ուզում պարձանին:

– Լրիվ առնո՞ւ ես, – ասում է ծառան:

– Ամբողջն ի՞նչ եմ անելու, այդքան ուժ չունեմ: Ինչքան կուզեմ, այդքան կառնեմ, – պատասխանում է վաճառականը:

237 Շարունակությունը և ավարտը տրված են մյուս երկու օրինակներում հետևյալ ձևով. «Սակարկում է, կշեռք բերում և հարցնում, թե ինչ տեսակ փող է ուզում: Ծառան պատասխանում է՝ շախի, որը Ստամբուլի փողերի մեծ մի բան է, հազվագյուտ է, չորս հատը մի աքբասի է: Բոլորը կշռում և թափում է իջևանատան

Բնօրինակը

Շահ Թահմազն ասվը նակլըն սզայ, խտարըմքի թարիֆ էտիմ նէ շէքլ օլմասնը, տինլիսագ պիր ազպուչուղ, քի պիզտայ պիր պոյլայ ուքայ վէ ախլի ատամնայ ռաստկելտք քի, քեանտսն Շահ Թահմազն սազանտարլարն պաշիմիշ, հար հանքսի մանլարլարի կիտարքան օտայ օնտան պարապար կեզարմիշ, պիր պէյլայ ալմ ախլիմիշ քի, հէր նէ շէքլի էքմակնի թաման պիստ պիթուն սենայ տաֆտար էքմշ գէհննտայ սախլանմշ, պիզտայ պախտք քի, չօք ըսպաքնան տեար պզտայ եագտք:

